

**Դիլիջան քաղաքի «Շահումյան 17/8, 17/10 և 17/17
հասցեներում «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ
համալիրի կառուցում»**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

/ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

**Ձեռնարկող՝ «Սթոուն Դեվելոփմենթ» ՍՊԸ
Պատվիրատու՝ «Թաղամաս» ՍՊԸ**



Խորհրդատու՝

«ՎԱՆՏ ՔՈՆՍԱՆՏ» ՍՊԸ

**ՇՄԱԳ հաշվետվության կազմման պատասխանատու փորձագետներ՝
տ.գ.թ. Վիկտոր Բախտամյան,
Տիգրան Օգանեզով**

ԵՐԵՎԱՆ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
1.1. Տեղեկատվություն ներկայացվող գործունեության վերաբերյալ	6
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	6
1.3. Ծրագրի դասակարգումը	7
1.4. ՇՄԱԳ հաշվետվությունը, մեթոդաբանությունը և ուսումնասիրության շրջանակը	8
1.5. Նախատեսվող գործունեության նորմատիվ իրավական հիմքը	9
1.6. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին	16
1.7. Ինստիտուցիոնալ շրջանակը	17
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)	21
2.1. Գոյություն ունեցող իրավիճակը	21
2.2. Ծարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ	22
2.3. Զրամատակարարում և ջրահեռացում	52
2.4. Կանաչապատում և բարեկարգում	53
2.5. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	53
2.6. Երթևեկության անվտանգության կազմակերպում	54
2.7. Երթևեկության կառավարման պլան	54
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ	55
3.1. Ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրված տեղամասերի վերաբերյալ	55
3.2. Երկրաբանական պայմանները	56
3.3. Տարածքի ինժեներաերկրաբանական և ջրաերկրաբանական ընդհանուր բնութագիրը	59
3.4. Սեյսմիկ բնութագիր	60
3.5. Զրագրություն	61
3.6. Կլիմայական պայմաններ	63
3.7. Կենսաբազմազանություն	78

3.8.	Օդային և ջրային ավազան	81
3.9.	Սոցիալ-տնտեսական արդի վիճակը	83
3.10.	Բնության հուշարձաններ	86
3.11.	Կենսաբանական հուշարձաններ	87
3.12.	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	88
3.13.	Բնական և մշակութային ժառանգություն	88
4.	ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ	90
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	92
5.1.	Շինարարական աշխատանքների ընթացքում ակնկալվող ազդեցություններ	92
5.1.1.	Օդային ավազանի աղտոտվածություն.....	92
5.1.2.	Ջրօգտագործում և ջրահեռացում.....	108
5.1.3.	Հողային ռեսուրսներ.....	110
5.1.4.	Թափոններ.....	110
5.1.5.	Աղմուկ և թռռումներ.....	111
5.1.6.	Սոցիալական ազդեցություն.....	112
5.1.7.	Գումարային ազդեցություն.....	113
5.1.8.	Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա.....	113
5.1.9.	Մշակութային ժառանգություն.....	113
5.1.10.	Աշխատողների սանիտարական ցածրացում և հիգիենիկ պահանջներ.....	114
5.1.11.	Լանդշաֆտ.....	115
5.1.12.	Բարեկարգում և Կանաչապատում.....	116
5.1.13.	Սոցիալ-տնտեսական հետևանքներ.....	117
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ	118
6.1.	Մթնոլորտային օդ	118
6.2.	Ջրային ռեսուրսներ	120
6.3.	Հողային ռեսուրսներ	120
6.4.	Կենսաբազմազանություն	120

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	120
7.1. Ընդհանուր դրույթներ	120
7.2. Բնապահպանական և սոցիալական միջոցառումներ և Բնապահպանական Կառավարման Պլան	121
7.3. Շինարարության փուլ	122
7.3.1. Օդային ավազան.....	123
7.3.2. Հողային աշխատանքներ.....	123
7.3.3. Աղմուկ և թռթռումներ.....	125
7.3.4. Զրոգտագործման և ջրային համակարգերի վրա ազդեցությունների կառավարում.....	125
7.3.5. Թափոնների կառավարում.....	126
7.3.6. Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունների կառավարում.....	126
7.3.7. Մշակութային ժառանգություն վրա ազդեցությունների կառավարում.....	128
7.3.8. Սոցիալական ազդեցությունների կառավարում.....	128
7.3.9. Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների պահպանություն.....	129
7.3.10. Արտակարգ իրավիճակների արագ հակազդման պլան.....	130
7.3.11. Շահագործման փուլ.....	131
8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	151
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ	153
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ	159
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ	161
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	165
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՆՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ և ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ և ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ	177
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ և ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ	178

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ և ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ-ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	202
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ և ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ	214
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ	219

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեություն	ՀՀ Տաուշի մարզի, ք. Դիլիջան, Շահումյան փողոցի թիվ 17/8, 17/10 և 17/17 հասցեներում նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում
Նպատակը	Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում
Ձեռնարկող	«Սթոուն Դեվելոպմենթ» ՍՊԸ
Պատվիրատու	«Թաղամաս» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Ք. Դիլիջան, Շահումյան 17/20
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հայկազ Դանիելյան Hayk.danielyan@projectevn.com +374-33-22-22-72 +374-44-80-01-50
Կառուցապատվող/բարեկարգվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Տաուշի մարզ, Դիլիջան համայնք, Շահումյան 17/8, 17/10, 17/17

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Տեղեկատվություն ներկայացվող գործունեության վերաբերյալ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության սույն հաշվետվությունը նախատեսված է ՀՀ Տաուշի մարզի, ք. Դիլիջան, Շահումյան փողոցի թիվ 17/8, 17/10 և 17/17 հասցեներում նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր նախագծման շինարարական աշխատանքների և հետագայում շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունների և այլ խնդիրների բացահայտման, ինչպես նաև դրանց համապատասխան մեղմացնող, նվազեցնող և կանխարգելող միջոցառումների ներկայացմանը:

«ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր կառուցման պատվիրատուն հանդիսանում է «Թաղամաս» ՍՊԸ:

ՀՀ Տաուշի մարզի, ք. Դիլիջան, Շահումյան փողոցի թիվ 17/8, 17/10 և 17/17 հասցեներում նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր կառուցման նախագծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրության և ուղեցույցների համաձայն:

Ծրագրի տարածքի բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանները փաստագրվել են նախագծի հետ կապված փաստաթղթերի, այդ թվում՝ նախագծող թիմի կողմից տրամադրված տեղեկատվության, ինչպես նաև քննարկումների, այցելությունների, գրականության ակնարկների և տվյալների հետազոտության միջոցով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը, որը նկարագրում է ծրագրում առաջարկվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները և համապատասխան մեղմացման միջոցառումները, պատրաստվել է «ՎԱՆՏ Քոնսալտ» ՍՊԸ կողմից:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

«ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել

ՀՀ Տաուշի մարզի, ք. Դիլիջան, Շահումյան փողոցի թիվ 17/8, 17/10 և 17/17 հասցեներում: Այն բաղապահ է լինելու բազմաբնակարան շենքերից, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրից և հյուրանոցային համալիրից: Նախատեսվող գործունեության նպատակն է քաղաքային տարածքին հաղորդել նոր որակ՝ քաղաքի առկա առավելությունների շահագործմանը զուգահեռ: Ընդլայնել մատուցվող ծառայությունների կարողությունները՝ ստեղծելով նաև նոր աշխատատեղեր՝ ներգրավել նոր և/կամ պահպանել առկա բնակիչներին, հատկապես տնտեսապես գործունյա և հաջողակ անձանց:

Քաղաքում իրականացվող կառուցապատման հաստատված կարծրատիպերին հակառակ նախագիծը թիրախավորում է ավելի նեղ, բայց և ավելի կայուն խմբերն:

Նախագծի վայրը՝ Շահումյան փողոցն է: Դիտարկելով փողոցի նշանակությունը քաղաքի համար, նախագծումը բխում է հետևյալ քաղաքաշինական ելակետներից.

- Փողոցը քաղաքային տիպի կառուցապատման մեծ մասնաբաժին ունեցող եզակի տարածքներից է:
- Իր գրավչությունը նվազեցնում են շենքերի և հարակից տարածքի անխնամ վիճակի և առօրյա կյանքի համար ենթակառուցվածքի ցածր խտությունը:
- Լինելով քաղաքի գլխավոր փողոցի շարունակությունը՝ այն զրկված է երկրորդ հենակետից՝ ավարտվելով քաղաքի արևելյան ծայրամասի ամայությամբ:

Վերլուծելով քաղաքային լանդշաֆտը՝ մշակվել է և ժամանակակից, և հարգալից մոտեցում նրա նորագույն հավելմանը. որը հնարավորություն է ստեղծում Թաղամասի հնարավորինս միաձուլմանը մշակութային և պատմական համատեքստին և բնական լանդշաֆտին:

Տարածքը սեփականության իրավունքով պատկանում է «Թղամաս» ՍՊ ընկերությանը (Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները ներկայացված է **Հավելված 1-ում**): Տարածքի մակերեսը կազմում է 1.12189 հա: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ 0.23007 հա համար հասարակական կառուցապատման է, 0.3721 հա համար խառը կառուցապատման և 0.51972 հա համար բնակելի կառուցապատման:

1.3. Ծրագրի դասակարգումը

ՀՀ Տաուշի մարզի, ք. Դիլիջան, Շահումյան փողոցի թիվ 17/8, 17/10 և 17/17 հասցեներում նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր կառուցման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվել է ըստ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով / 03.06.2023թ. ՀՕ-150-Ն/, Հոդված 12. Կետ 4., ենթակետ 8) քաղաքաշինության բնագավառում՝

ա. քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով,

բ. քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 15000 քմ և ավելի ընդհանուր կառուցապատման մակերեսով, ներառյալ բոլոր հարկերի, այդ թվում՝ ստորգետնյա հարկերի մակերեսները, բարեկարգման անջրանցիկ տարածքի մակերեսները, համաձայն որի, առաջարկվող նախագիծը դասակարգվում է որպես «Բ» կատեգորիայի:

1.4. ՇՄԱԳ հաշվետվությունը, մեթոդաբանությունը և ուսումնասիրության շրջանակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և հաշվետվությունը պատրաստվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2024թ. հոկտեմբերի «29» N 438-Ն հրաման Հավելված N 2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության պատրաստման ընթացքում իրականացվել են են հետևյալ հիմանական գործողությունները.

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2024թ. հոկտեմբերի «29»-ի N 438-Ն հրաման Հավելված N 2
- Ելակետային տեղեկությունների հավաքագրում ծրագրային տարածքի ֆիզիկական, էկոլոգիական, սոցիալական, պատմա-մշակութային և տնտեսական միջավայրի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն տեխնիկական, սոցիալական և ինստիտուցիոնալ ոլորտների վերաբերյալ:
- Քննարկումներ պատվիրատուի, ինչպես նաև համապատասխան պետական մարմինների հետ:
- Տեղանքի, նախագծի, շինարարության հետ կապված ազդեցությունների, հավանական խնդիրների, մտահոգությունների

բացահայտում և դրանց մեջ առավել զգալի ազդեցությունները տարբերակելու գործունեություն:

- ՇՄԱԳ պատրաստում՝ նշելով ազդեցության ենթարկվող տարածքները, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, ազդեցությունների մոնիտորինգի մեթոդները, պատասխանատու մարմինները/անձանց, ինչպես նաև համապատասխան ծախսերը:
- ՇՄԱԳ-ի իրականացման համար ինստիտուցիոնալ կառուցվածքի առաջարկում:

Ելակետային տվյալները և այլ տեղեկությունները ձեռք են բերվել հրապարակված և չհրապարակված աղբյուրներից՝ ներառյալ կլիմայի, տեղագրության, երկրաբանության և գրունտների, բուսական և կենդանական աշխարհների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և դաշտային հետազոտությունների տվյալները:

1.5. Նախատեսվող գործունեության նորմատիվ իրավական հիմքը

Բնապահպանական խնդիրները ՀՀ քաղաքական գերակայություններ են, որի արդյունքում բնապահպանության բնագավառի հիմնահարցերի կարգավորման համար ձևավորվել է որոշակի օրենսդրական դաշտ՝ ընդունվել են ոլորտի կարգավորման մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր:

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության կանոնակարգող հիմնական օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքն է (ընդունված՝ 03.06.2023թ. ՀՕ-150-Ն):

Ոլորտին առնչվող մյուս օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը ներկայացվում են ստորև.

- ՀՀ հողային օրենսգիրք (2001 թ),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005թ),
- ՀՀ Զրային օրենսգրքի (2002թ.),
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրքը (2011թ.)
- ՀՀ հարկային օրենսգիրք (2016թ.),

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991թ.),
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք» (1994 թ.),
- «Օգոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենք (2006թ.)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.),
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.),
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.),
- «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը (2001թ.),
- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքը (2005թ.)
- «Թափոնների մասին» օրենք (2004թ.),
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005թ.),
- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք (1996թ.),
- «Հողօգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2008թ.),
- «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-N որոշում,
- «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշում,

- «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում,
- «Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N 920-Ն որոշում,
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2024թ. հոկտեմբերի «29»-ի N 438-Ն հրաման Հավելված N 2

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն սույն ՇՄԱԳ հաշվետվությունը պետք է ներկայացվի ՇՄՆ՝ փորձաքննության համապատասխան եզրակացությունը ստանալու նպատակով:

• «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք՝ 03.06.2023թ. ՀՕ-150-Ն

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն՝ գնահատման և շրջակա միջավայրի փորձաքննության ենթակա ոլորտների կողմից առաջարկվող գործողությունները նշանակվում են երկու (Ա, Բ) կատեգորիաներից մեկով՝ ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի նվազեցման: Առաջարկվող գործողություններն առանձնացված են ըստ ոլորտների (էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, դեղագործական արդյունաբերություն, մետաղի արտադրություն և վերամշակում, թափոնների կառավարում, շինանյութերի արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, ենթակառուցվածքներ, ջուր, քաղաքաշինություն, գյուղատնտեսություն և այլն):

Հարկ է նշել նաև, որ սույն օրենքով չնշված բոլոր գործողությունների համար պահանջվում են բնապահպանական փորձաքննություններ, որոնք իրականացվում են հատուկ պահպանվող բնական և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների, հասարակության

օգտագործման համար հատկացված կանաչ տարածքներում:

ՇՄԱԳ մասին օրենքը հիմնականում համապատասխանում է ՇՄԱԳ մոտեցումներին, որին հետևում են միջազգային կոնվենցիաները և զարգացման օժանդակ գործակալությունները: Օրենքը կիրառելի է ճանապարհների կառուցման, վերակառուցման և (կամ) ընդլայնման հետ կապված գործունեության համար, և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ դրական եզրակացություն պետք է ստացվի շրջակա միջավայրի նախարարության «Պետական բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ից՝ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը: ՇՄԱԳ մասին օրենքը նախատեսում է նաև հասարակության ներգրավում և մասնակցություն ՇՄԱԳ-ի բոլոր փուլերում:

- **ՀՀ հողային օրենսգիրք**

«ՀՀ հողային օրենսգիրքը» սահմանում է հողի կիրառման վերաբերյալ հիմնական ցուցումները, որոնք նախատեսված են էներգիայի արտադրության, ջրային տնտեսության (ջրամատակարարում ջրահեռացում, պոմպակայաններ, ջրամբարներ) և այլ նպատակներով: Օրենքը սահմանում է հատուկ պաշտպանվող, ինչպես նաև անտառապատ, ջրածածկ տարածքների և արգելավայրերի պահպանումը: Այն սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև պետական մարմինների, տեղական իշխանությունների և քաղաքացիների՝ հողի նկատմամբ ունեցած իրավունքները:

- **ՀՀ անտառային օրենսգիրք**

Կարգավորում է անտառների և անտառային հողերի կայուն կառավարման, պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- **ՀՀ ջրային օրենսգիրք**

Օրենսգրքի հիմնական նպատակն է սահմանել երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության իրավական հիմքերը, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բավարարել քաղաքացիների և տնտեսական ոլորտների ջրային կարիքները և պահպանել ջրային ռեսուրսները ապագա սերունդների համար: Զրային օրենսգիրքն անդրադառնում է հետևյալ առանցքային հարցերին. պետական մարմինների և հասարակության

պարտականություններ, ջրի ազգային քաղաքականության մշակում, ջրի ազգային ծրագրի մշակում, ջրային կադաստրի և մոնիտորինգի համակարգ, համապատասխան տեղեկատվության հանրային հասանելիություն, ջրօգտագործում և ջրի համակարգի օգտագործման թույլտվության համակարգեր, սահմանային ջրային ռեսուրսների օգտագործում, ջրերի որակի ստանդարտներ, հիդրոտեխնիկական կառույցների շահագործման անվտանգության հարցեր, ջրային ռեսուրսների պետական պաշտպանություն և պետական վերահսկողություն:

- **ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք**

Օրենսգիրքը սահմանում է հանքային ռեսուրսների և ստորգետնյա ջրերի, ներառյալ ստորգետնյա ջրային ռեսուրսների սանիտարական պահպանության գոտիների հիմնական դրույթները:

- **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք**

Օրենքը կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- **«Օզոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենք**

Օրենքով կարգավորվում են օզոնային շերտը քայքայող նյութերի և այդ նյութերին այլընտրանք հանդիսացող ջերմոցային գազերի՝ հիդրոֆտորածխածինների՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրության, ներմուծման, արտահանման և տարանցիկ տեղափոխման նկատմամբ սահմանափակումները և դրանց հետ կապված հարաբերությունները՝ «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում կնքված միջազգային համապատասխան պայմանագրերը վավերացրած երկրների հետ:

- **«Հաստատված մշակութային և պատմական հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք**

Օրենքը տրամադրում է իրավական և քաղաքական հիմքեր Հայաստանում

նման հուշարձանների պահպանության և օգտագործման համար, և կարգավորում է պաշտպանության և օգտագործման գործունեության միջև հարաբերությունները: Օրենքը նկարագրում է հուշարձանների հայտնաբերման և պետական գրանցման, դրանց շրջակայքում պահպանվող գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: Մեկ այլ հոդվածի համաձայն պահանջում է լիազոր մարմնի (Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության) հաստատում, նախքան հուշարձան պարունակող տարածքներում հողամասեր հատկացնելը շինարարության, գյուղատնտեսության և այլ տեսակի գործունեության համար: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն իրավասություն ունի հնագիտական, պատմական և մշակութային վայրերի նկատմամբ: Այնուամենայնիվ, դա առնչություն չունի վթարի զոհերի հիշատակին մասնավոր քաղաքացիների կողմից մայրուղու երկայնքով կանգնեցված ժամանակակից հուշարձանների ճակատագրի հետ: Այդ հուշարձանների տեղափոխումը կհամակարգի համապատասխան մարզային մարմինը:

- **«Թափոնների մասին» ՀՀ օրենք**

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, պահպանման, զարգացման, ծավալների կրճատման, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հարաբերությունները: Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, պետական ստանդարտացման, գույքագրման և վիճակագրական տվյալների ներդրման սկզբունքները, դրանց պահանջների և մեխանիզմների իրականացումը, թափոնների վերամշակման սկզբունքները, պետական մոնիտորինգի համար թափոնների ներկայացման պահանջները, թափոնների քանակի նվազեցմանն ուղղված գործողությունները, ներառյալ բնության օգտագործման վճարները, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից թափոնների օգտագործմամբ մարդու առողջությանը և շրջակա միջավայրին պատճառված վնասների հատուցումը, նաև պետական մոնիտորինգի և իրավական խախտումների պահանջները: Օրենքը սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ որպես իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

- **«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք**

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման և կիրառման խնդիրները և սահմանում է իրավական և տնտեսական հիմքերը, որոնք հիմնված են վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների և հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության վրա: Բնական ռեսուրսների օգտագործումը և շրջակա միջավայրի պաշտպանությունը կարգավորող գործող իրավական դաշտը ներառում է մեծ թվով իրավական փաստաթղթեր: Կառավարության որոշումները բնապահպանական օրենքների իրականացման հիմնական իրավական գործիքներն են:

- **«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք**

Սույն օրենքի նպատակն է սահմանել էկոհամակարգերի կայուն զարգացման, վերականգնման, պահպանման և օգտագործման պետական քաղաքականության, բնական համակարգերի և հատուկ պահպանվող տարածքներում առանձին օբյեկտների բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայի կարգավորման, հանգստի կամ հոգևոր արժեքների իրավական սկզբունքները: Ներկայումս ՀՀ-ում պահպանվող տարածքների քանակը 23 է:

- **«Բուսական աշխարհի մասին» , «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներ**

սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

- **«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք**

Օրենքը կարգավորում է ավտոճանապարհային ցանցի զարգացման և կառավարման տնտեսական, իրավական և կազմակերպչական հիմքերը. Հայաստանի Հանրապետությունում ճանապարհների նախագծում, կառուցում, նորոգում և սպասարկում, դասակարգում և հաշվառում, ինչպես նաև

կարգավորում է այդ գործառույթներն իրականացնող մարմինների և կազմակերպությունների միջև իրավահարաբերությունները:

- **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք**

Օրենքը կարգավորում է ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առաջացող հարաբերությունները, սահմանում է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պետական քաղաքականության սկզբունքները և ուղղությունները, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման իրավական հիմքերը, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման բնագավառի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև ճանապարհային երթևեկության մասնակիցների իրավունքները և պարտականությունները:

- **«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք**

Օրենքի շրջանակներում ծրագիրը պետք է համապատասխանի օրենքով սահմանված հիմնական դրույթներին, մասնավորապես.

- Պատմության հուշարձանների կամ հնագիտական վայրերի տարածքներում ցանկացած շինարարական գործունեություն պետք է իրականացվի իրավասու մարմնի (Մշակույթի նախարարության) համաձայնությամբ:
- Նոր հայտնաբերված տեղավայրերն անմիջապես ստանում են պաշտպանվածության կարգավիճակ և պաշտպանվում են օրենքով մինչև պետական ցանկում ընդգրկվելը:
- Պատմության հուշարձանների և դրանց միջավայրի ոչնչացումն արգելված է: Տարածքում նախքան որևէ գործողության իրականացումն այն պետք է ուսումնասիրվի իրավասու մարմնի կողմից և վերջինիս կողմից տրվեն համապատասխան թույլտվություններ և լուծումներ:

1.6. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին

Ի լրումն բնության պահպանությանն առնչվող վերոնշյալ օրենքների ցանկի և հակիրճ նկարագրությանը, բազմաթիվ ռազմավարությունների, հայեցակարգային փաստաթղթերի և ազգային ծրագրերի Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ: Ստորև բերված ցանկը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված և վավերացված այն կոնվենցիաները և արձանագրությունները, որոնք առնչվում են ծրագրին

Աղյուսակ 1.1: Միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրեր, կոնվենցիաներ, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից

ՀՀ	Փաստաթղթի անվանում	Ռեժիմի մեջ մտնելու ամսաթիվ
1.	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրով թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1993թ
2.	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1993թ
3.	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթագենյա, 2000)	2004թ
4.	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992)	1994թ
5.	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)	2005թ
6.	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (Ժնև, 1979)	1997թ
7.	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանյան համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպու, 1991թ.)	1997թ

8.	«Ռազմավարական Էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2011թ
9.	Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1999թ
10.	Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1999թ
11.	Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)	2004թ
12.	Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա, 2000)	2004թ
13.	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)	1993թ

1.7. Ինստիտուցիոնալ Շրջանակը

• Պատվիրատու

Պատվիրատուն՝ «Թաղամաս» ՍՊԸ, որը պատասխանատու է ծրագրի ընդհանուր իրականացման համար, այդ թվում՝ բնապահպանական կառավարման համար և պետք է ապահովի վերջինիս իրականացումը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն:

• Նախագծող կազմակերպություն

Նախագծողը՝ Սթուրեն Դեվելոփմենթ ՍՊԸ ընկերությունն է, իսկ նախագծի ՇՄԱԳ հաշվետվության պատրաստողը «ՎԱԼՏ Քոնսալտ» ՍՊԸ, որի հիմնական պարտավորությունները ներառում են՝

- պատրաստել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվությունը՝ Բնապահպանական կառավարման համապատասխան պլանի հետ միասին (ԲԿՊ), ինչպես նաև այլ պահանջվող փաստաթղթեր,
- դիմել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ և (եթե անհրաժեշտ է) և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան եզրակացություն ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ,
- ըստ անհրաժեշտության աջակցել պատվիրատուին տեխնիկական

մասնագրերի մշակման գործընթացներում հիմնվելով ԲԿՊ-ում սահմանված մեղմացնող միջոցառումների վրա և ներառել բնապահպանական դրույթները մրցութային և պայմանագրային փաստաթղթերի հատուկ պայմաններում:

• **Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն**

Շինարարության ընթացքում տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության հիմնական առաջադրանքները պետք է ընդգրկեն հետևյալ գործողությունները.

- Իրականացնել ծրագրի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողություն և մոնիտորինգ՝ այդ թվում տվյալ աշխատանքային տեղամասին հատուկ ԲԿՊ-ի պահանջների նկատմամբ,
- ապահովել ծրագրին առնչվող բոլոր աշխատանքների իրականացումը նախագծին և մասնագրերին, ինչպես նաև ԲԿՊ-ի պահանջներին լիարժեք համապատասխանությամբ,
- մոնիտորինգի ենթարկել ծրագրի իրականացումը և ապահովել համապատասխանությունը բնապահպանական բոլոր պահանջներին՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

• **Կապալառու**

Կապալառուի հիմնական պարտավորությունները թվարկված են սակայն սահմանափակված չեն ստորև բերվածով՝

- Կապալառուն պետք է մշակի տեղամասային բնապահպանական կառավարման պլան (ՏԲԿՊ)՝ հիմնվելով սույն ՇՄԱԳ հաշվետվության և ԲԿՊ-ի վրա՝ որպես աշխատանքային շինարարական փաստաթուղթ և անհրաժեշտության դեպքում թարմացնի ՏԲԿՊ-ն,
- շինարարության ընթացքում ընդգրկել բնապահպանության և առողջապահության և անվտանգության մասնագետ/ներ, ինչպես սահմանված կլինի շինարարական աշխատանքների կապալի պայմանագրում, ինչպես նաև վարձել հնագետի ծառայություններ՝ եթե դրա անհրաժեշտությունը կառաջանա,
- ՏԲԿՊ իրականացում՝ որպես կապալի պայմանագրի պահանջների իրականացում,
- արտակարգ իրավիճակների և պատահարների դեպքում անհապաղ ծանուցել Ինժեներին և համապատասխան մարմիններին,

- ըստ անհրաժեշտության համապատասխան մարմիններից թույլտվությունների և հաստատումների ձեռքբերում՝ համաձայն կապալի պայմանագրի,
- ԲԿՊ-ի իրականացման վերաբերյալ հաշվետվություն՝ Պատվիրատուի պահանջով համաձայն կապալի պայմանագրի:

Սույն ծրագրի իրականացմանը կարող են ներգրավվել նաև ստորև նշված պետական մարմինները՝ համապատասխան դերակատարությամբ.

• **ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն**

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) իր կանոնադրության համաձայն պատասխանատու է Հայաստանի բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման, վերականգնման, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի բարելավման համար: Այդ ոլորտներում ՇՄՆ լիազոր մարմինները վերահսկում են ազգային քաղաքականության, շրջակա միջավայրի չափորոշիչների և ուղենիշների զարգացումը և դրանց կիրառումը: ՇՄՆ-ն այս գործառնություններն իրականացնում է իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

ՇՄԱԳ գործընթացը և ԲԸՊՏ-ի՝ ստուգման ենթարկելու իրավասությունն այն հիմնական գործիքներն են, որոնք կիրառվում են ՇՄՆ-ի կողմից՝ շրջակա միջավայրի պահպանության սկզբունքներին համապատասխանությունն ապահովելու համար: Կարևոր կանոնակարգերին համապատասխանելու և ՇՄՆ կողմից դրական գնահատման եզրակացություն ձեռք բերելու նպատակով ՇՄԱԳ-ը պետք է պատրաստվի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և փորձագետի փորձաքննության (03.06.2023թ. ՀՕ-150-Ն/) համաձայն, և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ օրենսդրական դրույթները պետք է համապատասխանաբար հաշվի առնվեն:

ՇՄՆ-ն նաև ՀՀ տարածքում թափոնների կառավարման իրավասու պետական մարմինն է:

«Թափոնների մասին» օրենքի համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը՝ որպես թափոնների կառավարման իրավասու պետական մարմին, լիազորված է իրականացնել հետևյալ պարտականությունները.

- հաստատել թափոնների տեղավորման չափաքանակներ՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար,

- հաստատել տարածքներ թափոնների կառավարման օբյեկտների տեղակայման համար,
- ապահովել թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (վերացում, վարակազերծում, տեղավորում) և վերամշակման ընթացակարգ,
- ապահովել վտանգավոր թափոնների վերամշակման, վարակազերծման, պահեստավորման, տեղափոխման և տեղավորման գործողությունների իրականացման արտոնագրի տրամադրման ընթացակարգ, ինչպես նաև այդ գործողությունների իրականացման իրավունք տալ,

• ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը տարածքային կառավարման և ենթակառուցվածքների կառավարման ոլորտում: Նախարարությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումը:

• ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունը (ԿԳՍՄ) գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում: ԿԳՍՄ-ն իրավասություն ունի հնագիտական, պատմական և մշակութային վայրերի նկատմամբ: ԿԳՍՄ-ին առընթեր պատմամշակութային հուշարձանների պահպանության վարչությունը պատասխանատու է հնագիտական / մշակութային արժեքներ ունեցող հուշարձանների պահպանության, ինչպես նաև հուշարձանների պատմամշակութային անշարժ խմբերի, հուշարձանների համալիրների, բնական և պատմական միջավայրերի, պատմական –մշակութային հողերը և հարակից լանդշաֆտները, որոնք համարվում են պետական սեփականություն:

• ՀՀ առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը պատասխանատու է հետևյալ

գործողությունների համար՝

- համակարգել առողջությանը վերաբերող բոլոր հարցերը (ներառյալ նրանք, որոնք վերաբերում են աղմուկին և թրթռմանը),

- **Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն գործադիր իշխանության մարմին է, որը մշակում և իրականացնում է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

- **ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին**

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի հիման վրա՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության տեսչության և ՀՀ լեռնահանքային տեսչության վերակազմավորման արդյունքում: Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ՀՀ կառավարությանը ենթակա՝ վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող պետական մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության և ընդերքի բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

2.1. Գոյություն ունեցող իրավիճակը

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Տաուշի մարզի, Դիլիջան համայնքի, Շահումյան փողոց 17/8, 17/17 և 17/10 հասցեներում:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան:

«ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը գտնվում են Դիլիջան քաղաքի հյուսիս-արևելյան մասում՝ Շահումյան և Սայաթ-Նովա փողոցների հատումից հյուսիս-արևելք:

Ռելիեֆը ունի թեքություն, հարավ արևմուտքից դեպի հյուսիս արևելք անկումը միջինը 20-23մ է: Տարածքում կան փլատակներ, բնակելի և ոչ բնակելի շինություններ, կոյուղագիծ, հարավ արևելյան մասով անցնում է բարձր լարման

մալուխ:

Հյուսիսից, հարավից և արևմուտքից կառուցապատվող տարածքին կարող են մոտենալ գոյություն ունեցող ոչ այնքան բարվոք վիճակում գտնվող ավտոճանապարհներով:

2.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Բնակելի համալիրի նախագծի առաջարկը նախատեսված է Հ Տաուշի մարզի, ք. Դիլիջան, Շահումյան փողոցի թիվ 17/10; 17/8 և 17/17 հասցեներում նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում:

Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1.12189 հա:

Գոտի 4 –

- Հողակտորի մակերես 5197,20 մ²
- Կառուցապատման մակերես (21,01%) 1091,80 մ²
- Շենքերի ընդհանուր մակերես 4184,70 մ²
- Սալվածքներ և ճանապարհներ (37,11%) 1928,60 մ²
- Կանաչապատման մակերես (41,89%) 2176,85 մ²
- Շենքերի ընդհանուր բնակելի մակերես 2379,90 մ²
- Շենքերի ընդհանուր ավտոկայանատեղիների մակերես 289,80 մ²
- Շենքերի ընդհանուր օգտագործման մակերես 1464,60 մ²

Հողահատկացման մակերեսը կազմում է 5197,20 քմ, որից 41,89%-ը (2176,85 քմ) կազմում է կանաչապատման մակերեսը, 37,1%-ը (1928,60 քմ) կազմում են ճանապարհները և 21,01%-ը (1091,80 քմ) 4 հարկայնությամբ արևմուտքից արևելք համարակալված որպես Բ-1, Բ-2, Բ-3: Կառուցապատվող հատվածում հյուսիսային և հարավային կողմերի նիշերի տարբերությունը կազմում է 3,6 մ, առաջին հարկը կիսով չափ գետնի տակ է:

Դեպի համալիր գլխավոր ազատ փողոցն է թաղամասի ներքինից՝ հողատարածքի հյուսիսային հատվածում: Հարավային կողմը կանաչապատ է, ծառայում է որպես այգի: Բազմաբնակարան շենքերից յուրաքանչյուրը 1-ին հարկում (0.00) ունի և ունի առանձին մուտք աստիճանավանդակով, 8 տեղանոց ավտոկայանատեղի 7 բնակարան՝ 2-4 հարկերում: 1-ին հարկը ծառայում է որպես կաթսայատուն, տեխնիկական տարածքներ և հեծանիվների ու սայլակների պահեստ, իսկ 2-4 հարկերը՝ բնակելի:

Շենքերի տանիքները պետք է իրականացվեն հարթ՝ ջրահեռացման ներքին 2

(աստիճանավանդակից) և արտաքին 4 խողովակների համադրմամբ: Շենքերի ջեռուցումը կենտրոնական է: Կաթսայատունը գտնվում է հարավային շենքի կողմից ավելացված առանցքում, և վերևից սահմանակից չէ բնակելի մակերեսի:

Համալիրի կոնստրուկտիվ համակարգը միաձույլ երկաթբետոնյա հիմնակմախք է, արտաքին հարդարման նյութերը՝ բնական տրավերտին փայտը՝ մեկուսիչ զոհի հավելմամբ:

Քաղաքաշտպանության և ԱԻՆ կանխարգելման միջոցառումների կազմակերպում

Որպես թաքստոց կարող են դիտվել թաղամասի շենքերի նկուղները՝ իրենց հարմարություններով: Բոլոր բնակարաններն ապահովված են հրշեջ փրկարարական մեքենաների, անձնակազմի և սարքավորումների մոտեցման հնարավորությամբ: 3 շենքերին էլ ապահովված է հրշեջ մեքենայի սանդուղքի շաբաթը 3 կողմից: Հակահրդեհային, վթարային ելքը հայտնաբերել է չծխացող աստիճանավանդակներից: Բոլոր հարկերում են հրշեջ ծորակներ $d=57$ մմ, ունի ավտոմատ հրդեհային ազդանշանային համակարգ:

Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի աշխատանքային նախագիծը մշակվել է համաձայն ճարտարապետա-շինարարական գծագրերի, տեխնոլոգիական առաջադրանքի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի և ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերի և կանոնների:

Բնակելի շենքի ջրամատակարարումը իրականացվում է քաղաքային ջրագծից: Քաղաքային ջրագծի միացման կետում ջրի ճնշումը՝ 3.0 մթն, համաձայն տրված տեխնիկական պայմանի: Սառը ջրի մուտքագիծը նախատեսվում է 1-ին հարկով, PE $\Phi 40$ մմ տրամագծի խողովակով: Կենցաղային ջրամատակարարումն ապահովվելու համար թաղամասում նախատեսված է պոմպակայան: Պոմպակայանում նախատեսված է ինվերտորային կայանք 3 պոմպով խմելու-տնտեսական կարիքների համար, երկուսը աշխատող, մեկը պահուստային: Պոմպերը ընտրված են այնպես, որ ջրաչափերի վրա ջրի ճնշումը լինի ոչ պակաս 2մթն:

Պոմպերի ավտոմատ և դիստանցիոն միացման դեպքում միաժամանակ լուսային կամ ձայնային ազդանշան է գնում դեպի պահակատուն:

Բնակելի շենքի առաջին հարկի միջանցքում նախատեսվում է ջրաչափական հորան, որտեղ տեղադրված են բնակրանների սառը ջրամատակարարման

ջրաչափերը: Մայրուղի բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսված է իրականացնել պոլիէթիլենային PE և մետաղապլաստե, MP PN 20 խողովակներից $\Phi 20-40$ մմ:

Բնակելի շենքի տաք ջրամատակարարում բնակարաններում նախատեսվում է իրականացնել ընդհանուր կաթսայատնից:

Կաթսայատունը նախատեսված է շենքի առաջին հարկում՝ 0.00 նիշի վրա: Մայրուղի բաժանարար գծերը նախատեսված են հորանների մեջ: Բնակելի շենքի երկրորդ հարկի միջանցքում նախատեսվում է ջրաչափական հորան, որտեղ տեղադրված են բնակարանների տաք ջրամատակարարման ջրաչափերը: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե ջերմամեկուսիչ շերտով:

Հարկերում սանիտարական սարքերին սնող տաք ջրագծերը մոնտաժվում են հատակի և պատերի միջով:

Մայրուղի բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսված է իրականացնել պոլիէթիլենային PE և մետաղապլաստե, MP PN 20 խողովակներից $\Phi 20-40$ մմ:

Բնակելի շենքի հակահրդեհային ջրամատակարարումն ապահովելու համար նկուղային հարկում, նախատեսված է երկաթբետոնե բաքեր, 2 հատ յուրաքանչյուրը $V=70.0\text{մ}^3/$ և պոմպակայան: Հակահրդեհային ելքը բնակելի հարկերում 2.5լ/վրկ:

Պոմպակայանում նախատեսված է բնակելի հարկերի հրդեհամարման համար՝ պոմպային կայանք 2 պոմպով մեկը աշխատող, մեկը պահուստային $H=40$ մ, $Q=18\text{մ}^3/\text{ժամ}$, $N=5.0\text{կՎտ}$, 380Վ: Պոմպերի ավտոմատ և դիստանցիոն միացման դեպքում միաժամանակ լուսային կամ ձայնային ազդանշան է գնում դեպի պահակատուն: Պոմպակայանում բոլոր խումբ պոմպերի աշխատանքները ավտոմատացված են, կապված վթարային վիճակների, ճնշման փոփոխությունների հետ:

Բնակելի շենքի բնակելի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսված են $d=50$ մմ, հրշեջ ծորակներ, $L=20$ մ փողրակներով և $d=16$ մմ ծայրափողով: Մայրուղի բաժանարար գծերը նախատեսված են պողպատե խողովակներից $\Phi 57$ մմ:

Բնակելի շենքի կենցաղային կեղտաջրերը ինքնահոս տարբերակով հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի կոյուղու քաղաքային կոլեկտոր՝

համաձայն տրված տեխնիկական պայմանի: Կոյուղու կանգնակները նախատեսված են հորանների մեջ:

Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայնուկավոր PVC $\Phi 50-160$ մմ խողովակներից, իսկ նկուղային հարկի հավաքող գծերը և թողարկները կոյուղու PVC $\Phi 50-160$ մմ պոլիվինիլքլորիդային խողովակներից հրակայուն մեկուսացումով: Բնակելի շենքի կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսված են 2 հատ թողրակներ, 160մմ տրամագծով:

Կենցաղային կեղտաջրերը շենքից հեռանում են 1-ին հարկով:

Նախագծում նշված բոլոր 900-ի ձևավոր մասերի փոխարեն օգտագործել 2 հատ 450 ի ձևավոր մասեր:

Բնակելի համալիրի հարթ տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի հեղեղատար կոյուղու քաղաքային կոլեկտոր՝ համաձայն տրված տեխնիկական պայմանի:

Ներքին ջրհոսը նախատեսված է պոլիէթիլենային ППНД PE և PVC կոյուղու պոլիվինիլքլորիդային $\Phi 50-160$ մմ խողովակներից, որոնք միանում են ռետինե սեղմիչ օղակներով: Բաց պատշգամբների ջրահեռացումը իրականացվում $\Phi 50$ և $\Phi 75$ մմ խողովակներով՝ որոնք դուրս են գալիս հողի ազատ մակերևույթ:

Խողովակների մեջ ջրի սառեցումը բացառելու համար նախատեսված են էլեկտրական պարուրակներ:

Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որոնցից ինքնահոս տարբերակով հեռանում են հողի ազատ մակերևույթ:

Քաղաք Դիլիջանում կառուցվող բնակելի թաղամասի կցաշար տների ջեռուցման և օդափոխության նախագիծն իրականացված է համաձայն պատվիրատուի առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի և ՀՀ-ում գործող Շին. նորմերի ու կանոնների.

- ՀՀ ՇՆ IV-12.02.01 Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում
- ՀՀ ՇՆ II-7.01.96 Շինարարական կլիմայաբանություն
- ՀՀ ՇՆ II-7.02.95 Շինարարական ջերմաֆիզիկա
- ՀՀ ՇՆ 24-01-2016 Շենքի ջերմային պաշտպանություն
- СП 60.13330.2020 Отопление, вентиляция и кондиционирование воздуха

Շինությունների կոնստրուկցիաների ջերմափոխանցման գործակիցները հաշվարկված են ըստ շերտերի:

$K/\text{պատ} = 0,354 \text{ Վտ/մ}^2 \text{ } ^\circ\text{C}$, $K/\text{առաստաղ} = 0,183 \text{ Վտ/մ}^2 \text{ } ^\circ\text{C}$,

$K/\text{պատուհան} = 1.60 \text{ Վտ/մ}^2 \text{ } ^\circ\text{C}$, $K/\text{հատակ} = 0.331 \text{ Վտ/մ}^2 \text{ } ^\circ\text{C}$:

4-րդ գոտու F-1 շենքի ջեռուցման աղբյուր են հանդիսանում կաթսայատներում նախատեսվող պատի կոնդենսացիոն կաթսաները, բոլորի համար առանձին: Ջերմակիր է հանդիսանում ջուրը՝ $t_1=80 \text{ } ^\circ\text{C}$, $t_2=65 \text{ } ^\circ\text{C}$:

Ջեռուցման համար շենքի առաջին հարկում նախատեսված է ջերմային հաշվիչների պահարան, որտեղից առանձին խողովակաշարերով բարձրանում ենք դեպի բնակարաններ:

Խողովակաշարերը նախատեսված են ալյումինե շերտով պոլիպրոպիլենե՝ սպունգե խողովակաձև մեկուսացմամբ: Մոնտաժը նախատեսվում է իրականացնել առաստաղով: Ջեռուցումը շենքերի միջանցքներում իրականացվում է կանալային ֆանկոյլների միջոցով, որոնց համար նախատեսված ջերմային հաշվիչը տեղակայվում է կաթսայատանը:

Ելնելով 1-ին հարկում գտնվող ավտոկայանատեղի կիսաբաց լինելու փաստից և խողովակների ավտոկայանատեղիի առաստաղով դեպի հորաններ տեղափոխվելու հանգամանքից, ձմռանը խողովակաշարերի սառչելուց խուսափելու համար համակարգը լցվում է գլիկոլով:

Շենքի տանիքներում տրվում է մուլտի-սպլիթ համակարգի արտաքին բլոկերի տեղադրման հնարավորություն՝ հետագայում, ըստ բնակիչի ցանկության, հովացման համակարգի մոնտաժման համար: Արտաքին բլոկերի տեղակայման վայրից դեպի բնակարաններ նախատեսված են ցինկապատ թիթեղից հորաններ՝ հետագայում պղնձե խողովակների հեշտ բնակարան հասցնելու համար:

Օդի արտածում նախատեսված է սանհանգույցներում և խոհանոցներում: Օդատարները առանձին-առանձին բարձրանում են մինչև տանիք ուղղաձիգ հորանների միջով:

ԳՈՏԻ 7 –

- Հողհատկացման մակերես – 0.23007 հա
- Շենքի ընդհանուր մակերես – 12 364 մ²
- Կառուցապատման մակերես – 2127 մ² (90%)

- Ընդհանուր ջրանցիկ մակերես - 200 մ² (8%)
- Ընդհանուր անջրանցիկ մակերես - 47 մ² (2%)
- Շենքի շինարարական ծավալ - 48 723 մ³
- Հարկայնություն - Հինգ + ՄԵԿ

Հյուրանոցային համալիրը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Շահումյան 17/17 հասցեում և հանդիսանում է «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ թաղամասի յոթերորդ գոտին:

Տարածքը գտնվում է քաղաքի կենտրոնական հրապարակից 4.4 կմ հեռավորության վրա: Ս. Շահումյան փողոցին նայող ճակատն ունի 5+1 հարկայնություն, նախատեսվում է նաև 4 կիսաստորագետնյա հարկ՝ համապատասխանաբար -13.20, -9.90, -6.90, -3.60 նիշերում, որտեղ նախատեսված են ավտոկայանատեղի 26 մեքենայի համար, ռեստորան, մարզասրահ, ՍՊԱ, լողավազան, հանդիսությունների սրահ, հանդիպումների սենյակներ, տնտեսական և տեխնիկական տարածքներ:

Համալիրն ունի 2 գլխավոր մոտեցում: Հյուսիսային կողմից մոտեցումը նախատեսվում է իրականացնել թաղամասի ներքին ճանապարհից՝ ապահովելով հրշեջ մեքենայի և սանդուղքի հասանելիությունը: Համալիրի հյուսիսարևմտյան հատվածում նախատեսվում է նոր այգի, որը Ս. Շահումյան փողոցին կապվում է համալիրի բաց սանդղավանդակներով և թեքահարթակներով՝ ստեղծելով տեսողական և ֆիզիկական կապ փողոցի և այգու միջև: Համալիրի 0.00 նիշը համապատասխանում է 1232.50 բացարձակ նիշին:

Համալիրի ճարտարապետական հորինվածքը, ծավալատարածական և հատակագծային լուծումները, կողմնորոշումը բխել են հողատարածքի երկրաբանական, երկրաֆիզիկական և քաղաքաշինական առանձնահատկություններից:

Վերգետնյա 2-5 հարկերը, համապատասխանաբար +4.50, +7.80, +11.10, +14.40 նիշերում, կրկնվող են՝ սպասարկելով 116 հյուրանոցային համարի, որից 2-ը նախատեսված է հաշմանդամների համար: 5+1 հարկում (+17.70) նախատեսված են ևս 11 հյուրանոցային համար և բար՝ իրենց սպասարկման և տեխնիկական սենյակներով: Հյուրանոցային համարների մակերեսները տատանվում են 22-55 քմ:

Բոլոր հարկերում նախատեսված է 2 չծխացող աստիճանավանդակ: Համալիրի կոնստրուկտիվ համակարգը միաձույլ երկաթբետոնյա հիմնակմախք է՝ սեյսմիկ

կարով, արտաքին հարդարման նյութերը՝ կոմպոզիտ նյութերով՝ մեկուսիչ և պաշտպանիչ շերտերի հավելմամբ: Ջեռուցումը և հովացումը նախատեսվում է իրականացնել կենտրոնական: Բոլոր համարները և հասարակական տարածքները ապահովված են հրշեջ փրկարարական անձնակազմի և նրանց սարքավորումների մշտական մոտեցման հնարավորությամբ:

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպումն ապահովված է -6,90 նիշում առկա երկակի նշանակության ավտոկայանատեղիում, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում թաքստոցից օգտվողների համար նախատեսված է սանհանգույց: Տարածքը ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Հյուրանոցային համալիրի ջրամատակարարումը իրականացվում է քաղաքային ջրագծից: Քաղաքային ջրագծի միացման կետում ջրի ճնշումը՝ 3.0 մթն, համաձայն տրված տեխնիկական պայմանի: Սառը ջրի մուտքագիծը նախատեսվում է -3-րդ հարկով, PE $\Phi 90$ մմ տրամագծի խողովակով: Կենցաղային ջրամատակարարումն ապահովելու համար թաղամասում նախատեսված է պոմպակայան: Պոմպակայանում նախատեսված է ինվերտորային կայանք 3 պոմպով խմելու-տնտեսական կարիքների համար, երկուսը աշխատող, մեկը պահուստային: Պոմպերը ընտրված են այնպես, որ ջրաչափերի վրա ջրի ճնշումը լինի ոչ պակաս 2մթն:

Պոմպերի ավտոմատ և դիստանցիոն միացման դեպքում միաժամանակ լուսային կամ ձայնային ազդանշան է գնում դեպի պահակատուն: Հյուրանոցային համալիրի բոլոր հարկերի միջանցքում նախատեսվում են ջրաչափական հորաններ, որտեղ տեղադրված են բնակրանների սառը ջրամատակարարման ջրաչափերը: Մայրուղի բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսված է իրականացնել պոլիէթիլենային PE, պոլիպրոպիլենային PPR և մետաղապլաստե, MP PN 20 խողովակներից $\Phi 20-90$ մմ:

Հյուրանոցային համալիրի տաք ջրամատակարարում բնակարաններում նախատեսվում է իրականացնել ընդհանուր կաթսայատնից:

Կաթսայատունը նախատեսված է շենքի հարակից տարածքում: Մայրուղի բաժանարար գծերը նախատեսված են հորանների մեջ: Հյուրանոցային համալիրի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսվում են ջրաչափական հորաններ, որտեղ տեղադրված են տաք ջրամատակարարման ջրաչափերը: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե ջերմամեկուսիչ շերտով:

Հարկերում սանիտարական սարքերին սնող տաք ջրագծերը մոնտաժվում են հատակի և պատերի միջով:

Մայրուղի բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսված է իրականացնել պոլիպրոպիլենային PPR և մետաղապլաստե, MP PN 20 խողովակներից $\Phi 20-63$ մմ: Հյուրանոցային համալիրի հակահրդեհային ջրամատակարարումն ապահովելու համար թաղամասում, նախատեսված է երկաթբետոնե բաքեր, 2 հատ յուրաքանչյուրը $V=88.0\text{մ}^3$ և պոմպակայան: Հակահրդեհային ելքը բնակելի հարկերում 2×2.5 լ/վրկ: Պոմպակայանում նախատեսված է հյուրանոցի հարկերի հրդեհամարման համար՝պոմպային կայանք 2 պոմպով մեկը աշխատող, մեկը պահուստային $H=50$ մ, $Q=18\text{մ}^3/\text{ժամ}$, $N=8.5$ կՎտ, 380Վ և նկուղային հարկերի ինքնաշխատ հրդեհաշիջման համար՝ պոմպային կայանք 3 պոմպով մեկը աշխատող, մեկը պահուստային և մեկ հատ ժոկեյ պոմպով հակահրդեհային կարիքների համար (ինքնաշխատ հրդեհաշիջման համար) $H=40$ մ, $Q=110\text{մ}^3/\text{ժամ}$, $N=37.0$ կՎտ, 380Վ: Պոմպերի ավտոմատ և դիստանցիոն միացման դեպքում միաժամանակ լուսային կամ ձայնային ազդանշան է գնում դեպի պահակատուն: Պոմպակայանում բոլոր խումբ պոմպերի աշխատանքները ավտոմատացված են, կապված վթարային վիճակների, ճնշման փոփոխությունների հետ:

Հյուրանոցային համալիրի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսված են $d=50$ մմ, հրշեջ ծորակներ, $L=20$ մ փողրակներով և $d=16$ մմ ծայրափողով: Մայրուղի բաժանարար գծերը նախատեսված են պողպատե խողովակներից $\Phi 57-\Phi 89$ մմ:

Հյուրանոցային համալիրի կենցաղային կեղտաջրերը ինքնահոս տարբերակով հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի կոյուղու քաղաքային կոլեկտոր՝ համաձայն տրված տեխնիկական պայմանի: Կոյուղու կանգնակները նախատեսված են հորանների մեջ:

Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայնուկավոր PVC $\Phi 50-160$ մմ խողովակներից, իսկ նկուղային հարկի հավաքող գծերը և թողարկները կոյուղու PVC $\Phi 50-160$ մմ պոլիվինիլքլորիդային խողովակներից հրակայուն մեկուսացումով: Հյուրանոցային համալիրի կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսված են 4 հատ թողրակներ, 160մմ տրամագծով: Կենցաղային կեղտաջրերը շենքից հեռանում են -3-րդ հարկով:

Հյուրանոցային համալիրի հարթ տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի հեղեղատար կոյուղու քաղաքային կոլեկտոր՝ համաձայն տրված տեխնիկական պայմանի:

Ներքին ջրհոսը նախատեսված է պոլիէթիլենային ПРHNDD PE և PVC կոյուղու պոլիվինիլքլորիդային Ф50-160մմ խողովակներից ,որոնք միանում են ռետինե սեղմիչ օղակներով: Բաց պատշգամբների ջրահեռացումը իրականացվում Ф50 և Ф75մմ խողովակներով՝ որոնք միանում են շենքի ընդհանուր հեղեղատար համակարգին:

Խողովակների մեջ ջրի սառեցումը բացառելու համար նախատեսված են էլեկտրական պարուրակներ:

Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որոնք դրենաժային պոմպերով մղվում են դեպի հեղեղատար համակարգ:

Քաղաք Դիլիջանում կառուցվող բնակելի թաղամասի 7-րդ գոտու հյուրանոցային համալիրի ջեռուցման, հովացման և օդափոխության նախագիծն իրականացված է համաձայն պատվիրատուի առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի և ՀՀ-ում գործող շին. նորմերի ու կանոնների.

· СП 60.13330.2020 «СНиП 41-01-2003 Отопление, вентиляция и кондиционирование воздуха»

· ՀՀՇՆ IV-12.02.01-04 «ՋԵՌՈՒՑՈՒՄ, ՕԴԱՓՈԽՈՒՄ ԵՎ ՕԴԻ ԼԱՎՈՐԱԿՈՒՄ»

Ավտոկայանատեղիներում նախատեսված են օդի արտածման և ներածման համակարգեր, ծխահեռացման, դիմհարի, օդի կոմպենսացման համակարգեր:

Ավտոկայանատեղիում նախատեսված է արտածման կանալային օդամուղ, իսկ ներածումն իրականացվում է ջրային ջերմափոխանակչով ներածման սարքերի միջոցով: Օդի արտածումը ավտոկայանատեղիից իրականացվում է վերին և ստորին զոնաներիս հավասարաչափ: Արտածման և ներածման ճաղավանդակները նախատեսված են միաշերտ ալյումինե:

Օդափոխության օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից՝ 0.5-0.7 մմ հաստությամբ՝ կցաշուրթային միացմամբ: Ավտոկայանատեղի ծխահեռացման համար նախատեսված է ծխի փականներ: Ծխահեռացման օդամուղները նախատեսված է տեղադրել տանիքում:

Դիմհար համակարգեր նախատեսված են աստիճանավանդակների նախամուտքերում և վերելակների հորաններում:

Աստիճանավանդակի նախամուտքի դիմհարի օդամուղը նախատեսված է կանալային տիպի և տեղադրվում է հարկի առաստաղի տակ:

Նախամուտքերում 100 Պա ճնշման պահպանման համար դռների վերևում նախատեսված են ավելցուկային ճնշման փականներ (ОКСИД ВЕЗА), որոնք բացվում են դեպի ավտոկայանատեղի:

Ծխահեռացման և դիմհարի համակարգեր նաժատեսված են նաև հյուրանոցային հարկերի միջանցքներում: Միջանցքներում օդի կոմպենսացիան իրականացվում է յուրաքանչյուր հարկում արտաքին պատի վրա տեղակայվող հակահրդեհային փականների միջոցով:

Ծխահեռացման և դիմհարի օդատարները նախատեսվում են կցաշուրթային միացմամբ: Ծխահեռացման օդատարները սև պողպատից են (1.0 մմ հաստությամբ), որոնք պատրաստվում են էլեկտրաեռակցմամբ: Դիմհարի օդատարները նախատեսված են ցինկապատ պողպատից 0.9 մմ հաստությամբ:

Բոլոր օդատարները ներկվում են հրակայուն ներկով, իսկ ծխահեռացման օդատարները մեկուսացվում են 5 սմ հաստությամբ հրակայուն մեկուսացմամբ:

Օդատարների կախիչները ևս ներկվում են հակակոռոզիոն ներկով:

Հակահրդեհային համակարգի աշխատանքի ժամանակ սենքերի օդի ներածման և արտածման համակարգերն անջատվում են, իսկ գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից: Օդի արտածման օդամուղի դիմաց նախատեսված է հակահրդեհային փական:

Հյուրանոցային համարներում արտածում նախատեսվախ է սանհանգույցներից: Արտածումն իրականացվում է ցինկապատ թիթեղյա օդատարներով, որոնք առանձին-առանձին բարձրում են տանիք՝ ուղղահայաց հորանների միջով: Տանիքում հորանների

վրա հակադարձ քամիներից խուսափելու համար նախատեսվում են տուրբո դեֆլեկտորներ:

Շենքում նախատեսված է կենտրոնացված ջեռուցման և հովացման համակարգեր: Կաթսայատունը նախատեսված է -3 հարկում: Չիլլերները

նախատեսված են տանիքում: Ամբողջ շենքում ջեռուցման և հովացման համակարգերը քառախողովակաձևի

են: Ավտոկայանատեղիները ջեռուցվում են ջրային օդատաքացուցիչներով: Շենքի բոլոր մուտքերի վրա նախատեսված են էլեկտրական օդային վարագույրներ: Բոլոր խողովակաշարերը նախատեսված են պոլիպրոպիլենե՝ ալյումինե շերտով, մեկուսացված խողովակաձև մեկուսիչով: Կաթսայատան մետաղական խողովակները ներկվում են հակակորոզիոն ներկով և մեկուսացվում ռետինե մեկուսիչով:

Կաթսայատանը ջեռուցման կարիքների համար նախատեսված են 2 հատակային ջրատաքացուցիչ կաթսաներ, հիդրավլիկ սլաք, պոմպային հանգույցներ, տաք ջրամատակարարման համար արահային ջերմափոխանակիչներ և ծավալային ջրատաքացուցիչներ:

Կաթսայատան օդի ներածումն իրականացվում է արտաքին պատերի վրա տեղակայվող ճաղավանդակներով, իսկ արտածումը՝ տանիքի վրա տեղակայվող դեֆլեկտերի միջոցով: Համակարգերի թողարկումից հետո, դրանք ենթարկվում են կարգաբերման և փորձարկման:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող բնակելի համալիր:

Հյուրանոցային համալիրի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից տարածքների գոյություն ունեցող կառուցապատումը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկություններն, այնպես էլ պատվիրատուի պահանջները:

Հյուրանոցային համալիրի ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Համալիրի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ «նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Տրանսպորտային մոտեցումներն ապահովվում են դեպի թաղամաս տանող գոյություն ունեցող փողոցներից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ համաձայն Դիլիջանի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի

Գոտի 6 -

- Հողհատկացման մակերես - 0.3721 հա
- Շենքի ընդհանուր մակերես - 15452 մ²
- Կառուցապատման մակերես - 1786 մ² (48%)
- Կառուցապատման մակերեսը 0.00 նիշում 700 մ²
- Բնակելի մակերեսը - 4586 մ²
- Բնակարաններ - 3498 մ²
- Կոմերցիոն մակերես - 1830 մ²
- Ավտոկայանատեղի - 6183 մ²
- Բնակարանների քանակը 91
- Ավտոկայանատեղիների քանակը 105
- Կոմերցիոն տարածքի քանակը 5

ՀՀ Տավուշի մարզ Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 17/8 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախագիծը կատարված է «ԹԱՂԱՄԱՍ» ՍՊԸ պատվերով. և N3082024-11-0046 նախագծման թույլտվություն տրված՝ 30.08.2024թ., ինչպես պատվիրատուի կողմից տրված առաջադրանքը.

Նախագծով նախատեսված է 83x13մ մեծ չափերով բազմաբնակարան բնակելի շենք, որն ունի առանց 6 վերգետյա հարկ, երկու կիսանկուղային և մեկ ստորգետնյա հարկ: Նախագծվող շենքը մաս է կազմում բազմաֆունկցիոնալ թաղամասի.

Կիսանկուղային երկու հարկերը դեպի թաղամասի կողմ նայող հատվածը պատկանում է որպես հասարակական տարածք, իսկ մնացած մասը ավտոկայանատեղի. առաջին հարկը նախատեսված է որպես ընդհանուր տարածք, որտեղից կազմակերպվում է դեպի բնակելի և հասարակական տարածքներ մուտքերը. 2-ից 5-րդ հարկերը նախատեսված են բազմաբնակարան. Շենքի կոնստրուկտիվ համակարգը նախագծված է միաձույլ Ե/Բ կարկասով:

Արտաքին պարփակ պատերը շարված են բետոնե թեթև բլոկներից.

Ասիճանավանդակի հետ կապող բոլոր դռները պատրաստվում են հակահրդեհային.

Շենքերի ճակատների ձևավորումը պետք է օգտագործվի Ց/Ա բարձրորակ սվաղ ներկումով, կոմպոզային նյութեր: Տանիքում ջերմամեկուսացման, ջրամեկուսացման և ջրահեռացման համակարգի հանգույցները և եղանակները տրամադրվելու են իրականացնող ընկերություն՝ առաջընթաց կատարող ընկերության կողմից:

Բնակելի շենքի ջրամատակարարումը իրականացվում է քաղաքային ջրագծից: Քաղաքային ջրագծի միացման կետում ջրի ճնշումը՝ 3.0 մթն, համաձայն տրված տեխնիկական պայմանի: Սառը ջրի մուտքագիծը նախատեսվում է -3-րդ հարկով, PE Փ90մմ տրամագծի խողովակով: Կենցաղային ջրամատակարարումն ապահովվելու համար թաղամասում նախատեսված է պոմպակայան: Պոմպակայանում նախատեսված է ինվերտորային կայանք 3 պոմպով խմելու-տնտեսական կարիքների համար, երկուսը աշխատող, մեկը պահուստային : Պոմպերը ընտրված են այնպես, որ ջրաչափերի վրա ջրի ճնշումը լինի ոչ պակաս 2մթն:

Պոմպերի ավտոմատ և դիստանցիոն միացման դեպքում միաժամանակ լուսային կամ ձայնային ազդանշան է գնում դեպի պահակատուն: Բնակելի շենքի բոլոր հարկերի միջանցքում նախատեսվում են ջրաչափական հորաններ, որտեղ տեղադրված են բնակրանների սառը ջրամտակարարման ջրաչափերը: Մայրուղի բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսված է իրականացնել պոլիէթիլենային PE, պոլիպրոպիլենային PPR և մետաղապլաստե, MP PN 20 խողովակներից $\Phi 20-90$ մմ:

Բնակելի շենքի տաք ջրամատակարարում բնակարաններում նախատեսվում է իրականացնել ընդհանուր կաթսայատնից:

Կաթսայատունը նախատեսված է շենքի հարակից տարածքում : Մայրուղի բաժանարար գծերը նախատեսված են հորանների մեջ: Բնակելի շենքի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսվում են ջրաչափական հորաններ, որտեղ տեղադրված են բնակրանների տաք ջրամտակարարման ջրաչափերը: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե ջերմամեկուսիչ շերտով: Հարկերում սանիտարական սարքերին սնող տաք ջրագծերը մոնտաժվում են հատակի և պատերի միջով:

Մայրուղի բաժանարար գծերը և սանիտարական սարքերի մոտեցումները նախատեսված է իրականացնել պոլիպրոպիլենային PPR և մետաղապլաստե, MP PN 20 խողովակներից $\Phi 20-63$ մմ: Բնակելի շենքի հակահրդեհային ջրամատակարարումն ապահովելու համար թաղամասում, նախատեսված է երկաթբետոնե բաքեր, 2 հատ յուրաքանչյուրը $V=88.0$ մ³ և պոմպակայան: Հակահրդեհային ելքը բնակելի հարկերում 2×2.5 լ/վրկ: Պոմպակայանում նախատեսված է բնակելի հարկերի հրդեհամարման համար՝ պոմպային կայանք 2 պոմպով մեկը աշխատող, մեկը պահուստային $H=50$ մ, $Q=18$ մ³/ժամ, $N=8.5$ կՎտ, 380Վ և նկուղային հարկերի ինքնաշխատ հրդեհաշիջման համար՝ պոմպային կայանք 3 պոմպով մեկը աշխատող, մեկը պահուստային և մեկ հատ ժոկեյ պոմպով հակահրդեհային կարիքների համար (ինքնաշխատ հրդեհաշիջման համար) $H=40$ մ, $Q=110$ մ³/ժամ, $N=37.0$ կՎտ, 380Վ: Պոմպերի ավտոմատ և դիստանցիոն միացման դեպքում միաժամանակ լուսային կամ ձայնային ազդանշան է գնում դեպի պահակատուն: Պոմպակայանում բոլոր խումբ պոմպերի աշխատանքները ավտոմատացված են, կապված վթարային վիճակների, ճնշման փոփոխությունների հետ:

Բնակելի շենքի բնակելի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսված են $d=50$ մմ, հրշեջ ծորակներ, $L=20$ մ փողրակներով և $d=16$ մմ ծայրափողով:

Մայրուղի բաժանարար գծերը նախատեսված են պողպատե խողովակներից $\Phi 57$ - $\Phi 89$ մմ:

Բնակելի շենքի կենցաղային կեղտաջրերը ինքնահոս տարբերակով հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի կոյուղու քաղաքային կոլեկտոր՝ համաձայն տրված տեխնիկական պայմանի: Կոյուղու կանգնակները նախատեսված են հորանների մեջ:

Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայնուկավոր PVC $\Phi 50$ -160մմ խողովակներից, իսկ նկուղային հարկի հավաքող գծերը և թողարկները կոյուղու PVC $\Phi 50$ -160մմ պոլիվինիլքլորիդային խողովակներից հրակայուն մեկուսացումով: Բնակելի շենքի կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսված են 4 հատ թողրակներ, 160մմ տրամագծով: Կենցաղային կեղտաջրերը շենքից հեռանում են -3-րդ հարկով:

Բնակելի շենքի հարթ տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանցից հավաքվելով դեպի հեղեղատար կոյուղու քաղաքային կոլեկտոր՝ համաձայն տրված տեխնիկական պայմանի:

Ներքին ջրհոսը նախատեսված է պոլիէթիլենային ППНД PE և PVC կոյուղու պոլիվինիլքլորիդային $\Phi 50$ -160մմ խողովակներից ,որոնք միանում են ռետինե սեղմիչ օղակներով: Բաց պատշգամբների ջրահեռացումը իրականացվում $\Phi 50$ և $\Phi 75$ մմ խողովակներով՝ որոնք միանում են շենքի ընդհանուր հեղեղատար համակարգին:

Խողովակների մեջ ջրի սառեցումը բացառելու համար նախատեսված են էլեկտրական պարուրակներ:

Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որոնք դրենաժային պոմպերով մղվում են դեպի հեղեղատար համակարգ:

Ավտոկայանատեղիներում նախատեսված են օդի արտածման և ներածման համակարգեր, ծխահեռացման, դիմհարի, օդի կոմպենսացման համակարգեր:

Ավտոկայանատեղիում նախատեսված է արտածման կանալային օդամուղ, իսկ ներածումն իրականացվում է ջրային ջերմափոխանակչով ներածման սարքերի միջոցով: Օդի արտածումը ավտոկայանատեղիից իրականացվում է վերին և ստորին զոնաներիս հավասարաչափ: Արտածման և ներածման ճաղավանդակները նախատեսված են միաշերտ ալյումինե:

Օդափոխության օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից՝ 0.5-0.7 մմ հաստությամբ՝ կցաշուրթային միացմամբ: Ավտոկայանատեղի ծխահեռացման համար նախատեսված է ծխի փականներ: Ծխահեռացման օդամուղները նախատեսված է տեղադրել տանիքում: Դիմհար համակարգեր նախատեսված են աստիճանավանդակների նախամուտքերում և վերելակների հորաններում:

Աստիճանավանդակի նախամուտքի դիմհարի օդամուղը նախատեսված է կանալային տիպի և տեղադրվում է հարկի առաստաղի տակ:

Նախամուտքերում 100 Պա ճնշման պահպանման համար դռների վերևում նախատեսված են ավելցուկային ճնշման փականներ (ОКСИД Веза), որոնք բացվում են դեպի ավտոկայանատեղի:

Ծխահեռացման և դիմհարի համակարգեր նածատեսված են նաև բնակելի հարկերի միջանցքներում: Միջանցքներում օդի կոմպենսացիան իրականացվում է յուրաքանչյուր հարկում արտաքին պատի վրա տեղակայվող հակահրդեհային փականների միջոցով:

Ծխահեռացման և դիմհարի օդատարները նախատեսվում են կցաշուրթային միացմամբ: Ծխահեռացման օդատարները սև պողպատից են (1.0 մմ հաստությամբ), որոնք պատրաստվում են էլեկտրաեռակցմամբ: Դիմհարի օդատարները նախատեսված են ցինկապատ պողպատից 0.9 մմ հաստությամբ:

Բոլոր օդատարները ներկվում են հրակայուն ներկով, իսկ ծխահեռացման օդատարները մեկուսացվում են 5 սմ Հաստությամբ հրակայուն մեկուսացմամբ:

Օդատարների կախիչները ևս ներկվում են հակակոռոզիոն ներկով:

Հակահրդեհային համակարգի աշխատանքի ժամանակ սենքերի օդի ներածման և արտածման համակարգերն անջատվում են, իսկ գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից: Օդի արտածման օդամուղի դիմաց նախատեսված է հակահրդեհային փական:

Բնակարաններում արտածում նախատեսվախ է սանհանգույցներից և խոհանոցներից: Ատախումն իրականացվում է ցինկապատ թիթեղյա օդատարներով, որոնք առանձին-առանձին բարձրում են տանիք՝ ուղղահայաց հորանների միջով: Տանիքում հորանների վրա հակադարձ քամիներից խուսափելու համար նախատեսվում են տուրբո դեֆլեկտորներ:

Շենքում նախատեսված է կենտրոնացված ջեռուցման և հովացման համակարգեր: Կաթսայատունը նախատեսված է -4,10 նիշում, ավտոկայանատեղիին կից: Չիլերները նախատեսված են տանիքում: Ամբողջ շենքում ջեռուցման և հովացման համակարգերը քառախողովակաձևի են: Ավտոկայանատեղիները ջեռուցվում են ջրային օդատաքացուցիչներով: Հասարակական տարածքների և բնակելի մասերի միջանցքների ջեռուցումը և հովացումը նախատեսված են կասետային ֆանկոյլներով: Շենքի բոլոր մուտքերի վրա նախատեսված են էլեկտրական օդային վարագույրներ: Բնակելի մասերի համակարգերը բաժանված են 2 հատվածի: Յուրաքանչյուր հարկում տեղակայվում են ջերմային հաշվիչների հանգույցներ: Բոլոր խողովակաշարերը նախատեսված են պոլիպրոպիլենե՝ ալյումինե շերտով, մեկուսացված խողովակաձև մեկուսիչով: Կաթսայատան մետաղական խողովակները ներկվում են հակակորոզիոն ներկով և մեկուսացվում ռետինե մեկուսիչով:

Կաթսայատանը ջեռուցման կարիքների համար նախատեսված են 2 հատակային ջրատաքացուցիչ կաթսաներ, հիդրավլիկ սլաք, պոմպային հանգույցներ, տաք ջրամատակարարման համար արահային ջերմափոխանակիչներ և ծավալային ջրատաքացուցիչներ:

Կաթսայատան օդի ներածումն իրականացվում է արտաքին պատերի վրա տեղակայվող ճաղավանդակներով, իսկ արտածումը՝ տանիքի վրա տեղակայվող դեֆլեկտերի միջոցով: Ծխատարը բարձրանում է կաթսայատան տանիքի նիշից 10 մետր:

Համակարգերի թողարկումից հետո, դրանք ենթարկվում են կարգաբերման և փորձարկման:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող բնակելի համալիր:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից

տարածքների գոյություն ունեցող կառուցապատումը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկություններն, այնպես էլ պատվիրատուի պահանջները:

Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահոված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Համալիրի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Տրանսպորտային մոտեցումներն ապահովվում են դեպի թաղամաս տանող գոյություն ունեցող փողոցներից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ համաձայն Դիլիջանի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի

Բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է հողամասի դիրքով, լանդշաֆտի առանձնահատկություններով, հեռավորությունների նորմատիվ պահանջներով, բնական լուսավորության հաշվարկներով:

Համալիրի տարածքում նախատեսվում են տեղադրել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսվող աղբամաններ, որոնց տեղադրման տեղերը կճշտվեն Դիլիջանի համայնքապետարանի հետ:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Կառույցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Բնակելի թաղամասի արտաքին ինժեներական ցանցերի նախագծերը մշակվել են նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրած տեխնիկական պայմանների համաձայն (**Հավելվածներ 2-3**):

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

- ✓ Ըստ ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով շինարարական աշխատանքների իրականացումը հաշվարկված է 735 աշխատանքային օր շինարարության տևողություն:
- ✓ ՀՀՇՆ 20.04 - «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր»
- ✓ ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի եվ հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի եվ շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավագածուն հավանություն տալու մասին»
- ✓ ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում
- ✓ ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս 1. Բազմաբնակարան Բնակելի շենքեր
- ✓ ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի Եվ Շինությունների Հրդեհային Անվտանգություն
- ✓ ՀՀՇՆ IV-11.03.03-02 Ավտոկայանատեղեր

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆԼԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ»:

Նախագծի հիմնական և կարևորագույն նպատակն է կառուցել էներգաարդյունավետ շենքեր, նվազեցնելով էներգիայի օգտագործումը բնակելի տարածքներում որոնք բարենպաստ կլինեն եվ բնակիչների համար եվ միջավայրի նկատմամբ (համաշխարհային նորմերի համապատասխան):

Էներգաարդյունավետություն ապահովելու համար օգտագործվելու են համապատասխան մեկուսացման շերտեր և նյութեր, բարձր որակի պատուհաններ և արևային վահանակներ (ուսումնասիրված համապատասխան մասնագետների կողմից):

ՀՀ Տաուշի մարզի, ք. Դիլիջան, Շահումյան փողոցի թիվ 17/10; 17/8 և 17/17 հասցեներում նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարության կազմակերպման նախագիծը իրականացվել է ճարտարապետական և կոնստրուկտորական նախագծերի հիման վրա համաձայն СНиП 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում) և СН440-79 (Շինարարության տեղություն նորմաներ) ձեռնարկների պահանջով:

Շինարարական հրապարակի կազմակերպման նախագիծը և ժամանակացույցը ներկայացված են առանձին հատորով:

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ՝
Գոտի 6



ՀԱՄԱՁԱՅՆԵՑԿԱՆ Է՝

ԴԻԼԻԶԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

[illegible]

Գրություն 4



Ա. նախապատրաստական աշխատանքներ,

Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական, տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ՝

- ա. Շինհրապարակի նշահարում և ժամանակավոր ցանկապատում:
- բ. Գոյություն ունեցող շինությունների քանդում և շին աղբի տեղափոխում:
- գ. Բուսահողի հեռացում և տարածքի հարթեցում:
- դ. Ժամանակավոր ճանապարհների կառուցում:
- դ. Կառույցների նշահարում
- ե. Ժամանակավոր վագոն տնակների տեղադրում:
- զ. Ժամանակավոր էլեկտրամատակարարման և ջրամատակարարման գծերի անցկացում:
- է. Տարածքի պահակային լուսավորության ապահովում:
- ը. Տեխնիկայի և համապատասխան գործիքների տեղափոխում շին հրապարակ և համապատասխան բանվորական և ինժինեռական կադրերի հավաքագրում:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Բ. Շինարարական հրապարակ:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակն ամբողջ տարածքն է:

Ըստ շինարարության կազմակերպման նախագծի և համաձայն «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով շինհրապարակում նախատեսվում է՝

- Պահակի տնակ 2 հատ
- Աշղեկի գրասենյան 1 հատ
- Սննդի ընդունման տնակ 1 հատ
- Հանդերձարան 6 հատ
- Բաց պահեստ 2 հատ

- Բիոզուգարան լվացարանով 4 հատ
- Աղբի տարաններ
- Հակահրդեհային վահանակ՝ 6 հատ,
- Ավտոմեքենաների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- Շինհրապարակում լինելու են նաև ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ:

Շինհրապարակը առանձնանալու է ճանապարհը փակող նշաններով՝ անվտանգության նորմատիվների համաձայն:

Մինչև շինարարության սկսելը շինհրապարակում կատարվելու են կոմունիկացիաների տեղադրման, միացման աշխատանքներ:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրի պահանջարկն ապահովվելու է ջուրը շինարարական հրապարակ մեքենաներով բերելու եղանակով:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, ինչը աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու է: Բիոզուգարանների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության փուլում էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող համակարգերից :

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական այլ գործընթացներից առաջացող հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին և միանան շինհրապարակում տեղադրված պարզարանին: Իսկ անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը կուղղորդվեն բակային սելավային ջրացանց, այնուհետև պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Մեքենաների անիվների լվացման համար անհրաժեշտ որակի ջրաքանակի ապահովումը նախատեսվում է իրականացնել մեքենաներով բերելու եղանակով՝ (մինչ շինարարական

աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ):

«ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը իր ճարտարապետա-հատակագծային լուծումից ելնելով աշխատանքային տեղամասերը բաժանված են ըստ գոտիների: Յուրաքանչյուր տեղամասում աշխատանքները կատարվում են հոսքային եղանակով:

Աշխատանքի ճակատի, տեխնիկաների աշխատանքային և պարապ շարժման ուղղությունները, ինչպես նաև կանգառները ցույց են տրված համապատասխան գծագրերում:

Հողային և հիմնային աշխատանքները կատարել համաձայն ՇՆԿ 3.02.01-87 (Հողային շինվածքներ և հիմքեր) ձեռնարկի պահանջներով: Հողային աշխատանքները իրականացնել անիվավոր էքսկավատորով: Ավելնորդ բնահողը շին հրապարակից տեղափոխել ինքնաթափերի միջոցով թափոնների համար նախատեսված տարածք, իսկ հետլիցքի համար նախատեսված բնահողը պահեստավորել շինհրապարակի տարածքում:

Հիմքերի տակ բնահողը 10-15սմ մշակել ձեռքով Կրող և պատող կոնստրուկցիաների շինմոնտաժային աշխատանքները կատարել պահպանելով ՇՆԿ 3.03.01-87-ի և ՇՆԿ III 4-80-ի և ծրագրերի պահանջների համապատասխան:

Շինմոնտաժային աշխատանքների կատարման համար առաջարկվում է ավտոկռան 25տ բեռնաբարձությամբ 31մ սլաքի երկարությամբ:

Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների ամրանային կարկասների պատրաստումը առաջարկվում է պատվիրել մասնագիտացված արտադրամասերում:

Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնացման համար համապատասխան դասի ապրանքային բետոնը պատվիրել բետոնային հանգույցում:

Բետոնը կաղապարված կոնստրուկցիային մատուցել բետոնամղիչ ինքնագնացով և խտացնել: Կախված կոնստրուկցիայի տեսակից բետոնի խտացումը կատարել խորքային կամ մակերևույթային թրթռիչի օգնությամբ:

Ապահովել բետոնի խնամքը թե ամառային և թե ձմեռային պայմաններում՝ ըստ նորմատիվներին համապատասխան:

Տանիքը, հատակները և հարդարման աշխատանքները կատարել ՇՆԼԿ 3.04.01-87, ՇՆԼԿ III-4-80 -ի և աշխատանքային նախագծերի պահանջներով:

Հատակների և հարդարման աշխատանքները իրականացնել տանիքածածկային և բացվածքների /դռների, լուսամուտների/ փակման աշխատանքներից հետո: Ձմռանը ներքին հարդարման աշխատանքները կատարել ներսում $+8\text{ }^{\circ}\text{C}$ ոչ պակաս ջերմության պայմաններում:

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքի համար հողային աշխատանքներից առաջացող հանույթի, մշակվող գրունտի ծավալը ընդհանուր կկազմի 47760 խմ, որից հետլիցք 8480 խմ: Հատկացվող հողամասում շինություններից ազատ տեղամասերում նկատվող հողի բուսահողը գնահատվել է 240 խմ: Այս և հետագայում բերվող ցուցանիշները նախնական են և վերջնական նախագծում կարող են փոփոխվել, բայց ոչ էական:

Ազդեցության ենթակա բուսահողը կհեռացվի և ժամանակավոր կպահվի տարածքում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան: Հետագայում բուսահողի նշված զանգվածը կօգտագործվի բնակելի թաղամասի կանաչապատման աշխատանքներում:

Հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային հողային գրունտների մի մասը՝ (գրունտի 39280 խմ ծավալը) կտեղափոխվի համաձայնեցված/հատկացված վայր (Դիլիջանի համայնքապետարանի գրությունը N 81-25, 13 հունվարի 2025 ներկայացված է Հավելված 5-ում), իսկ մնացածը՝ 8480 խմ շինարարական աշխատանքների ընթացքում կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները, որոնց ծավալը գնահատվում է՝ մոտավոր 420 խմ, և մնացորդային գրունտները նույնպես տեղափոխվելու են համաձայնեցված/հատկացված վայր:

Դ. Շինարարական աշխատանքներ

Բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են՝

- Շին. հրապարակի ցանկապատումը և անհրաժեշտ շինությունների տեղադրումը,
- Շենքերի հիմքերի փոստրակների հողային աշխատանքների իրականացում,

- Շենքերի երկաթ-բետոնյա կարկասների կառուցում,
- Շենքերի արտաքին և ներքին պատերի շարվածքների իրականացում,
- Շենքերում ներքին և արտաքին պատերի սվաղ՝ գաջի և ց/ավազե շաղախներոց,
- Վերելակների մոնտաժում՝ կարգավորում և թողարկում աշխատանքների իրականացում,
- Շենքերի ներքին կոմունիկացիաների և հարդարման աշխատանքների իրականացում,
- Ինժինեռական ենթակառուցվածքների շին. մոնտաժային աշխատանքների իրականացում,
- Արտաքին և ներքին կոմունիկացիաների ջրագծի, կոյուղատարի և էլեկտրալարերի իրականացում,
- Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, դրանք կվարձակալվեն այլ կազմակերպություններից:

Շինարարական աշխատանքներում օգտագործվելու են ընդհանուր թվով 21 մեքենա սարքավորումներ, որոնց անվանումներն ու քանակը ներկայացված է

- Ավտոկռան 25տ XCMG 25L5_S (25t) (3 հատ),
- Աշտարակային կռունկ QTZ-160 (T6024) (2 հատ)
- Անիվավոր էքսկովատոր շերեփ. տարող. 1.2մ³ (2 հատ),
- Ինքնաթափ մեքենա 20մ³ (4 հատ),
- Բետոնամղիչ CB-126, կամ համարժեք տեխնիկական տվյալներով (2 հատ),
- Շարժական կոմպրեսոր ЗИФ-55 В, կամ համարժեք տեխնիկական տվյալներով (2 հատ),
- Էլ. Եռակցման սարք CTH 500, կամ համարժեք տեխնիկական տվյալներով,
- Բուլդոզեր T-70 (2 հատ),
- Բեռնատար մեքենա 1.5տ (2 հատ),
- Բեռնատար մեքենա երկար թափքով 25տ (1 հատ),
- Ինքնագնաց բետոնախառնիչ (2 հատ),
- Գրեյդեր (1 հատ),
- Ձեռքի էլեկտրական գործիքներ,

- Ձեռքի մեխանիկական գործիքներ,
- Ատաղձագործական գործիքներ,
- Ներկարարական գործիքներ:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածում օգտագործվելու են վերոթվարկված տեխնիկա-տրանսպորտային միջոցները որոնք կարող են լինել կապալառու կազմակերպության միջոցները կամ դրանց բացակայության դեպքում վարձակալվել այլ կազմակերպություններից: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի և կայանվելու են գործունեության տարածներում՝ շինարարական հրապարակում:

Ապրանքային բետոնը շին. հրապարակ է կբերվի պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործող ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվելու են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 50 -ից ոչ ավել թեքություն:

Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինարարական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Գործունեության վայր շինտեխնիկական և ավտոմեքենաները մոտենալու են գոյություն ունեցող ճանապարհով: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և սպասարկումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի, ինչպես նաև պետական այլ կառույցների կողմից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում: Միաժամանակ աշխատողների թիվը շինարարության տարբեր փուլերում կլինի առավելագույնը 57 մարդ, այդ թվում՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ – 3 մարդ,
- Արհեստագործներ և բանվորներ – 44 մարդ,
- Մեքենավարներ և օգնականներ – 10 մարդ:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 735 Աշխատանքային օր՝ շինարարական մեկնարկից:

Շինարարության տևողությունը հաշվարկված է ըստ ՇՆ և Կ 1.04.03-85 «Շինարարության տևողության նորմեր» և ՍՆԻՊ 1.04.03.2008-ի նորմերին համապատասխան:

2.3. Զրամատակարարում և ջրահեռացում

Զրապահանջը

Զրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի «Զրամատակարարում և կոյուղի» բաժինն իր մեջ կներառի՝

- Արտաքին և ներքին ջրամատակարարում
- Տարածքի ոռոգում
- Արտաքին և ներքին կոյուղի
- Անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի:

Զրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող Զրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան:

Աձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/

Տարածքի մակերևութային ջրերի մի մասի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Մնացած անձրևաջրերի մասը հավաքվում է նախատեսված ջրամբարում, կանաչապատ տարածքները ջրելու համար:

Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և կմիացվեն գործող քաղաքային հեղեղատար ցանցին:

2.4. Կանաչապատում և բարեկարգում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 42%-ը /մոտավորապես 4712.0 քմ/, մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ սավառակները և սպասարկման տարածքները: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել հողային աշխատանքների ժամանակ պահեստավորված բուսահողը: Կանաչապատումը կիրականացվի համաձայն կանաչապատման հատակագծի և սխեմայի այն նախապես համաձայնեցնելով Դիլիջանի համայնքապետարանի հետ (**Տես Հավելված 8**):

Նախատեսված կանաչապատման աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան:

2.5. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Բնակելի թաղամասի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում՝ մետաղ, բետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, էքստրուդացված պոլիստիրոլի մեկուսացում, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, ինչպես նաև աշխատողների կենցաղային կարիքների համար: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանի համաձայն՝ գոյություն ունեցող ջրատարից, որը կմիացվի քաղաքային ջրամատակարարման ցանցին, իսկ կոյուղին կմիացվի քաղաքային կոյուղատարին:

Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի քաղաքային Էլ. Ցանցի ենթակայանից:

Բնակելի շենքերի էլեկտրամատակարարումը կիրականացվի ՀԷՑ ՓԲԸ կողմից տրվող տեխպայմանների հիման վրա:

2.6. Երթևեկության անվտանգության կազմակերպում

ՀՀ Տաուշի մարզի Դիլիջան քաղաքի Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում բնակելի համալիրի կառուցման ընթացքում երթևեկությունը կկարգավորվի ըստ երթևեկության կազմակերպման պլանի, որը մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կպատրաստվի և կներկայացվի ՀՀ ՆԳՆ Ոստիկանության հաստատմանը:

Երթևեկության կառավարման պլանը (ԵԿՊ) մի փաստաթուղթ է, որը վերլուծում է բոլոր հարակից տարրերն ու ռիսկերը, որոնք կարող են ազդել աշխատանքների վրա:

ԵԿՊ օգտագործվում է գոյություն ունեցող ճանապարհային ցանցի և դրա օգտագործողների կառավարումը նկարագրելու համար՝ առավելագույնի հասցնելու անվտանգությունը, արդյունավետությունը և հուսալիությունը:

ԵԿՊ-ի նպատակն է՝ օգտագործելով ժամանակակից անվտանգության նախագծման սկզբունքները և համապատասխան օրենսդրությանը համապատասխանելը, օպտիմալացնել ճանապարհների տարածքի բաշխումը, հնարավորինս ապահովելով երթևեկության և հետիոտների արդյունավետ հոսքը՝ միաժամանակ պաշտպանելով ճանապարհների խոցելի օգտվողներին:

Շինարարական աշխատանքների ընթացքում ճանապարհի կառավարումը բարդ աշխատանք է, որը ներառում է բազմաթիվ խնդիրներ. ուղևորների, ավտոբուսների, բեռնափոխադրումների և զբոսաշրջիկների շարժի կառավարում, տրանսպորտի և տրանսպորտային միջոցների բոլոր տարբերակների միջոցների կառավարումը:

2.7. Երթևեկության կառավարման պլան

- Շինարարական հրապարակ մուտք և ելք
- Երթևեկության կառավարման նշանների տեղադրում
- Շինարարական երթևեկության / ճանապարհների փակման ուղղություն
- Երթևեկության կառավարման արագության սահմանափակումներ.
- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- Շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարասյուններով և սահմանափակ արագությամբ (≤ 30)

կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1. Ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրված տեղամասերի վերաբերյալ

«Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրը նախատեսվում է կառուցել Տավուշի մարզ, Դիլիջան քաղաքի Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում: Տարածքը համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի կառուցապատված չի:

Հետազոտվող տեղամասը գտնվում է ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան քաղաքի արևելյան եզրին, հյուսիս-արևելյան մասում՝ Շահումյան և Սայաթ-Նովա փողոցների հատումից հյուսիս-արևելք::

Տեղամասի բացարձակ բարձրությունը տատանվում է 1196.5-1234.5 մ սահաններում: Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում Դիլիջան քաղաքի համանուն ներլեռնային գոգահովիտում: Քաղաքը ձգված է Աղստև գետի աջ ափին 4,5կմ երկարությամբ և 1,3կմ լայնությամբ: Մեծ տարածում ունեն սողանքային և դարավանդային հարթակներ: Նշված տեղամասերը իրարից բաժանվում են լեռնային զանգվածներով, անտառածածկ զառիթափ լանջերով, կամ դարավանդներով: Դիլիջանի գոգավորությունը տեղադրված է Աղստև գետի միջին հոսանքում՝ Բլդան և Գետիկ գետերի միջև: Հարավից այն սահմանափակվում է Փամբակ և Արեգունի լեռնաշղթաներով, իսկ հյուսիսից՝ Գուգարաց լեռներով:

Տարածքում հորատման աշխատանքների ընթացքում կոմունիկացիոն հաղորդակցուղիներ չեն բացահայտվել:

Ջրագրությունում գլխավոր դերը պատկանում է Աղստև գետին, որը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայից 3000մ բացարձակ բարձրությունից: Ուսումնասիրված տարածքում գետի ջրավազանը ունի լեռնային ռելիեֆի բնույթ: Նրան շրջապատում են հարավից Փամբակի, իսկ հյուսիսից՝ Խալաբի լեռնաշղթաները: Գետի ջրային ռեժիմը բնութագրվում է գարնանային բարձր մակարդակով՝ գետավարարումներով, որը սկսվում է ապրիլ-մայիս ամիսների սկզբից, որից հետո ամառային-ձմեռային ամիսներին տեղի է ունենում գետաջրերի զգալի պակասեցում: Գետի ջրային ռեժիմի նման փոփոխությունը

իր ազդեցությունն է թողնում տարածքի էկզոգեն, պրոցեսների զարգացման վրա:

Գրունտային ջրերը տեղամասում հայտնաբերվել են 9.5-12.5 մետրերի միջակայքում:

Ստորգետնյա ջրերը ըստ նրանց տեղադրման, սնման և բեռնաթափման պայմանների պատկանում են գրունտային տեսակին: Ըստ արխիվային տվյալների, ուսումնասիրվող տարածքի կենտրոնական և հյուսիսային մասում, ստորգետնյա ջրերը տեղադրված են 15-20 մետր խորության վրա:

3.2. Երկրաբանական պայմանները

Ուսումնասիրվող տարածքը պատկանում է Կրասնոսելսկ-Դիլիջան սինկլինալային գոտուն, գտնվում է Ձկնագետ-Ֆիոլետովո-Վերին Չիչխան անտիկլինալից հյուսիս և հանդիսանում է Շիրակ-Սևան սինկլինորիումի խոշոր կառուցվածքային տարրերից մեկը: Սինկլինալի առանցքային գիծն ունի հյուսիս-արևմտյան տարածում: Դիլիջան քաղաքի շրջակայքում սինկլինալը նեղանում է, միջուկում պահպանելով վերին օլիգոգեն-ստորին միոգենի ավազակավային ու կոնգլոմերատային նստվածքներ:

Վիրահայոց-Ղարաբաղի ոչ խորքային բեկվածքը, հանդիսանալով խոշոր խզվածքային խախտում, Դիլիջան քաղաքի մոտ ունի վերնետա-վրաշարժային բնույթ: Նրա երկայնքով վերին էոգենի հրաբխաբեկորային ապարները վերաշարժված են վերին օլիգոգենի - ստորին միոգենի ածխաբեր մոլասային շերտախմբի վրա: Նշված բեկվածքից հարավ անցնում է Ստեփանավան-Դիլիջան բեկվածքը:

Տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանները պարզաբանելու նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Նախկինում տվյալ և հարակից տարածքներում տարբեր նախագծա-հետազոտական և գիտա-արտադրական կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների հաշվետու նյութերի հավաքում, վերլուծություն և ընդհանրացում:
2. Հետազոտվող տեղամասի, հարակից տարածքների և շինհրապարակի մանրամասն ինժեներա-երկրաբանական տեղագնում:
3. Տեղամասի մինչ 25.0 մ հզորությամբ ստվարաշերտի ուսումնասիրություն՝ հորատման մեթոդով:
4. Հավաքած և դաշտային նյութերի կամերալ մշակում և սույն եզրակացության կազմում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքը:

Ուսումնասիրվող տարածքի հնագույն նստվածքներն են հանդիսանում Սենոնի կրաքարերը: Կրաքարի ամենահաստ նստվածքները մերկանում են շրջանի հարավ-արևմտյան մասում, որտեղ դրանք կազմում են խոշոր անտիկլինալ ծալքի միջուկը:

Կրաքարերն ունեն հին, խիստ տեղաշարժված ապարների տեսք, որոնք ձևավորում են փոքր տեղական ծալքեր և ջարդված են բազմակի տեկտոնական ճեղքերով, ունենալով 25-30°-ով տարածաշրջանային անկում դեպի հյուսիս-արևմուտք: Դրանց տեսանելի հզորությունը հասնում է 300 մետրի:

Տարածքում ամենալայն տարածումն ունի էոցենի հրաբխա-նստվածքային ստվարաշերտը. այն կազմավորում է վերևում նշված անտիկլինալ ծալքի հյուսիսային թևը, տրանսգրեսիվ ձևով և որոշակի անկյունային աններդաշնակությամբ ծածկելով Սենոնի կրաքարերը: Նրան կարելի է հետևել մերձլայնական տարածմամբ մի գոտու ուղղությամբ՝ սկսած Լերմոնտով գյուղից մինչև Սևանա լիճը:

Էոցենի նստվածքները ներկայացված են լիպարիտներով, քվարց-պորֆիրներով, նրանց տուֆերով, տուֆիտներով և տուֆի փշրաքարերով /տուֆաբեկչիաներով/: Էոցենի նստվածքների ստվարաշերտի գումարային հզորությունը կազմում է մինչև 3,5- 4 կմ:

Միջին էոցենի հրաբխածին ստվարաշերտի վրա տեղադրված է Օլիգոցենի՝ բավականին հզոր ավազաշերտաքարային ստվարաշերտը: Այն ներկայացված է կավերով, ալևրիտներով, ավազաքարերով և կոնգլոմերատներով: Հիշատակված նստվածքները զարգացած են ք.Դիլիջանից դեպի հյուսիս, Աղստև գետահովտի երկայնքով, և դիտվում են դեպի արևելք ընկած ուղղությամբ:

Ինտրուզիվ ապարները ներկայացված են երկու համալիրներով՝ ալկալիական և գրանոդիորիտային: Ինտրուզիվների հասակը որոշվել է որպես հետ-էոցենային-նախաօլիգոցենային, քանի որ դրանք պատռում են էոցենի ստվարաշերտը, բայց չեն խախտում օլիգոցենային հասակի գոյացումները: Ալկալիական համալիրը ներկայացված է սիենիտային կազմի խոշոր ինտրուզիվով, որին կարելի է հետևել 7-8 կմ երկարության սահմաններում՝ տարածման ուղղությամբ: Այն գտնվում է շրջանի հյուսիս-արևմտյան մասում և համընկնում է Աղստև և Բլրան գետերի ջրբաժանային մասի հետ:

Գրանդիտորիտային համալիրը մերկանում է խոշոր ինտրուզիայի տեսքով, որը հայտնի է Գոլովինսկայա անվանումով և գտնվում է շրջանի հարավ-արևելյան մասում: Այն ձգված է հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք ուղղությամբ:

Չորրորդական նստվածքները ներկայացված են ալյուվիալ-դելյուվիալ և պրոլյուվիալ նստվածքներով, որոնք կազմում են Աղստև գետի մի շարք հնագույն դարավանդները, գետահովիտների ողողահունները և լանջերի ծածկերը: Լեռնալանջեր, կիրճեր, դարավանդների մակերևույթներ և լանջեր ծածկող դելյուվին հիմնականում ներկայացված է կավերի, ավազակավերի, կավավազների խայտաբղետ շարքով, որոնք երբեմն պարունակում են բեկորային նյութի զգալի քանակություն: Դելյուվիալ գոյացումների հզորությունը տատանվում է բավականին լայն սահաններում, տեղ-տեղ հասնելով մինչև 50 մետր կամ ավելի: Գետաբերուկը /ալյուվին/ ունի էական տարածում. այն ծածկում է հովտի հատակը, որով հոսում է Աղստև գետը: Մեծագլաքարերը և ճալաքարերը ներկայացված են հիմնականում դիորիտներով, սիենիտներով, տուֆագեններով, կրաքարերով և այլ ապարներով:

Երկրաբանական վտանգավոր պրոցեսները

Վտանգավոր ինժեներաերկրաբանական պրոցեսներ, ներկայացված են սելավներով, հեղեղվող տեղամասերով և հիմնականում սողանքներով:

Դիլիջան քաղաքի ամբողջ տարածքում սողանքային երևույթներ զարգանում են երկար ժամանակի ընթացքում և իրենցից ներկայացնում են առաջադիմական գործընթաց, որը խոչնդոտում է տարածքների տնտեսական օգտագործումը:

Գրունտային ջրերի հայտնաբերման (BH-2-6) տարածքից ավելի ներքև տեղադրված հորատանցքերն անցել են չոր կամ սակավ խոնավությամբ ապարների միջով՝ մինչև արմատական ապարները՝ ջրին չհանդիպելով: Դավկայում է այն մասին, որ մինչև 7 մետր հետազոտման խորությունում սողանքային դարավանդի մարմնում չկա լանջով ի վայր գրունտային ջրի հոսք:

Լանջերից դեպի դարավանդի հարթակը հասնող ջրերի մեծ զանգվածը ներթափանցում է արմատական ապարի ճեղքերով դեպի խորքը, սողանքային լանջեր կազմավորող տուֆաբրեկչիանների փափկեցման շնորհիվ ստեղծելով սահքի մակերևույթներ:

Հետազոտման տարածքը (տես՝ Երկրաբանական քարտեզը) ենթարկված է սողանքային պրոցեսներին և բնութագրվում է բնորոշ սողանքային ռելիեֆով՝ նրա կառուցվածքային և ուրիշ հատկանիշների առկայությամբ: Տեղամասի ընդհանուր լանջը նույնպես համընկնում է «Կաղնի Խաչ» հնագույն սողանքային

մարմնի հետ, որի ակտիվությունը կասեցվել է սողանքային մարմնի լեզվակային մասում՝ դրենաժային թունելի կառուցումից հետո:

Սողանքների զարգացումը ընթացել է մի քանի փուլերով, որոնք արտացոլվում են սողանքային մարմնի մեջ և դիտվում են հետազոտման տեղամասի լանջում: Սողանքային տեղաշարժերի արտահայտմանը նպաստող հիմնական գործոնների շարքից են՝ հետազոտվող տարածքի լանջը սնող ջրերը: Այնուամենայնիվ, նրանք չեն հայտնաբերվել հորոտանցքերում մինչև 7 մետր խորության սահմաններում:

3.3. Տարածքի ինժեներակրաբանական և ջրաերկրաբանական ընդհանուր բնութագիրը

Ուսումնասիրված տարածքում արմատական ապարները ներկայացված են ներժայթքային ֆորմացիայով՝ գրանիտոիդներով և ենթահրաբխային ապարներով, որոնք միջին և վերին էոցենի հասակի են: Գրանիտոիդները հիմնականում ամուր, զանգվածային, իսկ առանձին տեղամասերում զգալի ճեղքավորված և հոլմնահարված են: Ենթահրաբխային ինտրուզիաները ներկայացված են հիմնականում կվարցիտային պորֆիրիտներով, դացիտներով, կերատոֆիրներով և այլն: Ապարները հիմնականում ամուր, թույլ ճեղքավոր, հիդրոթերմալ փոփոխված են: Հանդիպում են տուֆոբեկչիաներ, պորֆիրիտային բեկչիաներ, տուֆաավազաքարեր, տուֆակոնգլոմերատներ: Մակերևութային նստվածքները ներկայացված են երկու տեսակի ֆորմացիաներով՝ ա) լեռնալանջերի, բ) գետահովիտների:

Լեռնալանջերի ֆորմացիան՝ ներկայացված է էլուվիալ-դելուվիալ ապարների համալիրով, հանդիպում են հիմնականում լեռնալանջերում և ներկայացված են ավազակավերով, կավերով, կավավազներով, որոնք ներփակված են արմատական ապարներից խիճերով և խճավազներով: Տարածքի գեոմորֆոլոգիական բնութագիրը պայմանավորված է Աղստև գետի հովիտով, որն ունի ասիմետրիկ կառուցվածք և համաձայան Ա.Պ. Դեմյոխինի ունի մոտ 8 դարավանդներ: Առաջին դարավանդը զբաղեցնում է գետի գետափնյա մասը (ոլողադաշտը) և ունի մինչև 1մ բարձրություն: Երկրորդ դարավանդի բարձրությունը գետի մակարդակից բարձր է մոտ 10-15մ, երրորդ, չորրորդը և հինգերորդը՝ համապատասխանաբար ունեն 20-40 և 60-80մ բարձրություններ: Տվյալ դեպքում դարավանդների առկայությունը և նրանց ռելիեֆների ձևավորումը պայմանավորված է երկրաբանական պրոցեսներով,

որոնք տեղի են ունեցել սկսած էոցենից մինչև ժամանակակից դարաշրջանը ներառյալ:


Տարածքի ջրաերկրաբանական պայմանները. Ուսումնասիրված և հարակից տարածքներում հայտնի են տարբեր տեսակի, տարբեր դինամիկայի և տարբեր քիմիական կազմի ջրեր: Նախկին ուսումնասիրողների կողմից կատարված ջրաերկրաբանական աշխատանքների արդյունքների հիման վրա տարածքում դասակարգված են հետևյալ ջրատար հորիզոնները՝ (1) չորրորդական հասակի նստվածքներում, (2) նստվածքային և հրաբխանստվածքային ապարներում և վերջապես (3) պալեոգեն-նեոգեն հասակի ինտրուզիվ (ներժայթքային) ապարների հաստվածքում: Ինչպես ցույց են տալիս նոր ստացված տվյալները ուսումնասիրված տեղամաս 2-ում հիմնականում առկա են առաջին դասին պատկանող ջրատար հորիզոններ, որոնք ներկայացված են ժամանակակից և չորրորդական նստվածքներով: Մասնավորապես, այդ հորիզոնները առկա են Աղստևի ալուվիալ-պրոլուվիալ նստվածքներում, որոնք ներկայացված են ճալաքարա-կոպճային, ավազային և կավավազային ապարներով: Նրանց տեղադրման խորությունը տարածքում տատանվում է մինչև 2,5-4,0մ: Ստորերկրյա ջրերը հանդիպում են տարածքի դելուվիալ-էլուվիալ ապարներում, որոնք տարածված են լանջային տեղամասերում հանդիպում են կավավազային, ավազակավային, ճալաքարային գրունտներում: Ջրերը այդ ապարներում ծակոտկեն-շերտային բնույթի են: Որպես ջրամերժ շերտ հիմնականում հանդիսանում է Դիլիջանի շերտախումբը: Առանձին դեպքերում ջրատար հորիզոնները զբաղեցնում են բավականին զգալի տարածքներ: Ջրատար հորիզոնները սնվում են հիմնականում ինֆիլտրացիոն ճանապարհով՝ թույլ տեկտոնական գոտիներով, սողանքային հաստվածքներով և տարբեր լիթոլոգիական կազմի ապարների կոնտակտներով (հպումներով): Ջրատար հորիզոնները տարածքի նստվածքային և հրաբխային-նստվածքային ապարներում բացակայում են:

3.4. Սեյսմիկ բնութագիր

Նախատեսվող գործունեության տարածքը, համաձայն ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերում» ներառված սեյսմիկ վտանգի քարտեզի, գտնվում է II սեյսմիկ գոտում՝ $A_{max}=0.4g$ ազատ անկման g արագացման մասերով և 8-9 բալ սեյսմիկությամբ: Բացի այդ, լանջային տեղամասերը, որոնք թեքված են դեպի Աղստև գետի ժամանակակից հովիտը և ունեն մակերեսին մոտ գտնվող գրունտային ջրեր, գնահատվում են 9 բալից բարձր սեյսմիկ վտանգով:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև տարածքի բարդ տեկտոնական կառուցվածքը, խախտումների առկայությունը և հնասողանքային լանջերի հատումը, ինչպես նաև սողանքները, որոնք գտնվում են ժամանակավոր կայուն վիճակում:

Հայաստանի հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ



3.5. Զրագրություն

Աղստևը տարածքով հոսող ամենախոշոր գետն է: Այն սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Սկզբում մի փոքրիկ առվակ է, սակայն Դիլիջանի մոտ հորդանալով դառնում է ջրառատ գետ: Սնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից: Վտակներից հայտնի են Գետիկը և Ոսկեպարը, որոնցից առաջինը հոսում է Միափորի և Արեգունի լեռների միջև ընկած կիրճով: Խորությունը մեծ չէ, սակայն վարարումների ժամանակ դառնում է խիստ վտանգավոր:

Երկարությունը 133 կմ է, այդ թվում Հայաստանում 99 կմ: Ջրի ծախսը՝ 8,22 խմ/վ, հոսքը 256 միլիոն խմ:

Մինչև Գետիկ վտակին խառնվելն այն հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ, սակայն ապա փոխում է իր ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, հատում հանրապետության սահմանը և խառնվում Կուր գետին: Աղստևի ամենախոշոր վտակը՝ Գետիկը, հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ:

ՀՀ տարածքում Աղստևի վրա կառուցված է Բերքաբերի ջրամբարը, իսկ գետի ստորին հոսանքում՝ Աղստևի ջրամբարը:

Գետերը պատկանում են Կուր գետի ավազանին: Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունն է: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի հիմնական ուղղությունը հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք է: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղները հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ: Այս գետերը բնութագրվում են բարձր անկմամբ և թեքություններով, արագ հոսքով, քարի և ավազի բարձր պարունակությամբ, ինչպես նաև լեռնային գետերին բնորոշ ջրվեժներով և սահանքներով: Աղստևը պարկի տարածքով անցնող հիմնական գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի հյուսիսային լանջերից /Թեժ լեռ, 3101մ/: Գետի երկարությունը 121 կմ է, ավազանի մակերեսը՝ 2500 քառակուսի կիլոմետր, իսկ տարեկան հոսքը՝ 256 մլն խորանարդ մետր: Այն սնվում է ձնհալներից ու անձրևներից և առավելագույն հոսքը նկատվում է մայիսից մինչև հունիս: Գետի վերին հոսանքն անցնում է Մարգահովիտի գոգավորությունով, որը նեղ կիրճ է, ապա ընդլայնվում է՝ հոսելով անտառածածկ խորը կիրճով, անցնելով Դիլիջան և Իջևան քաղաքների միջով: Այնուհետև գետը անցնում է հարթավայրով, հատում Հայաստանի սահմանը և թափվում Քուր գետը: Աղստևի հիմնական վտակը Գետիկն է, իսկ Հովվաջուր, Շտողանաջուր, Հաղարծին և Բլդան գետակները փոքր վտակներ

են: Գետիկ գետը (58 կմ երկարությամբ և 586 քառակուսի կիլոմետր ավազանով) սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2620մ բարձրությունից, հոսելով Արեգունու և Միափորի միջլեռնային հովտով: Այն աջ կողմից թափվում է Աղստև գետը՝ Հաղարծին գյուղից 5 կմ ներքև, Աղստևի գետաբերանից 63 կմ հեռավորության վրա: ԴԱՊ-ը հայտնի է իր հանքային աղբյուրներով: Հատկանշական են Թթուջուրը (Գետիկ գետի հովտում), Մարգահովիտը (հարուստ է երկաթով), Ֆիոլետովոն (հարուստ է ածխածնով և կալցիումով) և Բլդանի աղբյուրները (որոնք հայտնի են «Դիլիջան» բրենդավորմամբ): Հիդրո-կարբոնատներով հարուստ այս ջրերը օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար:

Պարկը հայտնի է նաև իր լճակներով, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության վրա գտնվող Պարզ լիճն է, որն ընկած է Դիլիջան քաղաքից

8 կմ հյուսիս-արևելք: Պարզ լիճը զբաղեցնում է 2 հա մակերես, երկարությունը 250մ է, լայնությունը՝ 70մ, միջին խորությունը՝ 6մ, ջրի ծավալը՝ 83,8 հազ. մ3, իսկ ջրհավաք ավազանը՝ 1,52 կմ2: Հաջորդը՝ Գոշալիճն է (Տգրկա), որը գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա:

Այն ունի 56մ երկարություն և 270մ լայնություն, մակերեսը 1,53 հա է, ջրբաժան հատվածի մակերեսը՝ 1,34 կմ2 է, իսկ միջին խորությունը՝ 6մ: Պարկում կան նաև մի քանի փոքրիկ լճակեր:

3.6. Կլիմայական պայմաններ

3.6.1 Օդերևութաբանական-կլիմայական պայմանները

Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանական-կլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնյա շերտում, վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսանկյունից:

«Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում» կառուցման ընթացքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են իրականացվող շինարարական/կառուցապատման աշխատանքները և ավտոտրանսպորտային միջոցները:

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի որակը /աղտոտվածությունը/ վերահսկում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը մթնոլորտն աղտոտող նյութերի

պարունակություններն որոշելու համար 2024 թվականին մթնոլորտային օդի դիտարկումներ է իրականացրել Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

Դիլիջանն առանձնանում է մեղմ լեռնաանտառային կլիմայով, որին բնորոշ է չոր և տաք եղանակ ամբողջ տարվա ընթացքում: Օդի միջին սեզոնային ջերմաստիճանի տատանումները կազմում են -1.4°C հունվարին մինչև 18.5°C հուլիսին, իսկ միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 8.4°C : Բնութագրվում է մեղմ ամառներով (բացարձակ մաքսիմումը հասնում է $+38.1^{\circ}\text{C}$), համեմատաբար ցուրտ ձմեռներով (բացարձակ մինիմումը ոչ ցածր քան -22.8°C): Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 8.4°C :

Դիլիջանին բնորոշ է խոնավ լեռնային կլիմա: Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին կազմում է 158 մմ, իսկ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ 458 մմ: Մթնոլորտային տեղումների առավելագույն քանակը դիտվում է մայիս ամսին՝ 107 մմ, նվազագույնը դեկտեմբերին՝ 21 մմ: Տեղումների տարեկան քանակը կազմում է 656 մմ:

Արևափայլի միջին տարեկան տևողությունը Դիլիջանում կազմում է 1860 ժամ, իսկ օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 73%: Ձյունածածկույթի միջին բարձրությունը 18 սմ է, իսկ առավելագույն տասնօրյակի բարձրությունը՝ 53 սմ:

Շրջանում գերակայում են ձմռան ամիսներին՝ հարավային, իսկ ամռան ամիսներին՝ հյուսիս-արևելյան քամիները: Քամու միջին արագություններից առավելագույնը հունվարին կազմում է 2.8 մ/վրկ: Ամպրոպներով օրերի քանակը տարվա ընթացքում կազմում է 15-20:

3.6.2 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝ գ կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից գ կլիմայի

գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 3.1-ում:

Աղյուսակ 3.1 Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Կլիմայի գործոնը	Հարմարավետություն	Անհարմարավետություն	
		գերտաքացում	սառեցում
Օդի ջերմաստիճան, °C	12-14	24-ից բարձր	30-35, 1.5 մ/վրկ, քամու դեպքում 25, 2.0 մ/վրկ, քամու դեպքում -15, 3.5 մ/վրկ, քամու դեպքում
Քամու արագություն, մ/վրկ	0.5 -3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջձրմաստիճանի դեպքում
Հարաբերական խոնավություն, %	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

Դիլիջան քաղաքի օդերևութաբանական պարամետրերը վերցված են «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» տվյալների համաձայն:

Աղյուսակ 3.2. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Դիլիջան	-1.4	-0.7	2.5	7.8	12.1	15.5	18.5	18.3	14.4	9.4	4.4	0.4	8.4	-22.8	38.1

Աղյուսակ 3.3 Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ.ա. / մ.ն.	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Դիլիջան	մ.ա.	4.9	5.5	9.1	14.8	19.1	22.4	24.8	25.0	21.3	16.7	11.0	6.7	15.1
	մ.ն.	-5.7	-5.2	-2.3	2.5	6.5	9.8	13.0	12.5	9.1	4.3	0.0	-3.8	3.4

Աղյուսակ 3.4 Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
		3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	
1	2													15
Դիլիջան	ա	19.4	19.1	25.3	30.0	31.6	34.7	35.5	38.1	35.7	31.4	25.7	21.8	38.1
	ն	-22.8	-21.7	-19.3	-11.8	-4.6	0.0	4.5	3.0	-2.1	-9.5	-15.3	-19.5	-22.8

Աղյուսակ 3.5 Ձմռան ($\leq 0^{\circ}\text{C}$) սկիզբը, վերջը

Բնակավայրի անվանումը	Սկիզբ	Վերջ
1	2	3
Դիլիջան	19 դեկտեմբեր	25 փետրվար

Աղյուսակ 3.6 Նշված սահմաններում օդի միջին օրական ջերմաստիճանով օրերի քանակը

Ջերմաստիճանների սահմանները	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
ջերմաստիճանային միջակայք, T, °C	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Դիլիջան												
-19.9-ից մինչև -15.0		0.02										

-14.9-ից մինչև -10.0	0.8	0.6	0.04								0.01	0.2
-9.9-ից մինչև -5.0	4.7	3.9	1.3	0.01							0.6	3.1
-4.9-ից մինչև 0.0	12.9	10.4	7.4	0.7						0.2	3.5	10.0
0.1-ից մինչև 5.0	9.9	10.0	13.1	6.3	0.3				0.1	3.5	12.4	12.5
5.1-ից մինչև 10.0	1.7	2.5	7.8	14.0	6.8	0.7	0.01		2.1	13.6	11.4	4.0
10.1-ից մինչև 15.0		0.05	0.9	7.9	19.3	12.3	2.6	3.0	15.3	12.6	1.8	0.3
15.1-ից մինչև 20.0			0.1	0.6	4.0	15.3	18.6	21.2	11.5	0.8	0.02	
20.1-ից մինչև 25.0					0.04	1.5	9.2	6.4	0.6	0.01		
25.1-ից մինչև 30.0							0.01					

Աղյուսակ 3.7 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Դիլիջան										
Դեկտեմբեր	0.3	6								
Հունվար	1.0	9	0.1	2						
Փետրվար	1.1	10	0.1	2						

Աղյուսակ 3.8 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)			
	≥25	≥30	≥35	≥40

	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8
Դիլիջան								
Հունիս	7.5	26	0.5	4				
Հուլիս	15.3	30	2.2	21	0.03	1		
Օգոստոս	16.9	31	3.5	25	0.1	2		

Աղյուսակ 3.9 Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները /°C/ (առավելագույնի միջինը՝ ա.մ., և նվազագույնի միջինը՝ ն.մ.)

Բնակավայրի անվանումը	ա.մ. / ն.մ.	ըստ ամիսների												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
		3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Դիլիջան	ա.մ.	11.5	12.7	17.5	23.2	26.4	28.4	30.3	30.4	28.9	25.5	20.1	14.5	31.9
	ն.մ.	-13.8	-14.0	-10.7	-3.7	1.2	4.7	8.0	8.0	3.3	-1.7	-7.4	-11.9	-16.3

Աղյուսակ 3.10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %
----------------------	----------------------------------

	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Դիլիջան	65	65	69	72	78	78	76	76	79	78	73	67	73	65	51	76	61

Աղյուսակ 3.11 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական		Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Տեղումների քանակը	մմ օրական առավելագույն		
	ըստ ամիսների	Տարեկան		

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Դիլիջան	23	30	48	68	107	104	70	52	46	51	36	21	656	158	498
	35	33	42	42	58	74	45	47	40	45	44	33	74		

Աղյուսակ 3.12 Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
Դիլիջան	53	57	103	47

Աղյուսակ 3.13 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %	ըստ ուղղությունների	Անդորրի կրկնելի	Միջին ամսական	Գերակշռող ուղղությունը հունիս	Միջին արագություններից նվազագույնը ըստ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր	Միջին արագություններից առավելագույնը
----------------------	---------	--------------------	---------------------	-----------------	---------------	-------------------------------	--	----------------------------------	--------------------------------------

		Միջին արագությունը, մ/վ								ությ ունը , %	արա գությ ունը, մ/վ	- օգոստ ոս ամիսն երին	ուղղությո ւնների հուլիսին, մ/վ	մբեր - փետրվ ար ամիսն երին	ըստ ուղղությո ւնների հունվարի ն, մ/վ
		Հյ ու սի ս այ ին	Հյ ո ւ ս ի ս - ա ր և ե լ ա ն	Ա ր և ե լ ա ն	Հ ա ր ա վ- ա ր և ե լ ա ն	Հ ա ր ա վ ա յ ի ն	Հ ա ր ա վ- ա ր և մ տ յ ա ն	Ա ր և մ տ յ ա ն	Հյո ւսի ս- ար և մ տ յ ա ն						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Դիլիջան	հունվար	3	19	2	3	22	32	15	4	28	2.1	ՀսԱրլ	2.5	Հվ	2.8
		1.6	1.7	1.8	2.4	2.8	2.5	2.0	1.5						
	ապրիլ	4	41	6	4	13	20	9	3	31	2.0				
		1.6	2.2	2.0	2.4	2.5	2.3	1.6	1.5						
	հուլիս	5	63	10	2	2	7	8	3	42	1.7				

		1.9	2.5	2.4	1.4	1.4	1.3	1.1	1.4						
	հոկտեմբեր	5	46	6	3	10	17	10	3	43	1.5				
	ր	1.7	2.2	1.9	1.7	1.9	1.7	1.4	1.4						

Աղյուսակ 3.14 Քամու հաշվարկային արագությունը

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարե կան արագ ություն ը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
1	2	3	4	5	6	7
Դիլիջան	875.2	1.5	3	21	22	24

Աղյուսակ 3.15 Ուժեղ քամիներով օրերի քանակը

	Ամսական միջին արժեքները, օր	Տարեկան
Բնակավայրի անվանումը		

	Հուն վար	Փե տր վա ր	Մա րտ	Ապ րիլ	Մայ իս	Հուն իս	Հուլ իս	Օգոս տոս	Սեպ տեմ բեր	Հոկտ եմբե ր	Նոյե մբե ր	Դեկ տեմ բեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	0.7	0.6	0.2	0.2	0.1	0.09	0.1	0.1	0.09	0.4	0.3	0.0	3

Աղյուսակ 3.16 Զեռուցման ժամանակահատվածի սկիզբը, վերջը

Բնակավայրի անվանումը	Զերմաստիճան	Սկիզբ	Վերջ
1	2	3	4
Դիլիջան	≤ 8°C	25 հոկտեմբեր	17 ապրիլ
	≤ 10°C	8 հոկտեմբեր	29 ապրիլ

Աղյուսակ 3.17 Էներգալիա (ջերմապարունակություն)

Բնակավայրի անվանումը	Ամսական միջին արժեքը, ԿՋ/կգ											
	Հու նվ ար	Փե տր վա ր	Մ ար տ	Ա պր իլ	Մա յիս	Հու նիս	Հուլ իս	Օգո ստո ս	Սեպ տեմ բեր	Հոկ տեմ բեր	Նոյ եմբ եր	Դեկ տեմ բեր
	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Դիլիջան	4.8	5.9	11.5	21. 2	31.6	40. 0	47.6	46.7	37.3	25.6	15.2	7.9

Աղյուսակ 3.18 Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C									
	ամենատաք օրվա միջին օրական ջերմաստիճանը		ամենա շոգ ամսվա միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) առավելագույն ջերմաստիճանը						դիտարկված բացարձակ առավելագույնը
				ապահովվածություն, %						
	0.99	0.95		1	2	5	10	20	50	
	2	3		4	5	6	7	8	9	
Դիլիջան	26	25	19.0	38	38	36	35	34	32	38

Աղյուսակ 3.19 Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 2)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C													
	օրական տատանումը								միջին օրական առավելագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում					
	առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում						ամենա տաք ամսվա միջին օրական տատանումը	ամենա տաք ամսվա առավելագույն օրական տատանումը						
	«ո»													
	2	5	10	20	50	100			2	5	10	20	50	100
1	2	3	4	5	6	7			8	9	10	11	12	13
Դիլիջան	20	22	23	24	25	26	11.8	24.2	23	24	24	25	25	26

Աղյուսակ 3.20 Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														
	ամենացուրտ օրվա			ամենացուրտ հնգօրյակի			ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	ամենացուրտ ամիսների միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						Դիտարկված նվազագույնը
									ապահովվածություն, %						
	0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92			1	2	5	10	20	50	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Դիլիջան	-15	-15	-14	-13	-12	-11	-0.6	-2.5	-24	-23	-21	-20	-18	-16	-23

Աղյուսակ 3.21 Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 2)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C													
	օրական տատանումը							միջին օրական նվազագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում						
	առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «ո» տարիների ընթացքում						ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը							
	«ո»							«ո»						
	2	5	10	20	50	100		2	5	10	20	50	100	
	1	2	3	4	5	6		7	8	9	10	11	12	13
Դիլիջան	19	21	22	23	24	25		10.6	-10	-12	-14	-15	-16	-17

Աղյուսակ 3.22 Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 3)

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C		
	Տևողությունը, օր		
	Միջին ջերմաստիճանը ժամա- նակահատվածի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր, °C		
	0	8	10
1	2	3	4
Դիլիջան	69	175	204
	-0.9	1.9	2.9

Աղյուսակ 3.23 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևո ղու թյու ն	Հունվ ար	Փետր վար	Մար տ	Ապրի լ	Մայի ս	Հունի ս	Հուլի ս	Օգոս տոս	Սեպ տեմբ եր	Հոկտ եմբե ր	Նոյեմ բեր	Դեկտ եմբե ր	Տարե կան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Դիլիջան	ժ	118	129	145	136	164	206	199	194	185	143	126	115	1860
	օր	7	5	6	6	4	2	3	4	3	6	6	6	58

Աղյուսակ 3.24 Դիլիջան համայնքի բարձրությունը ծովի մակարդակից, կլիմայական շրջանը և դիտարկումների ժամանակահատվածը

Բնակավայրի անվանում	Բարձրություն ծովի մակար դակից, մ	Կլիմայական շրջան	Դիտարկումների ժամանակահատված	
			Սկիզբ	Վերջ
2	3	4	5	6
Դիլիջան	1256	Չափավոր	1936	2020

3.7. Կենսաբազմազանություն

3.7.1 Բուսական աշխարհ

Ըստ ՀՀ Ատլասի (2007 թ.) Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքը գտնվում է բուսական Կովկասյան պրովինցիայում՝ Իջևանի շրջանում: Դիլիջան քաղաքային բնակավայրում և մոտակայքում բույսերի էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել: Այստեղ տարածված են կաթնափուշ բժավոր (*Sylibum Marianum*) բուսատեսակներ: Դիլիջանում տարածված են դեղաբույսեր՝ ալոնների մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus Atrosanguinea*), գետնամորի անտառային (*Fragaria Veska*):

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ: Նշված տեսակներից 7-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր բույսերի 958 տեսակներ (դրանցից 225-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պահպանական գոտում (Աղստև գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելուս Փամբակի (*Psephellus pambakensis*), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Ազգային պարկի ֆլորայի 54 տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր: Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ 41 տեսակներ ուտելի են: Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից 320-ը պատկանում են ագարիկալ սնկերին, 124-ը՝ աֆիլոֆորայիններին և 36-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (*Russula*), կաթնասունկ (*Lactarius*), սարդոստայնասունկ (*Cortinarius*), թելկասունկ (*Inocybe*), ճանճասպան (*Amanita*) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող ականջասունկ սովորական (*Pleurotus ostreatus*), կոճղասունկ իսկական (*Armillaria mellea*) տեսակները և Աբեթասնկեր (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից 176-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*) տեսակը: 38 տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսափում են հավաքելուց, և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

3.7.2 Անտառ

Տարածաշրջանի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառէջ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Սրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca*) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամիսենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տիլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սզնու տարբեր տեսակներ (*Crataegus*), գլեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռչենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսհայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառէջ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (դաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ: «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnowskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Աբեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, Ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ գարշահոտ (*J. foetidissima*)

գիհները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրած (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

«Դիլիջան» ազգային պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական (*Berberis vulgaris*), չմենի ամբողջաեզր (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փռչնի կովկասյան (*Celtis caucasica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (*Bothriochloa ischaemum*) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառագուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: (1800)– (1900) մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ– հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակոտնուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավուկ մարգագետնայինը (*Poa pratensis*), դաշտավուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոզնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմրախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջաձևը (*Anemone fasciculata*), ձկին գորտնուկանմանը (*Trollius ranunculinus*) և կեղծ դանձլամեր սպիտակը (*Veratrum album*), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալպյան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալպյան բարձրախոտերի համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (*Lilium armenum*), ընձախոտ արևելյանը (*Aconitum orientale*), գիվան հսկայական (*Cephalaria gigantea*), ոզնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), զանգակ խմբվածը (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և այլն: «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ձորերի ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրագոնալ ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բռաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), ասպլենի (*Asplenium*) որոշ տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրաճահճային բուսականությունը, որի կազմում

են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ:

3.7.2 Կենդանական աշխարհ

Անողնաշարավորներ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են փափկամարմինների (*Mollusca*) 69 և հողվածոտանիների (*Arthropoda*) 143 տեսակներ: Վերջիններս պատկանում են միջատների (*Insecta*) դասին: Նշված տեսակներից 7-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ *Parnassius apollo* L., *Cerambyx cerdo acuminatus* Motsch., *Rosalia alpina* L. և *Proserpinus proserpina* Pall-ը:

Սողուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Սողեսներ (*Lacertilia*) – 12 տեսակ.
- Օձեր (*Serpentes*) – 6 տեսակ.
- Կրիաներ (*Testudines*) – 1:

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

Կաթնասուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (*Insectivora*) – 9 տեսակ.
- Կրծողներ (*Rodenti*) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (*Logomorpha*) – 1 տեսակ.
- Ձեռքաթևավորներ (*Chiroptera*) – 7 տեսակ.
- Գիշատիչներ (*Carnivora*) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (*Artiodactyla*) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 6-ը՝ Եվրոպական լայնական ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, խայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և անտառային կատուն:

Բուն գործունեության տարածքում Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

3.8. Օդային և ջրային ավազան

3.8.1 Ֆոնային աղտոտվածություն

Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Դիլիջան համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հաշվետվությունում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3.25-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Դիլիջան համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 23700 մարդ:

Հիմք ընդունելով «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկությունները¹ (Աղյուսակ 3.25), Դիլիջան համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշումասնիկներ՝ 0,095մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 1.1 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,033 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,006 մգ/մ³:

Աղյուսակ 3.25. Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

¹ ՀՀ որոշ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ (հնգամյա միջին): <http://meteomonitoring.am/page/1591>

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիան (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50-125	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
< 10	0.071	0.006	0.023	0.8

3.8.2 Զրային ավազան

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Զրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները ամփոփ 2024 տեղեկանքից բերված են ստորև:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում: Հյուսիսային ԶԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 21 դիտակետում:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին և դեկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն 2024 թվականին իրականացվել է 2 բնադբյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում N2058 դիտակետում ջրի ծախսը նվազել է՝ 0.53լ/վ-ից հասնելով 0.39 լ/վ: N2059 դիտակետում դիտվել է ջրի ծախսի կայունացում՝ 0.17լ/վ սահմաններում:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է N2058 բնադբյուրում, որտեղ հանքայնացման, նիտրատ, սուլֆատ և քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր աղբեցությունների նվազեցման և կանխարգելմանն ուղղված:

3.9. Սոցիալ-տնտեսական արդի վիճակը

3.9.1 Համայնքի ընդհանուր սոցիալական նկարագիր

Դիլիջան խոշորացված համայնքը ընդգրկում է մեկ քաղաքային (Դիլիջան քաղաք) և 6 գյուղական (Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան գյուղերը) բնակավայրեր: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 63316.93 հա, անտառային հողերը (ազգային պարկ) 5355.29 հա: Ըստ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022-2027թթ. զարգացման ծրագրի տվյալների համայնքի բնակչության թիվը կազմում է 27379 մարդ, որոնցից 52.6% կանայք են:

Համայնքի բնակչությունն ըստ զբաղվածության բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվող, պետական և տեղական ինքնակառավարման կառույցներում աշխատողներ, սպասարկման ոլորտում աշխատողներ և սեզոնային աշխատողներ: Գործազուրկների թիվը համայնքում գերազանցում է 1500:

Համայնքում առկա են 105 բազմաբնակարանային շենքեր (2753 բնակարան) և 8200-ից ավել առանձնատներ: Վերջին 20-30 տարում համայնքում բնակարանաշինություն գրեթե չի իրականացվել, իսկ բնակարանի կարիք ունեցողների թիվը տարեցտարի աճել է: Ներկա պահին քաղաքում բնակարանային կարիք ունեցող ընտանիքների թիվը գերազանցում է 500-ը: Նրանց մեծ մասը բնակվում է վարձակալությամբ:

3.9.1 Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն

Համայնքի տնտեսությունը կառուցված է երեք հիմնական բաղադրիչներից՝ փոքր համայնքային ձեռնարկություններ, մեծ և միջին ձեռնարկություններ և

գյուղատնտեսություն՝ փոքր ու մեծ ֆերմերային տնտեսություններ: Համայնքի տնտեսությունը, բացի աշխատատեղեր և ընդհանուր բարեկեցություն ապահովելուց, ունի մեկ այլ հիմնական գործառույթ՝ ապահովել բավարար միջոցներ սոցիալական հատվածի համաչափ զարգացման (կրթություն, առողջապահություն և այլն), ենթակառուցվածքների անխափան վիճակի (ճանապարհներ, գազի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարում և այլն) համար, ինչպես նաև հնարավորություն տալ բարելավելու էկոլոգիական իրավիճակը: Եթե համայնքի տնտեսությունը կարողանում է կատարել զարգացման համար նախատեսված ծախսերը համայնքի ներսում առկա կրթական, առողջապահական հաստատությունների, էկոլոգիական վիճակի, ենթակառուցվածքների կառուցման ու պահպանության վրա, ապա համայնքը զարգանում է որպես մեկ ամբողջական օրգանիզմ: Տնտեսությունը ստեղծում է հավելյալ արժեք, այն ծախսվում է համայնքի զարգացման վրա, իսկ համայնքն էլ ձեռնարկություններին ապահովում է որակյալ աշխատուժով, ենթակառուցվածքներով և այլ ռեսուրսներով:

Դիլիջան համայնքը՝ Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից մեկը, որտեղ վերջին տարիների ընթացքում իրականացվող նախագծերի արդյունքում նաև զարգանում է կրթական և մշակութային ոլորտները:

Ըստ զարգացման ծրագրի համայնքում գրանցված է 897 ձեռնարկություն, որոնց 419-ն հատ ձեռնարկատերերն են: Համայնքում գործում են 7 բանկի մասնաճյուղ: Համայնքում գործող կազմակերպությունների զգալի մասը՝ 589 ձեռնարկություն գործունեություն է իրականացնում առևտրի և մեքենաների ու մանր սարքավորումների վերանորոգման ոլորտում, 105-ը՝ հյուրանոցային և ռեստորանային ոլորտում, իսկ 88-ը՝ վերամշակման արդյունաբերությունում:

Համայնքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Դրանց մեջ առանձնանում է կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող «Դիլի» ՍՊԸ-ն: Մեկ այլ համայնքի տեսանկյունից մասշտաբային տեղական արտադրություն էկազմակերպում «ԱԿՈԼ» ՍՊԸ-ն, որը ՀՆՁԱՆ ապրանքանիշի ներքո արտադրում է մրգային օղիներ և բնական հյութեր:

Հարկ է նշել, որ համայնքում տարեցտարի ավելանում և բարելավվում է տուրիզմի և ռեստորանային ոլորտը, այդ թվում ընտանեկան աճել է նաև ընտանեկան տուրիզմով զբաղվող կազմակերպությունների թիվը:

Խոշոր կազմակերպությունները հիմնականում գործում են ֆինանսական և կրթական ոլորտներում: Համայնքում 2013թ.-ից գործում է ՀՀ Կենտրոնական Բանկի ուսումնահետազոտական կենտրոնը, 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը, 2014թ.-ից՝ «Դիլիջան

ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը: 2017թ.-ին համայնքում բացվեց Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը: Վերը նշված կազմակերպություններում և համայնքում գործող ֆինանսական կազմակերպություններում աշխատում է մոտ 4,000 մարդ, որոնց 60%-ը չի հանդիսացել Դիլիջանի բնակիչ:

Դիլիջանը հայտնի է իր բուժիչ հանքային ջրերով, որոնք արդեն իսկ 19-րդ դարի վերջից բազմաթիվ հանգստացողներ են գրավել դեպի քաղաքի առողջարանները: Ներկայումս այդ հանքային ջրերը շալցվում են «Դիլիջան» հանքային ջրերի գործարանում, որը հիմնադրվել է 1947թ.-ին և հանդիսացել է ոչ միայն Հայաստանում, այլև ԽՍՀՄ ողջ տարածքում հանքային ջուր շալցնող ձեռնարկություններից առաջիններից մեկը: Գործարանը տարեկան արտադրում է ավելի քան 8 մլն. շիշ աղբյուրի հանքային ջուր:

3.9.3 Համայնքի զարգացման ծառայի

Ըստ ծրագրով սահմանված համայնքի զարգացման տեսլականի՝ համայնքի առաքելությունն է ապահովել առողջ և անվտանգ շրջակա միջավայր, որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և զբոսաշրջիկներին, ապահովել համայնքի բնականոն զարգացումը, դարձնելով Դիլիջանը բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար:

Այս տեսլականին հասնելու համար համայնքը ծրագրով սահմանված հիմնական նպատակներից են՝

- ✓ Դիլիջան համայնքի տարածքային համաչափ, կայուն զարգացումը և պլանավորումը:
- ✓ Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլանի ստեղծումը:
- ✓ Բնակչության կենսական շահերի ապահովումը:
- ✓ Բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը:
- ✓ Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը և այլն:

Համայնքի տնտեսության հիմնական շարժիչ ուժը զբոսաշրջությունն է: Գեղեցիկ բնությունը և մեղմ կլիմայի շնորհիվ Դիլիջանը երկար ժամանակ համարվել է պասիվ հանգստի և առողջարանային կենտրոն, սակայն օտարերկրյա զբոսաշրջիկների աճին զուգահեռ սկսել է զարգանալ նաև արկածային, էկո և ագրո տուրիզմի ուղղությունները:

Գործողությունների, աշխատանքների ստեղծման և ներդրումային հնարավորությունների առումով Դիլիջանի տնտեսական ներուժի գնահատումը ցույց է տալիս քաղաքի զարգացման թույլ և ուժեղ կողմերի, հնարավորությունների և

վտանգների ընդհանուր պատկերը՝ բացահայտելով քաղաքային ենթակառուցվածքների բացերը և կարիքները՝ բարձրացնելով նրա գրավչությունը, մասնավորապես տնտեսության և տուրիզմի զարգացման համար: Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծությունը, հանգեցնում են հնարավոր գործողությունների բացահայտմանը:

3.10. Բնության հուշարձաններ

ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14 N967-ն որոշմամբ Տավուշի մարզի տարածքում հաստատվել են բնության ութ հուշարձաններ.

Աղյուսակ 3.26. Բնության հուշարձաններ

	Հուշարձանի անունը	Տեղադիրքը
1.	Կովկասի փոխակերպարային թերթաքարեր	Տավուշի մարզ, Բերդ քաղաքից մոտ 20կմ հարավ՝ Վարագաջուր (Հախում) գետի վերին հոսանքի ավազանում, Վարագաջուրի ձախ վտակ Կառնուտի և Վարագաջուր գետի աջ չոր վտակի հատման կետում, Կառնուտ վտակի հոսանքն ի վերգնացող գրունտային ավտոճանապարհի աջ կողմում
2.	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 6կմ հարավ-արևմուտք, Վարագաջուր (Հախում) գետի ձախափնյա անտառապատ լանջին, գրունտային ճանապարհի աջ կողմում, 12-13 դարերի Շահմուրադ վանքային համալիրից մոտ 150մետր դեպի հյուսիս-արևմուտք:
3.	«Չինչինի ակունքային աններդաշնակություն»	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հարավ-արևելքային եզրին
4.	«Չինչինի սանդղափուլ քարափներ»	Տավուշի մարզ, Չինչին գյուղից ուղիղ գծով 1.5կմ հարավ-արևելք, Հախում գյուղի աջակողմյան լանջին:
5.	«Պլագիոգրանիտ-պորֆիրային դայք»	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5կմ հվ-արմ, Տավուշ գետի ձախ ափին, գետից 5 մ բարձրության վրա:
6.	«Քվարցային պլագիոպորֆիրների սյունաձև անջատումներ»	Տավուշի մարզ, Հովք գյուղից 900մ դեպի հս-ալ, Աղստեվ գետի ձախ ափին, Երևան-Իջևան ավտոճանապարհի ձախ կողմում:
7.	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից ի մարզ, Կողբ գյուղից 4կմ հարավ
8.	«Օձաքար» լեռ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3կմ (ուղիղ գծով 1կմ) հյուսիս-արևմուտք, Պառավաքար-Վազաշեն

		գրունտային ավտոճանապարհի աջ կողմում, Պառավաքար լեռնագագաթից 1.5 կմ հարավ-արևմուտք, Կաղնուտաթումբ լեռնագագաթից մոտ 3կմ հյուսիս-արևելք:
--	--	---

3.11. Կենսաբանական հուշարձաններ

Աղյուսակ 3.27. Կենսաբանական հուշարձաններ

	Հուշարձանի անունը	Տեղադիրքը
1.	«Ձորակապի սոսի»	Տավուշի մարզ, Ձորակապ գյուղական համայնքի վարչական սահմանում
2.	«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, Ակնաղբյուր գյուղական համայնք
3.	«Սարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, Սարիգյուղ գյուղական համայնք, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ
4.	«Գետահովտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովտ գյուղից մոտ 1.8 կմ հյուսիս-արևմուտք՝ Սառնաջուր գետի ձախ ափին
5.	«Զիկատարի տանձուտ»	Տավուշի մարզ, «Զիկատար» ուսումնական կենտրոնից հարավ-արևմուտք, 600մ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զիկատարի անտառպետություն
6.	«Ոսկեպարի կենի»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Զիկատարի անտառպետություն, Ոսկեպար համայնքից 6կմ հարավ-արևմուտք
7.	«Ջոնջոկուտ»	Տավուշի մարզ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Դովեղի անտառպետություն, Բարեկամավան համայնքից 1կմ հարավ-արևմուտք

3.12. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

«Դիլիջան» ազգային պարկը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի «Դիլիջան» ազգային պարկ կազմակերպելու մասին» N 165 որոշմամբ՝ Հայկական ՍՍԴ Մինիստրների սովետի 1958 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայկական ՍՍԴ բնության պահպանության մասին» օրենքի կիրառման մասին» N 341 որոշմամբ կազմակերպված «Դիլիջան» պետական արգելոցի և դրան հարակից տարածքների սահմաններում: «Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առեվտրային

կազմակերպության կանոնադրությունները հաստատելու են ՀՀ կառավարության 11 մայիսի 2002 թվականի N 920-Ն որոշումով:

Պարկի ստեղծման նպատակներն են՝

ա) Աղստև և Գետիկ գետերի ավազանների ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի ապահովումը, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանությունը.

բ) հյուսիսային Հայաստանին բնորոշ հազվագյուտ և անհետացող վայրի բույսերի ու կենդանիների տեսակների, գենոֆոնդի և դրանց ապրելու միջավայրի պահպանությունը.

գ) բնական լանդշաֆտների, դրանց առանձին տարրերի, բնական գործընթացների և երևույթների գիտական ուսումնասիրությունը՝ ուղղված պարկի տարածքի բնական էկոհամակարգերում ընթացող գործընթացների կանխատեսմանն ու գնահատմանը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ու բնության պահպանության գիտական հիմունքների մշակմանը, պարկին հարակից տարածքների համար բնության պահպանության և օգտագործման արդյունավետ ձևերի մշակման բազայի ապահովմանը:

Տեղամասից ավելի քան 3 կմ հեռավորության վրա գտնվող «Դիլիջան» ազգային պարկի տարածքում առկա են բազմաթիվ բույսեր և կենդանիներ, որոնք հաշվառված են ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում:

3.13. Բնական և մշակութային ժառանգություն

Բնական ժառանգության, որպես տուրիզմի և ռեկրեացիայի ռեսուրս, անկրկնելի օբյեկտներ են հանդիսանում Աղավնավանքի կենու պուրակը, Հաղարծնի հաճարկուտները, Խաչարձանի կաղնուտները, Պարզ և Գոշ լճերը:

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում, ըստ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1929-Ն որոշմամբ հաստատված պատմամշակութային հուշարձանների պետական ցուցակի, հաշվառված է 473 հուշարձան: 'Դիլիջան' ազգային պարկի կառավարման պլանի մշակման ընթացքում ցուցաբերվել է ընդհանրացված մոտեցում, որի դեպքում առանձին հուշարձաններ միավորվել են խմբերի մեջ: Այսպես, օրինակ՝ Դիլիջան քաղաքի վարչական տարածքում, ըստ վերը նշված ցուցակի, առկա է 72 ազգագրական բնակելի տուն, իսկ կառավարման պլանում դրանք խմբավորված են մեկ թաղամասում: Նույն մոտեցման արդյունքում 473 հաշվառված հուշարձանների փոխարեն ստացվել է 257, որը հուշարձանների պահպանության և շահագործման տեսակետից առավել

կառավարելի է: Համաձայն այս մոտեցման ‘Դիլիջան’ ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում առկա պատմության և մշակույթի հուշարձանները, այդ թվում՝ բնական հուշարձանները, դասակարգվում են^a 2 բնական հուշարձան, 3 քարեդարյան հնավայր, 9 քարայր կացարան, 8 քաղաքատեղի, 51 գյուղատեղի, 2 ազգագրական տների թաղամաս, 13 ամրոց, 4 կամուրջ, 1 մետաղագործական համալիր, 4 եկեղեցի, 4 վանական համալիր, 17 մատուռ, 23 խաչքարերի խումբ, 26 առանձին խաչքար, 4 աղբյուր հուշարձան, 2 երկրորդ համաշխարհայինի հերոսների հիշատակի հուշարձան, 2 դամբարանադաշտ, 48 գերազմանոց: Հուշարձանների ժամանակային բազմազանությունն ընդգրկում է մ.թ.ա. 60-50 հազարամյակից մինչև մ.թ. 20-րդ դարը ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ քարե դարի վաղ ժամանակներից մինչ մեր դարաշրջանը: Դրանք հավասարապես սփռված են ազգային պարկի ողջ տարածքով, իսկ ամենախիտ խմբավորումը գտնվում է Աղստև գետի ափերին և դրա վտակների միջին հոսանքում: Անշարժ հուշարձանների 99 %-ը գտնվում է ազգային պարկի բուն տարածքում և միայն 1 %-ը՝ դրա պահպանական գոտում: Ներկայացված հնագիտական և պատմամշակութային հուշարձանների զգալի մասը կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի զարգացման պատմական ընթացքում, հատկապես 12-13-րդ դարերում: Դրանց առկայությունը հնարավորություն է տալիս այստեղ կազմակերպել պատմամշակութային, ուսումնական ու գիտաճանաչողական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և տուրիզմի այլ ձևեր: Տավուշի մարզի Դիլիջան համայնքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը ներկայացված է Հավելված 6-ում

Դիլիջան քաղաքի «Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում «Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման համար նախատեսված տարածքում ծրագրի իրականացման ընթացքում հնագիտական և պատմա-մշակութային հուշարձանների վրա հնարավոր բացասական ազդեցության նախնական գնահատումը վկայում է, որ նախատեսվող գործունեությունը պատմա-մշակութային միավորների վրա հնարավոր բացասականազդեցության տեսանկյունից ռիսկեր չի պարունակում, քանի որ այստեղ նման միավորներ չեն փաստագրվել:

Դիլիջան քաղաքի «Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում «Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման համար նախատեսված տարածքում ծրագրի իրականացման ընթացքում հնագիտական և պատմա-մշակութային հուշարձանների վրա հնարավոր բացասական ազդեցության նախնական գնահատական-եզրակացությունը կցված է **Հավելված 7:**

4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

«ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծման աշխատանքների շրջանակում ուսումնասիրվել են մի շարք այլընտրանքային տարբերակներ՝ տարածքի արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման և սոցիալ-տնտեսական օգուտների համադրման նպատակով:

Նախագծի իրականացման տարածքում նախապես առկա են եղել ԽՍՀՄ ժամանակաշրջանի շինարարական հիմքեր, որոնք երկար տարիներ գտնվել են չօգտագործված վիճակում: Տարածքում վերջին տասնամյակներում բացակայում է կանաչապատումը, իսկ ներդրումային հետաքրքրություն չի ցուցաբերվել մինչև մեր ծրագրի իրականացումը:

Նախագծի մշակման ընթացքում առաջնային նպատակներից է եղել շրջակա միջավայրի բարելավումը: Դրան նպաստելու համար նախագծով առանձնացվել է տարածք՝ կանաչապատման և բարեկարգման աշխատանքների համար: Այդ հատվածում նախատեսվում է իրականացնել բնապահպանական բարձր ստանդարտներին համապատասխան լանդշաֆտային լուծումներ, որոնց մշակման և իրականացման աշխատանքները վստահվել են օտարերկրյա մասնագիտացված կազմակերպության:

Այլընտրանքային մոտեցումների ուսումնասիրության ընթացքում դիտարկվել է տարածքի շահագործման մի քանի տարբերակ՝ ներառյալ տարածքի բնական վիճակի պահպանումը կամ ավելի խիտ կառուցապատումը: Սակայն շրջակա միջավայրի պահպանության և համայնքի համար ավելի բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով ընտրվել է ներկայիս տարբերակը, որը համատեղում է բնակելի շինարարությունն ու կանաչ տարածքների ստեղծումը՝ նվազեցնելով շինարարական գործունեության հնարավոր բացասական ազդեցությունները:

Այսպիսով, նախագծի վերջնական տարբերակը նախատեսում է ոչ միայն բնակելի տարածքների զարգացում, այլև բնապահպանական միջոցառումներ, որոնք կիսթանեն շրջակա միջավայրի վերականգնմանը և համայնքի ընդհանուր բարելավմանը:»

Նախագծային լուծումները իրականացվել են տեխնիկական առաջադրանքի համապատասխան, որտեղ հստակ նշված են գործողությունների հերթականությունը, ինչպես նաև ճարտարապետահատակագծային առաջադրանքին համապատասխան: Նախագծային այլ լուծումներ չեն նախատեսվում:

4.1. Առանց ծրագրի այլընտրանք

«Առանց ծրագիր» այլընտրանքային տարբերակը կենսունակ չի համարվում, քանի որ նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցումը առաջնահերթ միտված է լուծելու սոցիալական խնդիր Դիլիջան համայնքի համար, որի ավարտին համայնքը կունենա ժամանակակից լուծումներով բնակելի համալիր:

«Առանց ծրագիր» տարբերակի դեպքում նախագծի իրականացման տարածքը կլինի նույն ԽՍՀՄ ժամանակահատվածից մնացած անհրապույր կիսաքանդ ու կիսավեր շինություններով տարածք, որը չի համապատասխանում համայնքի երկարաժամկետ զարգացման ռազմավարությանը

Ակնկալվում է, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում կշահեն, մասնավորապես՝ ՀՀ Տաուշի մարզի Դիլիջան համայնքի և հարևան համայնքների բնակիչները, քաղաք այցելող զբոսաշրջիկները և մարզում գործունեություն իրականացնող ձեռնարկությունները:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծման ընթացքում գնահատվել են շինարարական և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա ակնկալվող հնարավոր ազդեցությունները:

Կատարվել է շինարարական աշխատանքների նախապատրաստման, շինհրապարակների կազմակերպման և բուն շինարարության ժամանակ հավանական ազդեցությունների գնահատում և առաջարկվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Նախապատրաստական աշխատանքները նախատեսում են.

- օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, համաձայնությունների և ըստ անհրաժեշտության հավաստագրերի ձեռքբերումը,
- շին. ճամբարների ու շինանյութերի պահեստավորման տարածքների պլանավորումը,
- օդի, հողի, ջրերի աղտոտումը կանխարգելող միջոցառումների ապահովումը,
- արտակարգ իրավիճակների կառավարման պլանի առկայությունը և այլն:

Շինարարության կապալառուի բնապահպանական, սոցիալական և անվտանգության հարցերով ինժեները պետք է գնահատի բոլոր հնարավոր ռիսկերը և սահմանի դրանց կառավարման պլանը, անվտանգության հրահանգները:

Իրականացված ուսումնասիրությանն արդյունքում պարզվել է, որ նախատեսվող գործունեության իրականացման/շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ: Ազդեցությունները կլինեն ժամանակավոր և կարող են արդյունավետ կառավարվել մեղմացուցիչ միջոցների կիրառմամբ: ԲԿՊ-ն և մոնիթորինգի ծրագիրը կիրականացվի կապալառուի կողմից շինարարության փուլում, իսկ ԲԿՊ-ի համապատասխան դրույթները կընդգրկվեն շինարարական աշխատանքների պայմանագրերի ընդհանուր մասնագրերում՝ ԲԿՊ-ի իրականացումն ապահովելու համար: Բնապահպանական մոնիթորինգի պլանը կազմելու է մրցութային փաստաթղթերի բաղկացուցիչ մաս:

5.1. Շինարարական աշխատանքների ընթացքում ակնկալվող ազդեցություններ

Շինարարության փուլում կանխատեսվում են հետևյալ հիմնական ազդեցությունները.

5.1.1. Օդային ավազանի աղտոտվածություն

Արտանետումների առաջացումը կապված է շինարարական աշխատանքների իրականացման փուլում շինարարական և վերակառուցման, մասնավորապես, փորման, քանդման, ինչպես նաև շենքի կառուցման, կոմունիկացիաների անցկացման և բարեկարգման հետ: Արտանետումները առաջանալու են նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու և բեռնատարների ու սարքավորման աշխատանքի արդյունքում այրվող վառելիքի վնասակար նյութերի արտանետումներն առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում, արտանետումներ են, որոնք առաջանում են շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող բիտումից և ամրակցման աշխատանքներից: Ներկայացվող բոլոր արտանետումները կրելու են ժամանակավոր բնույթ և չեն գերազանցում սահմանային թույլատրելի արտանետումները:

Ելակետային տվյալներ

ՀՀ Տավուշի մարզի, ք. Դիլիջան, Շահումյան փողոցի թիվ 17/8, 17/10 և 17/17, հասցեներում նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում: Նախատեսվող աշխատանքները նախատեսվում է իրականացնել առավելագույնը 921 օրվա ընթացքում: Շինարարության իրականացման յուրաքանչյուր փուլ ունի իր ժամկետը, համաձայն որի իրականացվել է արտանետվող նյութերի հաշվարկը:

Շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝

- Գրունտի հանույթ – 47760 մ³
- Հետ լիցք/համահարթեցման աշխատանքներ – 8480 մ³

Շինարարության ժամանակ օգտագործվելու է նաև ավազ՝ ավազակոպճային խառնուրդ, խիճ, բիտում, ամրակցող նյութեր և այլ շինարարական նյութեր:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկը ներկայացվում է՝ թվով 20 շինմեքենա:

Աղյուսակ 5.1 Հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկ

Հ/Հ	Մեքենա-մեխանիզմների անվանումը	Չափման միավոր	Քանակ
1.	Ավտոկռան 25տ XCMG 25L5_S (25t)	հատ	3
2.	Աշտարակային կռան QTZ-160 (T6024)	հատ	2
3.	Անիվավոր էքսկավատոր շերեփ. տարող. 1.2մ3	հատ	2

4.	Ինքնաթափ մեքենա 20մ3	հատ	4
5.	Բուլդոզեր	հատ	2
6.	Բեռնատար մեքենա 1.5տ	հատ	2
7.	Բեռնատար մեքենա երկար թափքով 25տ	հատ	1
8.	Ինքնագնաց բետոնախառնիչ	հատ	2
9.	Գրեյդեր	հատ	1
10.	Ջրցան մեքենա	հատ	2

Մթնոլորտ արտանետվող նյութերի հաշվարկ

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվաղողների և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times K_5 \times N \times L \times C_7 \times q_1}{3600} + C_4 \times C_5 \times K_5 \times q_1^2 \times S \times n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}} = 0.0864 \times M_{\text{վրկ}} \times (365 - (T_{\text{сп}} + T_{\text{д}})), \text{ տ/տարի}$$

Որտեղ,

C_1 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը

C_2 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին

արագությունը

C_3 – գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

K_5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

N – ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում

L – մի վազքի միջին երկարությունն է

C_7 – գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

q_1 – 1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

C_4 – գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը

C_5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը

K_5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

q_1^2 – նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները

S- պլատֆորմայի միջին մակերեսն է ,
 n- ավտոմեքենաների թիվն է
 Tcπ – ձնածածկ օրերի թիվն է
 Tд – անձրևային օրերի թիվն է

Աղյուսակ 5.2. Արտանետումների ցուցանիշներ

Կատարվող աշխատանքի բնույթը	C ₁	C ₂	C ₃	N	L	C ₇	q ₁	C ₄	C ₅	K ₅	q ₁ ²	S	n	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	15	7	0.03303	0.002730683
Գրունտի հանույթը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	7	2	0.004411	0.000364683
Գրունտի հետլիցք	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	7	2	0.004411	0.000364683
Ավազի շերտի լիցք	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1.3	1.0	0,01	0.002	8	1	0.002524	0.000208683
Խճի շերտի լիցք ըստ ֆրակցիաների	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1.6	1.0	0,01	0.002	8	1	0.003105	0.000256683
Ամրացման աշխատանքներ	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1.3	1.0	0,01	0.002	6	2	0.003782	0.000312683

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 5.3-ում

Աղյուսակ 5.3 Արտանետումների վերջնական տարբերակ

Աշխատանքի բնույթը	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO ₂)	0.03303	0.002730683
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂)	0.004411	0.000364683
Գրունտի հետլիցք՝ 70-20% SiO ₂)	0.004411	0.000364683
Ավազի շերտի լիցք փոշի՝ 70-20% SiO ₂)	0.002524	0.000208683
Խճի շերտի լիցք ըստ ֆրակցիաների փոշի՝ 70-20% SiO ₂)	0.003105	0.000256683

Ամրացման աշխատանքներ փոշի՝ 70-20% SiO ₂)	0.003782	0.000312683
Արտանետվող փոշու ընդհանուր քանակը	0.0042381	0.051264

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% SiO₂ պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 2 էքսկավատոր՝ համապատասխանաբար 1.2մ³ աշխատանքային շերտի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times P_6 \times B_1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

P₁ – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04

P₂ 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P₃ – գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2

P₄ – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01

P₅ – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P₆ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B₁ – գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերտի տարողության՝ 12տ/ժ

Այսպիսով,

$$Q = \frac{0,04 \times 0,02 \times 1,2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 6 \times 10^6}{3600} = 0,004 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO₂).

$$M = 0,0036 \times 0,004 \times 72 = 0,001 \text{ տ/շինժամ}$$

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թևքի կիրառման: Բեռնաթափվում է ավազ և խիճ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times K_8 \times K_9 \times B \times G \times 10^6}{3600} \times (1 - \eta), \text{ գ/վրկ}$$

K1 – փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

K2 0–50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,

K3 – գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,

K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,

K5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,

K7 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,

K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերտի տեսակից

K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից

B – գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,

G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ

η – փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով

Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M_{\text{տ}} = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot K_9 \cdot B \cdot G_{\text{տ}}, \text{ տ/տ}$$

որտեղ $G_{\text{տ}}$ – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Ավագ

$$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0,21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,000945 \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տ}} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076 \text{ տ/տարի}$$

Խիճ

$$M = 0,04 \cdot 0,02 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,8 \cdot 0,41 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,004 \text{ գ/վրկ};$$

$$M_{\text{տ}} = 0,04 \cdot 0,02 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,8 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 755 = 0,0116 \text{ տ/տարի}$$

Աղյուսակ 5.4 Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման – բեռնաթափման աշխատանքներից

Արտանետվող նյութ	Առավելագույն միանվագ, գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Անօրգանական փոշի >70%	0,000945	0,0076

Անօրգանական փոշի 20-70%	0,004	0,0116
-------------------------	-------	--------

Ճանապարհի, մայրերի և շենքերի կառուցման ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600}$$

Որտեղ, G_4 – դիզ. վառելիքի ժամային ծախսն է

q_i – i -րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ

n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:

Հետևաբար,

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600} = \frac{0.026 \cdot 0.084 \cdot 3 \cdot 10^3}{3600} = 0,0018 \text{մ}^3 \quad \text{գազային}$$

արտանետման ծավալն է:

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_i = \sum_{k=1}^k (m_{\text{U}\theta\text{U}i} \cdot t_{\text{U}\theta\text{U}} + 1,3 \cdot m_{\text{U}\theta\text{U}ik} \cdot t_{\text{U}\theta\text{U}k}) \cdot N_k / 1800, \text{ r/c}$$

որտեղ $m_{\text{U}\theta\text{U}i}$ – i -րդ նյութի սահմանային արտանետումն է չծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$1,3 \cdot m_{\text{U}\theta\text{U}ik}$ – i -րդ նյութի սահմանային արտանետումն է ծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{\text{U}\theta\text{U}}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չծանրաբեռնված ր.

$t_{\text{U}\theta\text{U}k}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ ծանրաբեռնված ր.

N_k – k -րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է

i -րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M_i = \sum_{k=1}^k (m_{\text{U} \theta \text{U} i} \cdot t_{\text{U} \theta \text{U}} + 1,3 \cdot m_{\text{U} \theta \text{U} i k} \cdot t_{\text{U} \theta \text{U} k}) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$

Աղյուսակ 5.5 Հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցները ըստ օրերի և քանակի

Շինմեքենաների անվանացանկ	Քանակը	Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը							Աշխատանքային օրերի թիվը	Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը
		Օր/ժ				30ր/ր				
		ընդամենը	չծանրաբեռնված	ծանրաբեռնած	Ազատ ընթացք	չծանրաբեռնված	ծանրաբեռնած	Ազատ ընթացք		
Ավտոկռան 25տ XCMG 25L5_S (25t)	1 (1)	3	1,392	1,508	0,58	12	13	5	225	+
Աշտարակային կռան QTZ-160 (T6024)	1 (1)	2	0,433	0,5	0,333	12	13	5	95	+
Անիվավոր էքսկուվատոր շերեփ. տարող. 1.2մ3	1 (1)	2	2,875	3,2	1,3	12	13	5	110	+
Ինքնաթափ մեքենա 20մ3	1 (1)	4	2,875	3,2	1,3	12	13	5	110	+
Բուլդոզեր	1 (1)	2	2,875	3,2	1,3	12	13	5	110	+
Բեռնատար մեքենա 1.5տ	1 (2)	2	2,4	2,6	1	12	13	5	320	+
Բեռնատար մեքենա երկար թափքով 25տ	1 (1)	1	1,2333	1,6	0,6667	13	13	5	250	+

Ինքնագնաց բետոնախառնիչ	1 (1)	2	0,2333	0,4	0,16667	13	12	5	110	-
Գրեյդեր	1 (1)	1	2,875	3,2	1,3	12	13	5	95	-
Ջրցան մեքենա	1 (2)	2	1,392	2,63033	1,01167	12	13	5	320	+

Աղյուսակ 5.6. Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանչյուր աղտոտող նյութի և ըստ աշխատող մեքենայի

Աղտոտող նյութի անվանումը	i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար համաձայն $G_i = \sum_{k=1}^k (m_{\text{fuel}} \cdot t_{\text{fuel}} + 1,3 \cdot m_{\text{fuel}} \cdot t_{\text{fuel}}) \cdot N_k / 1800,$ բանաձևի, գ/վրկ Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը
Ածխածնի օքսիդ	0,00362
Ածխաջրածիններ	0,003214
Ազոտի օքսիդներ	0,00409
Ծծմբի երկօքսիդ	0,00204
Մուր	0,00278

Մեթոդակարգի համաձայն, ճանապարհների ասֆալտապատման ժամանակ օգտագործվող ասֆալտբետոնից արտանետվող նյութի՝ ածխաջրածնի, սահմանային չափաքանակը ընդունվում է 1կգ 1տոննա պատրաստի բիտումի հաշվով: ԳՕՍՏ 9128-97 համաձայն, ասֆալտի մեջ բիտումի միջին պարունակությունը ընդունվում է 6%:

Այսպիսով, համախառն արտանետումը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$H = N \cdot 1 / 1000, \text{ տ/շինժամ}$$

Որտեղ N-ասֆալտի մեջ բիտումի ծավալն է

Արտանետումների առավելագույն սահմանաչափի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$Q = H \cdot 106 / T \cdot 3600, \text{ գ/վրկ}$$

Որտեղ, H- համախառն արտանետումն է

T – աշխատաժամանակը/ժ

Աղյուսակ 5.7 Աղտոտող նյութեր քանակը

Աղտոտող նյութի անվանումը	Առավելագույն արտանետում գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Դիմեթիլբենզոլ	0,0215739	0,0097637
Կախյալ մասնիկներ	0,001856	0,002345
Սպիրտ	0,0160113	0,0072463

Եռակցման աշխատանքների ժամանակ մթնոլորտ է արտանետվում հետևյալ աղտոտող նյութերը՝ ազոտի երկօքսիդ, երկաթի օքսիդ, մանգան և դրա միացությունները, գազանման ֆտորիդներ, վատ լուծվող ֆտորիդներ, անօրգանական փոշի՝ 70-20%, ածխածնի օքսիդ: Աղտոտող նյութերի արտանետման հաշվարկը, համաձայն մեթոդակարգի, իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$MMi = B \cdot KMi \cdot \eta \cdot (1 - \eta_1 i) / 3600, \text{ ր/ժ}$$

$$MOi = KOi \cdot \eta \cdot (1 - \eta_1 i) / 3600, \text{ ր/ժ}$$

$$MPI = KPi \cdot S \cdot Z \cdot \eta \cdot (1 - \eta_1 i) \cdot 10^{-3} / 3600, \text{ ր/ժ}$$

$$M75i = K75i \cdot 0.013 \cdot N \cdot \eta \cdot (1 - \eta_1 i) / 3600, \text{ ր/ժ}$$

$$M50i = K50i \cdot 0.02 \cdot N \cdot \eta \cdot (1 - \eta_1 i) / 3600, \text{ ր/ժ},$$

որտեղ,

B – օգտագործվող հումքի և նյութերի սպառում, կգ/ժ;

KMi – i-րդ աղտոտիչի արտանետման հատուկ ցուցիչ մեկ միավորի զանգվածի վրա սպառվող (պատրաստի) հումք և նյութեր, գ/կգ;

KOi – սարքավորման միավորի (մեքենա, միավոր և այլն) i-րդ աղտոտիչի արտանետման հատուկ սահմանային ցուցիչ, գ/ժ;

KPi – զոդման միավոր մակերեսով i-րդ աղտոտիչի արտանետման հատուկ սահմանային ցուցիչ, մգ/սմ²;

Si – եռակցման հատման տարածք, սմ²;

Z – եռակցումների (հոդերի) քանակը ժամանակի միավորի վրա, ժ⁻¹;

K75i – i-րդ աղտոտիչի արտանետման սահմանային ցուցիչ 75 կՎտ հատման եռակցման մեքենայի հզորության հաշվով, գ/ժ;

K50i – i-րդ աղտոտիչի արտանետման սահմանային ցուցիչ 50 կՎտ կետային եռակցման մեքենայի հզորության հաշվով, գ/ժ;

N – տեղադրված սարքավորումների հզորությունը, կՎտ;

η – տեղային ներծծման/ինքնամաքրման արդյունավետություն՝ մեկ միավորի հաշվով;

η₁ i – գազի մաքրման կայանում i-րդ աղտոտիչի մաքրման աստիճանը, մեկ միավորի հաշվով:

Աղյուսակ 5.8 Ասֆալտբետոնի աշխատանքներից արտանետվող նյութի քանակական և որակական ցուցանիշներ

Արտանետվող նյութի անվանումը	Առավելագույն արտանետում գ/վրկ	Համախառն արտանետում տ/տ
Ածխաջրածին C12-C19	0.0000399	0,0977

Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող նյութերի և ներկանյութերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\Pi = 10^{-3} \cdot mk \cdot (\delta a / 100) \cdot (1 - fp / 100) \cdot K, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

mk – օգտագործվող ներկանյութի քանակն է, կգ

δa – ներկի բաժնեմասն է, որը կորում է աէրոզոլի տեսքով, %;

fp – լուծիչ, %;

K – աէրոզոլի տեսքով ներկանյութի նստեցման գործակիցն է,

$$\Pi_1 = 10^{-3} \cdot mk \cdot fp \cdot \delta'p / 10^4, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

fp – նյութի օքսիդացման չափաբաժինն է

$\delta'p$ – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Հետևաբար ամրակցման աշխատանքների ժամանակ արտանետվող նյութերի քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Pi' \cdot 10^6$$

$$G = \frac{\Pi' \cdot 10^6}{n \cdot t \cdot 3600}, \text{ գ/վրկ}$$

որտեղ,

Π' – ամրակցման ընթացքում օգտագործվող նյութերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում

n – մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող նյութերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է

t – օրվա մեջ ներկանյութ օգտագործելու միջին ժամային քանակն է:

Այսպիսով,

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (30/100) \cdot (1-45/100) \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,003308 \cdot 10^6 / (10 \cdot 6 \cdot 3600) = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 0,003308 \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,015316 \cdot 1 = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 25 / 10^4) = 0,002256 \text{ տ/տարի}$$

$$\Pi_1 = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 75 / 10^4) = 0,006767 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,002256 + 0,006767 = 0,009023 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,009023 \cdot 0,5 = 0,004511 \text{ տ/տարի}$$

$$G = 0,002256 \cdot 0,5 = 0,001128$$

Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները ներկայացվում են Աղյուսակ 5.9-ում

Աղյուսակ 5.9 Արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալներ

Աղտոտող անվանումը	նյութի	Առավելագույն արտանետում գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Դիմեթիլբենզոլ		0,001128	0,004511
Կախյալ մասնիկներ		0,0015316	0,002256

Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 5.10-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը:

Աղյուսակ 5.10. Շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկների ամբողջական վերլուծությունը և նկարագիրը

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ	Ժամանակահատված)							
	Անօրգանական փոշի 70-20% SiO ₂	Անօրգանական փոշի > 70 SiO ₂	Ածխածնի օքսիդ	Ածխաջրածիններ (CH)	Ազոտի օքսիդներ	Ծծմբի երկօքսիդ	Մուր	Դիմեթիլ բենզոլ	Կախյալ մասնիկներ
1	2	3	4	5			6	7	
Շինտեխնիկայի տեղեշարժ՝ այդ թվում նաև շինադրի տեղափոխում	0.03303	-	-	-	-	-	-	-	-
Գրունտի հանույթ/հետլիցք	0.008822								
Ավազի, խճի լիցք	0.005629								
Փորման աշխատանքներ	0.004		-	-	-	-	-	-	-
Բեռնման – բեռնաթափման՝ այդ թվում շենքի վերակառուցման աշխատանքներ	0,004	0,000945	-	-	-	-	-	-	-
Դիզելային շարժիչից առաջացող արտանետումներ	-	-	0,00362	0,003214	0,00409	0,00204	0,00278	-	-

Բիտումից արտանետում	-	-	-	0.000399	-	-	-	-	-
Ամրակցման աշխատանքների g արտանետումնե ր	-	-	-	-	-	-	-	0,001128	0,0015316
Ընդհանուր	0.055481	0,000945	0,00362	0.0007204	0,00409	0,00204	0,00278	0,001128	0,0015316

Ելնելով Աղյուսակ 5.10-ում ներկայացված տվյալներից, իրականացվել է աղտոտող վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկ՝ «Էկոլոգ» 4.60 համակարգչային ծրագրով, որն ընդգրկված է շրջակա միջավայրի նախարարի 18.02.2020թ. N 64- Լ հրամանում:

Աղյուսակ 5.11-ում բերված են տեղանքի մթնոլորտում աղտոտող նյութերի ցրման պայմաններին որոշող օդերևութաբանական բնութագրերն ու գործակիցները [4]:

Աղյուսակ 5.11 Մթնոլորտում աղտոտող նյութերի ցրման պայմաններն որոշող օդերևութաբանական բնութագրերն ու գործակիցները

Բնութագրերի անվանումը	Արժեքը
Մթնոլորտի ստրատիֆիկացիայից կախված գործակիցը, A	200
Տեղանքի ռելիեֆի գործակիցը	1
Տարվա ամենատաք ամսվա արտաքին միջին առավելագույն ջերմաստիճանը, T °C	38.1
Տարվա ամենացուրտ ամսվա արտաքին միջին առավելագույն ջերմաստիճանը, T °C	-22.8
Քամու ուղղությունների կրկնությունը (վարդը), %	
Հյուսիսային	3
Հյուսիս-արևելյան	19
Արևելյան	2
Հարավ-արևելյան	3
Հարավային	22
Հարավ-արևմտյան	32
Արևմտյան	15
Հյուսիս-արևմտյան	4
Քամու բազմամյա միջին արագությունը(մ/վ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ (5 % ապահովվածությամբ)	2.5
Քամու բազմամյա միջին առավելագույն արագությունը(մ/վ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ (5 % ապահովվածությամբ)	24

Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները ներկայացվում են համաձայն Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումների աղյուսակի.

Աղյուսակ 5.12 Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Հաշվարկների արդյունքներն ամփոփ տեսքով բերված են 5.13 աղյուսակում:

Մերձգետնյա կոնցենտրացիաների համակարգչային հաշվարկների ամբողջական արդյունքները ներկայացված է հավելվածում:

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են սահմանված նորմերում:

Աղյուսակ 5.13 Մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

N ^o	Անվանումը	Մաքսիմալ մերձգետնյա կոնցենտրացիաները ՄԹԿ-ի մասով	
		Առավելագույն կոնցենտրացիա շինարարության հրապարակում	Բնակելի գոտում եզրագծին
1.	Անօրգանական փոշի 70-20% SiO ₂	4.56E-04	2.64E-04
2.	Անօրգանական փոշի > 70 SiO ₂	0.01	7.75E-03
3.	Ածխածնի օքսիդ	5.24E-05	3.03E-05
4.	Ածխաջրածիններ (CH)	5.21E-05	3.02E-05
5.	Ազոտի օքսիդներ	1.48E-03	8.57E-04
6.	Ծծմբի երկօքսիդ	2.95E-04	1.71E-04
7.	Մուր	4.02E-04	2.33E-04

8.	Դիմեթիլբենզոլ	4.08E-04	2.36E-04
9.	Կախյալ մասնիկներ	3.69E-04	2.14E-04

Մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքներում առաջացել են գումարային ազդեցությամբ օժտված նյութեր

Աղյուսակ 5.14 Գումարային ազդեցությամբ օժտված նյութերի ցանկ

N ^o			Մաքսիմալ մերձգետնյա կոնցենտրացիաները ՍԹԿ-ի մասով	
	Անվանումը	ՍԹԿ ա.մ. մգ/մ ³	Առավելագույն կոնցենտրացիա շինարարության հրապարակում	Շինարարության գոտու եզրագծին
1.	Ազոտի օքսիդ + ծծմբի երկօքսիդ	1,6	1.11E-03	6.43E-04

5.1.2. Զրոգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների համար խմելու և կենցաղային կարիքների համար նախատեսված անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը շինարարության շրջանում նախատեսվում է իրականացնել խմելու ջուրը տարրաներով բերելու եղանակով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը պայմանագիր կկնքի ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ):

Շինարարական հրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինարարական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ որակի ջրաքանակի ապահովումը նախատեսվում է իրականացնել մեքենաներով բերելու եղանակով՝ (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրամատակարար կազմակերպության հետ):

ա) Հարթակների ջրցան

ՀՀ Տաուշի մարզի Դիլիջան համայնքի Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում կառուցվող բազմաֆունկցիոնալ կառուցման շինարարության ժամանակ ճանապարհի երկայնքով կառուցվելու են բազմաթիվ մեծ ու փոքր շինհրապարակներ: Դրանց միջին մակերեսը կազմելու է մոտ 800 մ²:

Ջրցանի չափաքանակը կազմում է 1.5լ/մ²:

Տաք եղանակի պայմաններում իրականացվում է ջրցան օրական առնվազն երկու անգամ՝ ջրցան մեքենաներով:

Օրական ջրցանի ջրապահանջը կկազմի՝

$$800 \text{ մ}^2 \times 2 \times 0.0015 \text{ մ}^3/\text{մ}^2 = 2.4 \text{ մ}^3/\text{օր}:$$

Տաք, առանց տեղումների օրերի միջին տարեկան թիվը ընդունվում է 144, ամբողջ շինարարության ընթացքում՝ 288 օր:

$$\text{Մեկ հրապարակի ջրապահանջը՝ } 281 \text{ օր} \times 2.4 \text{ մ}^3/\text{օր} = 691.2 \text{ մ}^3/\text{շին.}:$$

Ընդամենը նախատեսվում է 1 շինարարական հրապարակ:

$$691.2 \text{ մ}^3 \times 5 = 691.2 \text{ մ}^3/\text{շին.}:$$

բ) Հողային զանգվածի խոնավացում

Ընդամենը փորվելու և հանվելու է 47760 մ³ հողային զանգված: Խոնավացման նորմը² ընդունվում է 8 լ/մ³:

$$47760.0 \text{ մ}^3 \times 8 \text{ լ/մ}^3 : 1000 \text{ լ/մ}^3 = 382.08 \text{ մ}^3$$

գ) Խմելու կենցաղային

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Օրական, մեկ բանվորին – 25լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16լիտր

Շինարարական անձնակազմը բաղկացած է լինելու 57 հոգուց, այդ թվում՝ 3 ինժեներատեխնիկական աշխատող (ԻՏԱ):

² Санитарные правила для предприятий по добыче и обогащению рудных, нерудных и россыпных полезных ископаемых (утв. Главным государственным санитарным врачом СССР 28 июня 1985 г. N 3905-85)

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝
 $W_{\text{խ.տ.}} = (n1 \times N1 + n2 \times N2) \times T$, որտեղ

$n1$ – ԻՏԱ աշխատողների թվաքանակն է՝ 3 մարդ
 $N1$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ
 $n2$ –բանվորների թվաքանակն է՝ 47մարդ
 $N2$ – բանվորների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ
 T – աշխատանքային օրերի թիվն է՝921 օր
 $W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 47 \times 0.025) \times 921 = 1126.4$ մ³ ողջ շինարարական
 ամանակահատվածի համար:

Ջրահեռացում

Տարածքների ջրցանի և հողային զանգվածների խոնավացման արդյունքում արտահոսք չի առաջանում:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու և կենցաղային ջրօգտագործման արդյունքում:

Տնտեսական կենցաղային հոսքաջրերի հաշվարկային քանակը կկազմի՝

$W_{\text{կոյուղի}} = W_{\text{կենցաղ.}} \times (1 - \psi)$, որտեղ՝
 ψ ՝ կորուստները, ընդհանրացված 5 տոկոս /0.05/,
 $W_{\text{կոյուղի}} = 1126.4 \times (1 - 0.05) = 1070.08$ մ³:

Աղյուսակ 5.15 Ջրօգտագործման և ջրահեռացման ընդհանուր հաշվարկային ցուցանիշները

Ջրօգտագործման կարիքները	Ջրօգտագործում, մ ³ /տարի	Կորուստներ, մ ³ /տարի	Ջրահեռացում, մ ³ /տարի
Հարթակների ջրցան	691.2	691.2	–
Հողային զանգվածների խոնավացում	382.08	382.08	–
Խմելու և կենցաղային	1126.4	56.32	1070.08
Ընդամենը	2199.68	1129.6	

5.1.3. Հողային ռեսուրսներ

Հանույթ

Շինարարական հրապարակների նախապատրաստման ընթացքում փորվում և հանվում է հող և գրունտ՝ հանվող հողային զանգվածը կազմում է 47760.0 մ³, որից

8480 մ³ օգտագործվելու է, որպես հետլիցք, ոչ պիտանի հողային զանգվածը նախատեսվում է տեղափոխել Դիլիջանի քաղաքապետարանի կողմից հատկացված տարածք:

Բերրի հող

Նախատեսվող շինարարության ենթակա տեղանքը հիմնականում զուրկ է բերրի հողի շերտից, քանի որ ծրագիրն իրականացվում է արդեն իսկ ուրբանիզացված տարածքում, նախկինում ասֆալտապատած մակերեսների ծրագծերի սահմաններում, որտեղ շինարարական աշխատանքների աշխատանքների ընթացքում առաջացող 240 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Տարածքում առկա ծառերը և թփերը ամբողջությամբ պահպանվելու են: Տարածքում ծառահատում չի նախատեսվում:

5.1.4. Թափոններ

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը, շինարարական աղբը և քանդված հանված հողային զանգվածի որոշ մաս, որը չի օգտագործվելու հետլիցքի նպատակով: Առաջացող շինարարական աղբը, ինչպես նաև հողի ավելցուկային զանգվածը կտեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված համապատասխան վայր, իսկ կենցաղային աղբի տեղափոխման համար կկնքվի պայմանագիր աղբահեռացումն ապահովող համապատասխան կազմակերպության հետ:

Շինարարական թափոններ՝ 420.0 խմ (ծածակագիրը՝ 9120060101004) Ծրագրով նախատեսված աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբը կտեղափոխվի տեղեկանքում նշված համապատասխան վայրը:

Քանդված հանված հողային զանգված՝ 39280.0 խմ (ծածակագիրը՝ 3140110008995/) Հանվող հողային զանգվածի ծավալը համընկնում է հանույթի ծավալի հետ և որը պետք է տեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբ (ծածակագիրը՝ 9120040001004) - կառաջանա 17 223.0 կգ ընդհանուր քանակությամբ՝ բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների կենցաղային սպասարկման, ինչպես նաև վարչական գործունեության արդյունքում: Այն նախատեսվում է կուտակել աղբամաններում և ըստ համապատասխան պայմանագրի տեղափոխել ՏԻՄ-երի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարության փուլում կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$M=57*120= 6840$ կգ/տ կամ 18.7կգ/օր

Շինարարությունը տևելու է 921 օր, հետևաբար ողջ շինարարական ժամանակահատվածի համար:

$M=18.7 * 921= 17\ 223.0$ կգ շինարարության ողջ ժամանակահատվածի համար

Շինարարության, ինչպես նաև շահագործման փուլերում կենցաղային աղբի հեռացումը տարածքից իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

5.1.5. Աղմուկ և թրթռումներ

Մեքենա-սարքավորումների աշխատանքի և շինարարության հետ կապված այլ գործողությունների հետևանքով շինարարության ընթացքում կառաջանա աղմուկ: Տարբեր տեխնիկական միջոցներ ունեն աղմուկի տարբեր ցուցանիշներ, որոնք տատանվում են 65 մինչև 96 դԲա:

Շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում հնարավոր աղմուկը և թրթռումները կարող են անհանգստություն պատճառել մոտակա շենքերի/տների բնակիչներին և կառույցներին:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերով: Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, այնուամենայնիվ որևէ կառույցի հասցված վնասը պետք է կապալառուի կողմից վերականգնվի կամ փոխհատուցվի::

Աղմուկի և թրթռման մակարդակի ուսումնասիրման նպատակով, մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կիրականացվի աղմուկի գործիքային չափման աշխատանքներ, որի արդյունքները կընդունվեն, որպես ելակետային (Ֆոնային) հետագա աշխատանքների իրականացման համար, այնուհետև աղմուկի և թրթռման գործիքային չափումները կիրականացվի պարբերաբար՝ ըստ շինարարական աշխատանքների կազմակերպման ժամանակացույցի:

Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների լրացուցիչ գործիքային չափումներ:

Ծրագրի իրականացման ժամանակ թրթռման մակարդակի գերազանցումներ չեն ակնկալվում,

Աղմուկի ազդեցության մեղմացման նպատակով շինարարական աշխատանքները կիրականացվի օրվա ցերեկային ժամերին), այդ թվում ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի թիվ 79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

5.1.6. Սոցիալական ազդեցություն

Շինարարության ընթացքում շինարարական հրապարակի հարակից տներում բնակվող բնակիչները կարող են ենթարկվել սոցիալական բնույթ կրող որոշակի անբարենպաստ ազդեցությունների (աղմուկ, փոշի, երթևեկության ժամանակավոր խաթարումներ և այլն), որոնք միասին կարող են առաջացնել գումարային ազդեցություններ: Սակայն դրանք տեղի են ունենալու միայն շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, լինելու են կարճաժամկետ և էականորեն մեղմացվելու են հատուկ միջոցառումների իրականացման շնորհիվ:

Շինարարական աշխատանքներից հետո, մինչ այն վերջնական հանձնելը, կապալառուն պարտավոր է լինելու բարեկարգել տարածքը՝ հեռացնելով շինարարության հետ կապված նյութերն ու թափոնները:

Փոշին, դիզելային վառելիքի այրման արգասիքները, աղմուկի մակարդակի ավելացումը նույնպես բացասաբար կարող է անդրադառնալ բնակչության վրա, իսկ երթևեկության հնարավոր ինտենսիվացումը ժամանակավոր անհարմարություններ կարող է ստեղծել գոյություն ունեցող ճանապարհով երթևեկության համար:

Հարկ է նշել, որ շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բանվորական և սպասարկող անձնակազմը կհավաքագրվի տեղի բնակչությունից, ինչը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:

Նախատեսվող գործունեության արդյունքում նախատեսվում է տեղի ենթակառուցվածքների զարգացում, զբոսաշրջիկների հոսքի աճ, և մի շարք սոցիալական խնդիրների լուծում:

5.1.7. Գումարային ազդեցություն

ՀՀ Տաուշի մարզի, ք. Դիլիջան համայնքի, Շահումյան փողոցի թիվ 17/8, 17/10 և 17/17 հասցեներում նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի

իրականացումը տվյալ տարածքում և տվյալ ժամանակահատվածում իր ծավալով լինելու է միակը և քանի որ այլ նախատեսվող աշխատանքներ նույնպես չկան՝ հետևաբար, այստեղ չի գոյանա այլ աշխատանքների պատճառով առաջացած գումարային ազդեցություն:

5.1.8. Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա

Բուսական աշխարհ: Շինարարական աշխատանքների ընթացքում բուսատեսակների և կենդանատեսակները վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատանքները տեղի են ունենալու քաղաքային միջավայրում:

Կենդանական աշխարհ: Գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդանատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Դիլիջան համայնքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

5.1.9. Մշակութային ժառանգություն

Ծրագրի իրականացման վայրն է ՀՀ Տաուշի մարզի, ք. Դիլիջան համայնքի, Շահումյան փողոցի թիվ 17/8, 17/10 և 17/17 հասցեները:

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր անբարենպաստ ազդեցություններ վերջիններիս վրա չի ակնկալվում:

Եթե նախատեսվող «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների ընթացքում մշակութային ժառանգության կամ հնագիտական հետաքրքրություն ներկայացնող որևէ իր հայտնաբերվի ապա պետք է աշխատանքները դադարեցվեն:

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել՝ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՕ-261 օրենքով (11.10.1998թ.) սահմանված պահանջները,

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ

մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմինն՝ տվյալ դեպքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

5.1.10. Աշխատողների սանիտարակենցաղային և հիգիենիկ պահանջներ

Ըստ շինարարության կազմակերպման նախագծի և համաձայն «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի, աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով շինհրապարակը հագեցված է լինելու՝

- աշղեկի շարժական տնակներով,
- բիոզուգարաններով,
- հանդերձարաններով
- ցնցուղարաններով,
- լվացարաններով,
- հանգստի սենյակներով
- սննդի ընդունման շարժական կետերով
- աշխատողների կարիքների համար անհրաժեշտ ջրի տարա,

Շինհրապարակը առանձնանալու է ճանապարհը փակող նշաններով՝ անվտանգության նորմատիվների համաձայն:

Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների համար խմելու և կենցաղային կարիքների համար նախատեսված անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը շինարարության շրջանում նախատեսվում է իրականացնել խմելու ջուրը տարրաներով բերելու եղանակով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքվի ջրամատակարար կազմակերպության հետ),:

Ցնցուղարաններից և այլ կենցաղային նպատակներով օգտագործված ջուրը հավաքվելու է անջրթափանց պատերով համապատասխան տարրայի մեջ և տարածքից հեռացվելու է տվյալ ոլորտում ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով (մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կապալառու կազմակերպությունը համապատասխան պայմանագիր կկնքի տվյալ ոլորտում մասնագիտական ծառայություն մատուցող՝ ՀՀ Օրենսդրության պահանջներին համապատասխան գործող կազմակերպության հետ):

Շինհրապարակում բիոզուգարանների տեղադրումը և դրանց հետագա սպասարկումը իրականացվելու է տվյալ ոլորտում մասնագիտական ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով:

Ամփոփելով շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները, հարկ է նշել, որ այդ աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և առավելագույնս պահպանվի բնական լանդշաֆտ, որի համար հիմք կհանդիսանա բնապահպանական կառավարման պլանում սահմանված բնապահպանական և սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացումը:

5.1.11. Լանդշաֆտ

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ այն կառուցվելու է գոյություն ունեցող կառուցապատման տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Նախատեսվող բնակելի համալիրը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է՝

- շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

5.1.12. Բարեկարգում և Կանաչապատում.

Համալիրի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 4712 քմ մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ ներբակային գոտում, հարակից տարածքներում և ճանապարհի եզրերին: Որպես կանաչապատման նախագծի հիմք հանդիսանում են.

- պատվիրատուի կողմից տրամադրվող գլխավոր հատակագիծը
- Դիլիջան համյանքապետի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 42 % և ավելի:

Համաձայն կանաչապատման նախագծի, ընդհանուր կանաչապատման մակերեսը 0,00 նիշում կազմում է 4712 մ² (42 %): Նախատեսվում է նաև լրացուցիչ կանաչապատման աշխատանքներ տանիքային կանաչապատման եղանակով, ինչպես նաև շենքերի բակային տարածքներում վերգետնյա ավտոկայանտեղերի հատվածում կանաչապատման իրականացում գեոցանցի եղանակով:

Տարածքի ռելիեֆը ներկայացնում է ալիքաձև սարահարթ, որը մի կողմից սահմանափակված է ճանապարհներով, իսկ մյուս կողմից՝ կտրուկ լանջով: Էրոզիայի կանխարգելման և լանջերի կայունության բարելավման նպատակով նախագծով նախատեսվում է կառուցել հենապատեր և գաբիոններ, որոնք նաև կունենան դեկորատիվ գործառույթ: Լրացուցիչ կիրականացվի նաև անձրևաջրերի հեռացման համակարգի կազմակերպում, որը կներառի է ջրի կուտակիչ ավազան՝ փակ ջրամատակարարման ցիկլով: Այս ավազանը, արհեստական առվի հետ միասին, ապահովելու է անձրևաջրերի ռացիոնալ օգտագործումը ոռոգման համար և կբարելավի տարածքի գեղագիտական տեսքը:

Կանաչապատման համար բույսերի տեսակների ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով տարածքի կլիմայական պայմանները, հողի կազմն ու տարածքի ռելիեֆը: Նախագծով նախատեսվում է օգտագործել տեղական և ներմուծված տեսակներ, որոնք հարմարեցված են տարածաշրջանի առանձնահատկություններին: Կանաչապատման հիմնական մասը բաղկացած է ծառերից, թփերից և խոտածածկ բույսերից: Ալեների և խմբային տնկումների համար նախատեսվում է օգտագործել *Platanus orientalis* (արևելյան նարդի), *Tilia platyphyllos* (մեծատերև լորենի) և *Sophora japonica* (ճապոնական սոֆորա): Լանջերի ամրացումը իրականացվելու է թփերի, ինչպես օրինակ՝ *Juniperus sabina* (կազակյան գիհի) և *Cotoneaster dammeri* (Դամերի կիզիլնիկ), միջոցով: Բացի այդ, նախատեսվում են դեկորատիվ տնկումներ՝ խոտածածկ բույսերից և ծաղկային խմբերից:

Բարենպաստ կլիմայական պայմանները հնարավորություն են տալիս կանաչապատման նպատակով օգտագործել ծառերի և թփերի լայն տեսականի, ներառյալ ներմուծված տեսակները և դրանց մշակված ձևերը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով քաղաքի դիրքը արգելոցի հարևանությամբ, նախագծում բացառվել է այնպիսի տեսակների օգտագործումը, որոնք ունեն ինվազիվություն՝ ինքնացանումով տարածվելու և բնիկ բույսերի դուրսմղման միտում: Ընտրված

տեսականների ցուցակը կազմվել է այս պահանջներին համապատասխան, և դրա մեջ ինվազիվ բույսեր չկան:

Տարածքի զգալի մակերեսն ու կանաչապատման բարձր տոկոսը (40%-ից ավելի) թույլ են տալիս օգտագործել բույսերի բազմազանություն: Առաջարկվող տեսականում մեջ ներառված են ծառեր և թփեր դեկորատիվ խմբերի և կուրտինների ձևավորման համար, ինչպես նաև բույսեր՝ որպես սոլիտերներ օգտագործելու նպատակով:

Նախագծում նախատեսված է ավտոմատ ոռոգման համակարգ:

Տարածքի ոռոգումը կիրականացվի անձրևացնող սարքերի և կաթիլային ոռոգման միջոցով, որոնք կմիավորվեն միմյանց հետ ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով: Ջրի աղբյուր կծառայի ջրամբարը և ստորգետնյա տարաները, որոնք կլցվեն տեղումների ջրերի հավաքման միջոցով (Կանաչապատման համար առաջարկվող բույսերի տեսականին և Կանաչապատման Սխեման ներկայացված են **Հավելված 8-ում**):

Նախագծով նախատեսվող կանաչապատման աշխատանքները կիրականացվեն առաջնորդվելով «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008թ. N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով: Ուսումնասիրելով տեղանքը և խորհրդակցելով դենդրոլոգի հետ, առաջարկվում է տեղադրել Հավելված 8-ում նշված բույսերի տեսականին, համապատասխան քանակներով:

5.1.13. Սոցիալ-տնտեսական հետևանքներ

Ներկայացվող գործունեության իրականացումը կնպաստի Դիլիջան քաղաքի ոչ միայն բնակելի տարածքների զարգացում, այլև նաև կիսթանեն շրջակա միջավայրի վերականգնմանը և համայնքի ընդհանուր բարելավմանը:»

Այս ամենի իրականացման արդյունքում կավելանա զբոսաշրջիկների թիվը, կստեղծվեն հավելյալ մշտական և ժամանակավոր աշխատատեղեր և տնտեսական օգուտներ:

Բացի վերոնշյալից ծրագրի իրականացումը նաև հնարավորություն կստեղծի բնակիչների համար ունենալու ժամանակավոր աշխատանք՝ նրանց ներգրավվելով իրականացվելիք շինարարական աշխատանքներում:

- Շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ անձնակազմի զգալի մասը կհավաքագրվի տեղի բնակչությունից, ինչը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:
- Աշխատանքների ընթացքում կզարգանան տեղի ենթակառուցվածքները, կլուծվեն մի շարք սոցիալական խնդիրներ:

- Բնակելի համալիրի կառուցումը նպաստելու է բնակչության բնակարանով ապահովվածությանը:

Շահագործման ընթացքում բնակելի համալիրի տարածքում նոր հասարակական օբյեկտների առկայությունը հնարավորություն կնձեռի նոր աշխատատեղերի:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

6.1. Մթնոլորտային օդ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ.

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն.

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն.

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Քանի որ, ներկայացված գործունեության ազդեցությունը տարածվում է միայն մթնոլորտային օդի վրա, ապա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն, ազդեցությունը գնահատվում է հետևյալ բանաձևով.

Ազդեցությունը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$Ա = \sum_i \Phi_i \cdot \sum_j \Psi_{ij} \cdot P_{ij}$$

որտեղ՝

Ա-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով, Շ_գ-ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն սույն կարգի 9-րդ կետի,

Վ_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն սույն կարգի 10-րդ և 11-րդ կետերի,

Ք_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն սույն կարգի 7-րդ կետի,

Փ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն $\Phi_g = 1000$ դրամ:

Տնտեսական վնասի հաշվարկը ներկայացվում է Աղյուսակ 6.1-ում:

Աղյուսակ 6.1 Տնտեսական վնասի հաշվարկ

Արտանետվող նյութի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ _i	Շ _գ	Փ _g	Տնտեսական վնասը (ՀՀ դրամ)
	S _{ui}	q	Ք _i				Ա= Շ _գ Փ _g Σ Վ _i Ք _i
Անօրգանական փոշի 70-20% SiO ₂	0.055481	3	0.16644 3	10	0,25	1000	416.1075
Անօրգանական փոշի > 70 SiO ₂	0,00094 5	3	0.00283 5	10	0,25	1000	7.0875
Ածխածնի օքսիդ	0,00362	3	0.01086	1	0,25	1000	2.715
Ածխաջրածիններ (CH)	0.00072 04	3	0.002161	3	0,25	1000	1.6209
Ազոտի օքսիդներ	0,00409	3	0.01227	12,5	0,25	1000	38.34375
Ծծմբի երկօքսիդ	0,00204	3	0.00612	16,5	0,25	1000	25.245
Մուր	0,00278	3	0.00834	41,5	0,25	1000	86.5275
Կախյալ մասնիկներ	0,001531 6	3	0.00459 5	300	0,25	1000	344.61
Ընդամենը							922.2572

6.2.Ջրային ռեսուրսներ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շինարարության արդյունքում աղտոտված արտահոսք չի առաջանում, անձրևաջրերի և ձնհալքի հոսքերը հեռացվելու են տարածքում առկա դրենաժային համակարգի միջոցով:

6.3. Հողային ռեսուրսներ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման արդյունքում հողի օգտագործման նշանակությունը չի փոխվում և տնտեսական վնաս չի հաշվարկվում:

6.4. Կենսաբազմազանություն

Աշխատանքների ընթացքում կենսաբազմազանության վրա ազդեցություններ նույնպես չեն ակնկալվում:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

7.1. Ընդհանուր դրույթներ

Նկարագրված ազդեցությունները բացառելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեղմումը ապահովելու համար նախատեսված է բնապահպանական և սոցիալական միջոցառումների ծրագիր:

Բնապահպանական Կառավարման Պլանի (ԲԿՊ) մշակման համար իրականացվել են հատուկ ուսումնասիրություններ և նախապատրաստական աշխատանքներ, որոնցից հիմնականներն են.

- (i) Ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքները,
- (ii) ՀՀ-ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
- (iii) Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով,
- (iv) շինարարական ճամբարների, ենթակառուցվածքների և գրասենյակների, նյութերի պահեստների և մեքենա-սարքավումների տեղակայման համար առավել նպատակահարմար վայրերի ընտրությունը,
- (v) շինարարական ճամբարի պատշաճ տեղակայումն ու կազմակերպումը,
- (vi) արտակարգ իրավիճակների արձագանքման գործողությունների մշակումը,
- (vii) հակահրդեհային անվտանգության միջոցառումները,
- (viii) առկա ենթակառուցվածքների ուսումնասիրումը, պահպանումը կամ տեղափոխումը, ներառյալ կոյուղու, ոռոգման, էլեկտրամատակարարման և հեռահաղորդակցման գծերը,
- (ix) շինարարական և կենցաղային աղբի համապատասխան վայրերում ժամանակին տեղափոխում և տեղադրումը,

-
- (x) շինարարությունից հետո շինարարական հրապարակների, ճամփեզրերի բարեկարգման իրականացումը և վերջիններիս տրամադրումը տեղական ինքնակառավարման մարմնին:

Հաշվի առնելով շրջակա միջավայրի և կարևոր պատմական արժեք ներկայացնող տարածքների վրա վերը նշված բոլոր անբարենպաստ ազդեցությունների ժամանակավոր բնույթը և կառավարելի լինելը, ծրագրի իրականացմամբ կստեղծվեն բարեկարգ, ժամանակակից ենթակառուցվածքներ՝ կբարելավեն քաղաքային երթևեկությունը, կնպաստեն առկա ճանապարհային ցանցի բեռնաթափմանը կապահովեն տրանսպորտի և զբոսաշրջային երթուղիների անխափան աշխատանքը:

7.2. Բնապահպանական և սոցիալական միջոցառումներ և Բնապահպանական Կառավարման Պլան

Բնապահպանական Կառավարման Պլանի (ԲԿՊ) նպատակն է կանխարգելել մեղմացնել և նվազագույնի հասցնել շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող անբարենպաստ ազդեցությունները, ինչպես նաև շահագործման և դրան հաջորդող սպասարկման ժամանակահատվածում ուղեցույց հանդիսանալ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծման համար:

ԲԿՊ-ն կծառայի որպես հիմք հետևյալի համար.

- Ծրագրի հնարավոր անբարենպաստ ազդեցությունների կառավարում, դրանց կանխարգելում կամ մեղմացում:
- Կապալառուի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում նախքան նախաշինարարական և շինարարության հետ կապված գործողությունների մեկնարկը՝ բնապահպանական օրենքներին, կանոնակարգերին և ստանդարտներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:
- Ծրագրի մոնիթորինգի իրականացում:

ԲԿՊ-ն ամփոփում է շրջակա միջավայրի վրա կանխատեսվող անբարենպաստ ազդեցությունները: Յուրաքանչյուր բացահայտված ազդեցության համար առաջարկվել է համապատասխան մեղմացնող միջոցառում: Բնապահպանական մոնիթորինգի գործողությունները, դրանց իրականացման համար պատասխանատու մարմինները և իրականացման գնահատված ծախսերը նույնպես ընդգրկված են:

- Կապալառուի կողմից՝ շինարարության պայմանագրի առանձնահատկությունների հիման վրա կթարմացվի ԲԿՊ-ը՝ հարմարեցվելով փոփոխվող պայմաններին:

- Համաձայն շինարարական աշխատանքների պայմանագրերի համար առաջարկվող բնապահպանական անվտանգության կետերի՝ Կապալառուն պետք է մոբիլիզացման ժամանակահատվածում նախաձեռնի հետևյալ հետազոտություններն ու գործողությունները.
 - ✓ ունենա բնապահպանության, սոցիալական առողջության և անվտանգության (ԲՍԱԱ), մասնագետ
 - ✓ կազմակերպի բնապահպանական, սոցիալական և անվտանգության ուսուցում և կողմնորոշում աշխատողների համար,
 - ✓ իրականացնի տարածքի նախնական վիճակի հետազոտություն,
 - ✓ նախաձեռնի միջոցառումներ՝ պահպանելու համար գոյություն ունեցող հիմնանորոգվող և բարեկարգվող հատվածներում առկա ծառերը և թփերը, ,
 - ✓ խմելու և ոռոգման ջրագծերի, կոյուղագծերի, էլեկտրականության լարերի և այլ հաղորդողիների պահպանություն և/կամ տեղափոխում, այն դեպքերում երբ դրանք չեն փոխարինվելու ծրագրի շրջանակում,
 - ✓ օդի որակի (փոշի), աղմուկի և թրթռման ելակետային տվյալների հավաքագրում, շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ:

Բացի վերոնշյալից, Կապալառուն բնապահպանական մոնիթորինգի իրականացման համար կապահովվի մուտք դեպի աշխատանքային տեղամաս և հարմարությունների/սարքավորումների հասանելիությունը.

Աշխատանքներն ավարտելիս կիրականացնի շինհրապարակի ողջ օգտագործված տարածքներն իրենց նախկին վիճակին վերականգնելու (ընդունելի ձևով) համար պահանջվող բոլոր անհրաժեշտ գործողությունները: ԲԿՊ-ով սահմանված դրույթները կիրականացվեն Կապալառուի կողմից և մոնիթորինգի կենթարկվեն Խորհրդատուի և Պատվիրատուի կողմից:

7.3. Շինարարության փուլ

Շինարարության փուլը, դա այն ժամանակահատվածն է երբ շրջակա միջավայրի վրա տեղի են ունենում հիմնական ազդեցությունները:

Քանդված նյութերի և շինարարական աղբի տեղադրման հնարավոր ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար քանդված նյութերի և շինարարական աղբի տեղադրումը հնարավորության դեպքում պետք է իրականացվի գոյություն ունեցող փոսորակներում, իսկ շինարարության համար նյութերի ձեռքբերումը հնարավորության դեպքում պետք է իրականացվի գոյություն ունեող հանքավայրերից նվազեցնելով նոր հանքավայրերի ձեռքբերման անհրաժեշտությունը:

Աշխատանքային տեղամասերը պետք է հստակ ուրվագծված լինեն և պետք է հետևել, որպեսզի շինարարական աշխատանքների ընթացքում այն անհարկի չընդլայնվի:

Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողները իրենց իսկ անվտանգության համար պետք կրեն անհատական պաշտպանիչ պարագաներ: Շինարարական հրապարակներից եկող փոշին և աղմուկը նույնպես պետք է նվազեցվեն հատկապես բնակեցված հարակից տարածքներում:

Առաջարկվող մեղմացնող միջոցառումների մանրամասները ներկայացված են ստորև.

7.3.1. Օդային ավազան

Շինարարական հրապարակներում և մոտեցնող ճանապարհներին փոշու առաջացումը կանխարգելելու նպատակով օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: Շինարարական աշխատանքների ընթացքում մեքենաների ծխագազային արտանետումների և փորման/քանդման աշխատանքների հետևանքով կմեծանա օդի աղտոտվածությունը:

Շինարարական աշխատանքների ընթացքում պարբերաբար ջրցանումը կնվազեցնի փոշու առաջացումը: Շինարարական հրապարակներից փոշու առաջացումը նվազեցնելու համար շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով) և թափոնների տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով:

Օդի որակի պահպանության նպատակով նախատեսվում է ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզլառելիքի աշխատանքի դեպքում:

7.3.2. Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու արտանետումներ: Դրանք առաջանում են փորման-բեռնման աշխատանքների արդյունքում՝ հիմնականում էքսկավատորների, ամբարձիչների և բուլդոզերների աշխատանքի ժամանակ:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար նախատեսվում է՝

- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս.
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
- արգելվում է արտադրության կամ սպառման կամ տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, դրանց շրջակայքում կամ դրանց այրման համար չնախատեսված այլ վայրերում, կաթսյա տներում կամ վառարաններում, թափոնների գործածության օբյեկտներում, հատուկ հատկացված տեղերում կամ չարտոնագրված աղբավայրերում,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,

- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացնել պարբերաբար ստուգումներ,
- պարբերաբար իրականացնել օդի աղտոտվածության գործիքային չափումներ,
- հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում իրականացնել արտահերթ օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

7.3.3. Աղմուկ և թրթռումներ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերով: Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Հարակից տների բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափումներ:

Մոտակա տների բնակիչների, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված մարդկանց վրա աղմուկի և թրթռման ազդեցությունները շինարարության ընթացքում բացառելու, մեղմելու և/կամ նվազագույնի հասցնելու համար որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի, այլ հասարակական շենքերի հարևանությամբ;
- Աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը

7.3.4. Զրոգտագործման և ջրային համակարգերի վրա ազդեցությունների

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- Շինհրապարակների փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման հոսքաջրերը հավաքվելու են հատուկ տարողության մեջ և վերօգտագործվեն շինարարական տարածքների ջրցանման համար,
- անձրևաջրերը հեռացվելու են տարածքից գոյություն ունեցող սելավատարներով,
- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և տարողությունում հավաքված/ կուտակված ջուրը,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանումը իրականացվելու մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կետերում:

7.3.5. Թափոնների կառավարում

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակը և հարակից տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,
- շինարարական հրապարակում առանձնացվելու է շինարարական և կենցաղային աղբի նախնական կուտակման վայրը,
- շինարարական թափոնները հնարավորինս կտեսակավորվեն/կառանձնացվեն մետաղները, փայտերը և այն ամենն ինչը հնարավոր կլինի վերօգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում և մնացած մասը կտեղափոխվի հատկացված վայր,
- շինարարության ընթացքում կենցաղային աղբը հավաքվելու է համայնքային աղբահավաք տարողությունների մեջ,
- բացառվելու է կենցաղային աղբի այրումը,
- շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումը դեպի հատկացված վայր կատարվելու է փակ ծածկ ունեցող բեռնատարներով,

- շինադրի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումն իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված վայր:
- բացառվելու է ադրի նախնական կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում՝ տարածքից հեռացնելով բոլոր տեսակի շինարարական նյութերի մնացորդները:

7.3.6. Բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունների

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները: Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ կառուցապատված տարածքում և նոր տարածքներ չեն ներառում:

Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ: Շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ: Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:

- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 240 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

Բուսական աշխարհ: Շինարարական աշխատանքների ընթացքում բուսատեսակների և կենդանատեսակները վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատանքները տեղի են ունենալու քաղաքային միջավայրում:

Կենդանական աշխարհ: Գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Դիլիջան քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

7.3.7. Մշակութային ժառանգություն վրա ազդեցությունների կառավարում

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները:

Ուստի հնարավոր անբարենպաստ ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում:

Միաժամանակ, եթե շինարարական աշխատանքների ընթացքում մշակութային կամ հնագիտական ժառանգության որևէ միավոր է բացահայտվել, պետք է դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել ԿԳՄՍՆ: Շինարարական աշխատանքները չեն կարող վերսկսվել մինչև պատահական գյուտը չհետազոտվի հնագետի կողմից և ԿԳՄՍՆ -ի կողմից չտրվի գրավոր թույլտվություն: Կապալառուն

պարտավոր է ծանոթ լինել ԿԳՄՍՆ –ի պատահական գյուտերի ընթացակարգին և պայմանագրով պետք է սահմանվի այդ ընթացակարգի խիստ հետևումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին՝ տվյալ դեպքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

Աշխատանքները կշարունակվեն ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից համապատասխան հրահանգավորումներ ստանալուց հետո:

7.3.8. Սոցիալական ազդեցությունների կառավարում

Փոշին, դիզելային վառելիքի այրման արգասիքները, աղմուկի մակարդակի ավելացումը, թռթռումները բացասաբար կարող է անդրադառնալ բնակչության վրա, իսկ երթևեկության հնարավոր ինտենսիվացումը ժամանակավոր անհարմարություններ կարող է ստեղծել գոյություն ունեցող ճանապարհով երթևեկության համար, սակայն այդ բոլոր ազդեցությունները կառավարելի են կարճաժամկետ և պայմանավորված միայն շինարարական աշխատանքների ընթացքով և համապատասխան միջոցառումների իրականացման պարագայում այդ ազդեցությունները կնվազեցվեն և կկանխարգելվեն:

Բնակչության անհանգստացումը մեղմելու համար պետք է համայնքներին պարբերաբար համապատասխան տեղեկատվություն տրվի ծրագրի վերաբերյալ (այդ թվում, շինարարական աշխատանքների գտնվելու վայրը և տևողությունը):

Բնակչությանը պետք է պատշաճ կերպով տեղեկացնել շինարարական աշխատանքների մեկնարկի մասին (տեղեկությունները առաջարկվող շինարարական աշխատանքների վերաբերյալ պետք է հասանելի լինեն, տեղական ինքնակառավարման մարմինների կայքում, ինչպես նաև համայնքային տեղեկագրերի, հեռուստատեսության և համայնքների ղեկավարների միջոցով):

Շինարարական աշխատանքների մեկնարկի, տրանսպորտային միջոցների շարժման սահմանափակման, այլընտրանքային մոտեցման և շրջանցման կազմակերպման մասին ծանուցումը պետք է տրամադրվի ազդակիր համայնքներին նախօրոք:

Ծրագիրը պետք է ունենա բողոքների լուծման հաստատված մեխանիզմ, որը թույլ կտա ազդակիր կողմերին բարձրացնել իրենց մտահոգությունները և ստանալ հետադարձ կապ: Բողոքարկման վերանայման քայլերի և փոխհատուցման

ընթացակարգի մասին, ինչպես նաև բողոքարկման բանաձևում ներգրավված կողմերի մասին տեղեկությունը պետք է դարձնել հասարակությանը մատչելի և բացահայտ ազդակիր համայնքներում:

Ծրագրի իրականացմամբ պայմանավորված դրական սոցիալ տնտեսական ազդեցությունները շատ ավելին են, քան անբարենպաստ ազդեցությունները, քանի որ բնակչության և զբաղվածության վրա ունեցած ազդեցությունը հիմնականում դրական է: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցումը կնպաստի տեղի աշխատուժի ներգրավմանը: Այն հնարավորություն կստեղծի երիտասարդների համար մնալ ծրագրի իրականացման տարածքում և ներգրավվել իրականացվելիք աշխատանքներում:

Տնտեսական զարգացումը կնպաստի ձեռք բերել ավելի շատ ներդրումներ հասարակական նշանակության, էներգետիկայի, կրթական, հանրային առողջության, մշակութային և ժամանցային հաստատություններում և այլն:

7.3.9. Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության

Շինարարական աշխատանքների ընթացքում ոչ մի լուրջ վտանգ չի սպավում քանի դեռ կիրավում են շինարարական աշխատանքների անվտանգության ընթացակարգերը: Շինարարական հրապարակները պետք է հստակ ուրվագծված և սահմանափակված լինեն: Շինարարական հրապարակներ, և աշխատանքային տեղամասեր մուտքը պետք է խստորեն հսկվի և սահմանափակվի լիազորված անձանց կողմից:

Անհատական պաշտպանիչ միջոցները պետք է հասանելի լինեն և կիրառվեն աշխատանքների իրականացման ժամանակ: Բոլոր աշխատողները, մինչ շինարարական աշխատանքներում ներգրավվելը պետք է անցնեն համապատասխան դասընթացներ և հրահանգավորվեն (ներառյալ առաջին բուժօգնության դասընթացներ):

Պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները: Ապահովվելու է աշխատողների անվտանգությունը բարձրության վրա աշխատելիս, աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղերով, աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ:

Շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ:

Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան:

7.3.10. Արտակարգ իրավիճակների արագ հակազդման պլան

Արտակարգ և վթարային իրավիճակները նվազեցնելու, ինչպես նաև բնական աղետների և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ արագ հակազդման միջոցառումների իրականացման համար նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների և արտակարգ իրավիճակների: Հրահանգավորումը պետք է իրականացնի շինարարական աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու առաջին օգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային

անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ չին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:

7.3.11. Շահագործման փուլ

Շահագործման ընթացքում՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով է պետք է լավագույնս իրականացվեն բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի և ենթակառուցվածքների սպասարկման ծառայությունները:

Նոր կառուցված բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը, ինչպես նաև հարակից ենթակառուցվածքների պատշաճ շահագործումն ու սպասարկումը թույլ կտա նվազեցնել անվտանգության ռիսկերը, որոնք պարբերաբար պետք է ստուգվեն և պահվեն համապատասխան աշխատանքային պայմաններում:

Պետք է ապահովվի արտակարգ իրավիճակներում արձագանքման պատրաստվածության կարգը, որպեսզի ժամանակին և համարժեք արձագանք տրվի այն քաղաքացիներին, որոնք կհայտնվեն արտակարգ իրավիճակներում:

Ըստ անհրաժեշտության պետք է իրականացվեն աղմուկի նվազեցման պատշաճ միջոցառումներ:

Պետք է իրականացվի ենթակառուցվածքների և այլ կոմունիկացիաների պատշաճ սպասարկում, ներառյալ պարբերաբար ստուգումներն ու ըստ անհրաժեշտության վերանորոգման աշխատանքների իրականացումը:

Աղյուսակ 7.1 Բնապահպանական և սոցիալական (միջոցառումների ծրագիր) կառավարման պլան

Հնարավոր բացասական ազդեցություններ	Բնապահպանական և սոցիալական մեղմացման կամ մոնիտորինգի միջոցառումներ	Իրականացնող կազմակերպություն	Վերահսկող կազմակերպություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱ ՓՈՒԼ			
Լանդշաֆտների դեգրադացիա և հողի էրոզիա	- Լանդշաֆտների դեգրադացիան և հողի էրոզիան նվազագույնին հասցնելու համար կապալառուն կօգտագործի, գոյություն ունեցող հանքավայրերը պահանջվող շինարարական նյութերի ձեռքբերման համար: Նախընտրելի է որ օգտագործվեն արդեն իսկ արդյունահանված նյութերը՝ խուսափելով նոր հանքավայրերի շահագործումից: - Նոր հանքավայրերի շահագործման դեպքում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան պետք է ձեռք բերվեն բոլոր անհրաժեշտ թույլտվություններն ու համաձայնությունները: - Մոտեցնող ճանապարհների ընտրությունը պետք կատարել այնպես, որպեսզի լանդշաֆտի վրա ազդեցությունը լինի նվազագույն կամ բացառվի	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու
Փորված նյութերի և շինարարական թափոնների առաջացումը և տեղափոխումը	- Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով: - Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով: - Շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: - Կազմակերպել թափոնների տեղափոխումը և տեղադրումը համապատասխան հաստատված	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու

	վայրում ըստ հաստատված երթևեկության կառավարման պլանի և ընթացակարգի: • Իրականացնել միջոցառումներ, վերահսկելու վտանգավոր նյութերի արտահոսքը, որոնք պետք է ընդգրկվեն շինարարական պայմանագրերում, այդ թվում՝ կանոններ վտանգավոր նյութերի պատշաճ պահպանման ու տեղադրման համար, ինչպիսիք են քսանյութերը, վառելիքը, ասֆալտը կամ դյուրավառ և քայքայիչ նյութեր: Մեքենաների վառելիքաքսայուղերը և քսուկները կհավաքվեն հատուկ նշված տարրաներում և հնարավորության դեպքում կվերաօգտագործվեն:		
Օդային ավազանի աղտոտում	• Ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով: • Շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ: • Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: • Հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ: • Արգելվում է արտադրության կամ սպառման կամ տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, դրանց շրջակայքում կամ դրանց այրման համար չնախատեսված այլ վայրերում, կաթսայատներում կամ վառարաններում, թափոնների գործածության	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու

	օբյեկտներում, հատուկ հատկացված տեղերում կամ չարտոնագրված աղբավայրերում, • Օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում: • Բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացնել պարբերաբար ստուգումներ: • Պարբերաբար իրականացնել օդի աղտոտվածության գործիքային չափումներ: • Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում իրականացնել արտահերթ օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ: • Օդի որակի պահպանության նպատակով նախատեսվում է իրականացնել նաև նյութերի պահեստավորումը հատուկ առանձնացված տարածքներում, • Շինարարական աշխատանքներում ներգրավված մեքենաների տեղաշարժը իրականացնել հաստատված երթուղիներով և ժամանակացույցով:		
Աղմուկի և թոթոման ազդեցություններ	• Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի, այլ հասարակական շենքերի հարևանությամբ: • Աղմուկ առաջացնող աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: • Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: • Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու

Ջրօգտագործման և ջրային համակարգերի վրա ազդեցություններ	• Շինհրապարակների փոշենստեցման համար ջրցանը իրականացնել ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, • Տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման ջրերը հավաքել հատուկ տարողության մեջ և վերօգտագործվել շինարարական տարածքների ջրցանման համար, • Անձրևաջրերը հեռացնել տարածքից գոյություն ունեցող սելավատարներով, • Ջրցանման համար օգտագործել միայն տեխնիկական որակի ջուր և տարողությունում հավաքված/կուտակված ջուրը, • Շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների ժամանակավոր կայանումը իրականացնել մակերևութային ջրային ռեսուրսներից հեռու, • Շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացնել համապատասխան մասնագիտացված կետերում:	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու
Թափոններ	• Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակը և հարակից տարածքը զերծ պահել թափոնների կուտակումներից, • Շինարարական հրապարակում առանձնացնել շինարարական և կենցաղային աղբի նախնական կուտակման վայրերը, • Շինարարական թափոնները հնարավորինս առանձնացնել (մետաղները, փայտերը և այն ամենը ինչը հնարավոր կլինի վերօգտագործել շինարարական աշխատանքների ընթացքում) և մնացած մասը տեղափոխել հատկացված վայր, • Շինարարության ընթացքում կենցաղային աղբը հավաքել համայնքային աղբահավաք տարողությունների մեջ,	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու

	• Բացառել կենցաղային աղբի այրումը, • Շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխումը դեպի հատկացված վայր իրականացնել փակ ծածկ ունեցող բեռնատարներով, • Շինաղբի և քանդված հանված հողային զանգվածների տեղափոխման համար տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալ համաձայնություն: • Բացառել աղբի նախնական կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, • Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի բարեկարգում՝ տարածքից հեռացնելով բոլոր տեսակի շինարարական նյութերի մնացորդները:		
Մշակութային ժառանգություն վրա ազդեցություններ	• Մշակել շինարարական աշխատանքների ընթացքում տարածքում առկա ֆիզիկական մշակութային ռեսուրսների պահպանության պլան, • Աշխատանքների կատարման ընթացքում պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին՝ տվյալ դեպքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը: • Աշխատանքները շարունակել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից համապատասխան հրահանգավորումներ ստանալուց հետո: • Շինարարական աշխատանքներում ներգրավված անձանց համար համապատասխան դասընթացների և հրահանգավորման կազմակերպում;	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու

	Համապատասխան ցուցանակների ու պաստառների տեղադրում,		
Սոցիալական ազդեցություններ	- Բնակչությանը համապատասխան տեղեկատվություն տրամադրում (այդ թվում, շինարարական աշխատանքների գտնվելու վայրը և տևողությունը) իրականացվող աշխատանքների վերաբերյալ: - Շինարարական աշխատանքների մեկնարկի, տրանսպորտային միջոցների շարժման սահմանափակման, այլընտրանքային մոտեցման և շրջանցման կազմակերպման մասին նախօրոք ծանուցել բնակչությանը: - Ունենալ բողոքների լուծման հաստատված մեխանիզմ, որը թույլ կտա բնակչությանը/համայնքին բարձրացնել իրենց մտահոգությունները և ստանալ հետադարձ կապ: - Բողոքարկման վերանայման քայլերի և փոխհատուցման ընթացակարգի մասին, ինչպես նաև բողոքարկման բանաձևում ներգրավված կողմերի մասին տեղեկությունը դարձնել հասարակության համար մատչելի:	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու
Շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների պահպանություն	- Ուրվագծել և սահմանափակել բոլոր շինարարական հրապարակները: - Շինարարական հրապարակներ, և աշխատանքային տեղամասեր մուտքը պետք է խստորեն հսկվի և սահմանափակվի լիազորված անձանց կողմից: - Անհատական պաշտպանիչ միջոցները պետք է հասանելի լինեն և կիրառվեն աշխատանքների իրականացման ժամանակ: - Բոլոր աշխատողները, մինչ շինարարական աշխատանքներում ներգրավվելը պետք է անցնեն համապատասխան դասընթացներ և հրահանգավորվեն (ներառյալ առաջին բուժօգնության դասընթացներ):	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու

	• Պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, • Պահպանել ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները: • Ապահովել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա աշխատելիս, • Աշխատողներին ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղերով, • Աշխատողների համար նախատեսել սանիտարական և հանգստի պայմաններ: • Շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ: • Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան		
Ազդեցություններ բուսական և կենդանական աշխարհի վրա	• Կազմակերպել և իրականացնել կենսաբազմազանության պահպանության վերաբերյալ համապատասխան դասընթացներ շինարարական աշխատանքներում ներգրավված անձանց համար;	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու

	• Շինարարական աշխատանքներում ներգրավված անձանց և հարակից տարածքների բնակիչների իրազեկվածության ապահովման համար անհրաժեշտության դեպքում շինարարական հրապարակում կտեղադրվեն տարածքին բնորոշ բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների նկարները պաստառներ • Կիրախուսվի շինարարական նյութերի ձեռք բերումը գոյություն ունեցող հանքավայրերից, նվազագույնի հասցնելով նոր հանքավայրերի շահագործման հետևանքով լանդշաֆտների և կենսաբազմազանության վրա բացասական ազդեցությունները: • Շինարարական աղբի տեղափոխումը համապատասխան աղբավայր իրականացնել միմիայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայրերում; • Շինարարական տեխնիկայի, ինչպես նաև մեքենաների տեղաշարժի համար սահմանել հատուկ երթուղիներ; • Շինարարական հրապարակը կօգտագործվի շինարարական տեղամասերի և ճամբարների, շինարարական նյութերի պահեստավորման և շինարարական աղբի նախնական կուտակման համար, որոնք ոչ մի ազդեցություն չեն ունենա բուսածածկույթի և շրջակա միջավայրի այլ բաղադրիչների վրա, • Շինարարական տեխնիկայի կայանումը նախատեսել գոյություն ունեցող շինարարական հրապարակում կամ դրա համար հատկացված առանձին տարածքներում • Շինարարական աշխատանքներում ներգրավված աղմուկ և/կամ թոթոռում առաջացնող տեխնիկան		
--	--	--	--

	պետք է կահավորված լինի համապատասխան խլացուցիչներով:		
Արտակարգ իրավիճակներ	• Մինչ շինարարական աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, պետք է անցնեն հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների և արտակարգ իրավիճակների: Հրահանգավորումը պետք է իրականացնի շինարարական աշխատանքների ղեկավարը: • Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները պետք է հագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում: • Շինարարական աշխատանքների ժամանակ՝ մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, • Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ, • Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Պատվիրատու

	• Հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հրապարակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: • Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: • Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին ցուցաբերել առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, տեղափոխել քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը: • Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:		
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ			
Կառուցվածքների և օբյեկտների ոչ պատշաճ վերահսկողություն և կառավարում	• Կոմունիկացիաների պատշաճ սպասարկումը կիրականացվի վերականգնված ենթակառուցվածքների շահագործման ընթացքում, այդ թվում, կանոնավոր ստուգումներ և վերանորոգում, անհրաժեշտության դեպքում: • Ճանապարհային նշանների, նշագծումների և անվտանգության տարրերի պարբերաբար ստուգումների իրականացում: • Ճանապարհին առկա աղբի ամենօրյա ռեժիմով հավաքում	Շահագործման և սպասարկման համար պատասխանատու գործակալություններ	Շահագործող կազմակերպություն

Ընդամենը բնապահպանական միջոցառումների գումարը կկազմի՝ 18 920 000 ՀՀ դրամ:

Աղյուսակ 7.2: Բնապահպանական մոնիտորինգի պլան

Դրժունություն	Ինչ (պարամետր է վերահսկվելու)	Որտեղ (է պարամետրը վերահսկվելու)	Ինչպես (է պարամետրը վերահսկվելու)	Երբ (սահմանել հաճախականությունը/կամ շարունակականությունը)	Ինչու (է պարամետրը վերահսկվելու)	Ով (է պատաս-խանատու պարամետրի
---------------	----------------------------------	-------------------------------------	--------------------------------------	---	----------------------------------	-------------------------------

						վերահսկման համար)
ՀԱՆՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
Շինարարական ութերի ստակարարում	Շինարարական նյութերի գնումը լիցենզավորված մատակարարներից	Մատակարարների գրասենյակներ և պահեստներ փոխառության վայրեր	Փաստաթղթերի ստուգում	Նյութերի մատակարարման վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման ընթացքում	Ապահովել շինարարության տեխնիկական որակը Պաշտպանել մարդկանց առողջությունը և միջավայրը	Պատվիրատու ՏՎԽ
Շինարարական ութերի և ափոնների տեղափոխում Շինարարական և մեքենաների տեխնիկական վիճակը Շինարարական և մեքենաների թափքի ծածկի ապահովումը՝ շինարարական թափոններ և նյութեր տեղափոխելիս և 20 կմ/ժ չգերազանցող արագությամբ: Շինարարական տրանսպորտային միջոցների և մեքենաների տեղափոխում սահմանված երթուղիներով և աշխատանքային ժամերին (9:00-18:00): Ջրցանման իրականացում՝ փոշի	Շինարարական տեխնիկայի և մեքենաների տեխնիկական վիճակը Բեռնատար մեքենաների թափքի ծածկի ապահովումը՝ շինարարական թափոններ և նյութեր տեղափոխելիս և 20 կմ/ժ չգերազանցող արագությամբ: Շինարարական տրանսպորտային միջոցների և մեքենաների տեղափոխում սահմանված երթուղիներով և աշխատանքային ժամերին (9:00-18:00): Ջրցանման իրականացում՝ փոշի	Շին հրապարակի մուտքեր և ելքեր	Նախապես համաձայնեցված տեղափոխության երթուղիների ակնադիտական զննում Վերակառուցվող ճանապարհի տեղամասի զննում	Չնախատեսված ամսական մոնիտորինգային ստուգայցեր	Շրջակա միջավայրում արտանետումների կառավարում Աղմուկի և թռթռումների կառավարումը գործող նորմերին համապատասխան Հետիոտնային անցումների անվտանգության, երթևեկության և արտակարգ պատահարների կառավարում	Պատվիրատու ՏՎԽ

	առաջացնող շինարարական աշխատանքների ընթացքում					
Շինարարության ամար շխատուժի դրագրավում	Անձնակազմին համազգեստի և անվտանգության սաղավարտների ապահովում Աշխատանքի անվտանգության հրահանգավորում և գրանցում Աղմուկ և թոթռում առաջացնող աշխատանքների իրականացում օրվա աշխատանքային ժամերին (9:00-18:00) և թույլատրելի նորմերի տիրույթում Երթևեկության կարգավորման և անվտանգության միջոցառումների իրականացում	Շին հրապարակ	Շին հրապարակի Տեսողական զննում և պարբերաբար գործիքային չափումներ	Շինարարության ամբողջ փուլում ամսական այցելությունների ընթացքում	Նվազեցնել պատահարների հավանականությունը Պաշտպանել աշխատողների առողջությունը և աշխատանքի անվտանգությունը Աղմուկի և թոթռումների կառավարումը գործող նորմերին համապատասխան բացառելու համար հնարավոր բոլորքները	Պատվիրատու ՏՎԽ
Շինարարական ափոնների առաջացում	Թափոնների ժամանակավոր կուտակում շին հրապարակի նախապես սահմանված վայրերում և պարբերաբար	Շին հրապարակ և թափոնների հեռացման վայր	Շին հրապարակի դիտազննում՝ ներառյալ վերակառուցվող ճանապարհի սկիզբը և վերջը	Պարբերաբար շինարարության ընթացքում առանց նախապես զգուշացման այցելություններ/ստուգումն եր	Շին հրապարակի և հարակից միջավայրի շին աղբի կուտակումների կանխարգելում	Պատվիրատու ՏՎԽ

	հեռացում թույլատրված աղբավայր					
Շինարարական սարքավորումների ահպանում	Մեքենաների և շինարարական տեխնիկայի մաքրում շինարարական կայանից դուրս կամ բնական հոսանքներից առավելագույն հեռավորության վրա շինարարական սարքավորումների լիցքավորումը կամ քսանյութը շինարարության վայրից դուրս կամ կանխորոշված սահմանափակված տարածքում	Շինհրապարակ	Գործողություններ ի վերահսկում	Աշխատանքային ժամերի ընթացքում ընտրողական այցեր	- Խուսափեք սարքավորումների շահագործման պատճառով նավթամթերքների ջրի և հողի աղտոտումից: - Հրդեհի դեպքում ժամանակին տեղայնացնել և նվազեցնել ակնկալվող վնասը	Պատվիրատու ՏՎԽ
Կենցաղային ղբի առաջացում	Աղբարկղերի ապահովում, թափոնների տեղադրումը տեղում: Թափոնների կանոնավոր տեղափոխության շուրջ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնություն	Շինարարական հրապարակ	Դիտագննում	Շինարարության ամբողջ ժամանակահատվածում	Խուսափել կենցաղային աղբի պատճառով հողի եւ ջրի աղտոտվածությունից,	Պատվիրատու ՏՎԽ
Հողային աշխատանքներ	ավելցուկային զանգվածը գրավոր	Շինհրապարակ	Գործողություններ ի գնում	Հողային աշխատանքների ընթացքում	Առաջացած ոչ պիտանի հողային զանգվածների	Պատվիրատու ՏՎԽ

	հաստատված վայրեր տեղափոխություն:				ոչ ճիշտ տեղադրում, պահեստավորում և տեղափոխում համապատասխան հատկացված վայրեր	
Պատահական թափոններ	Աշխատանքների դադարեցում՝ անմիջապես փոփոխության գտածոների բախումից հետո. Պաշտոնական հաղորդակցություն ՀՀ հուշարձանների և պատմական վայրերի պաշտպանության գործակալության հետ պատահական գտածոների հետ. Անհրաժեշտ պեղումների և տեղանքների պահպանման ուղղությամբ ձեռնարկված ժամանակին պայմանավորվածություն	Շինհրապարակ	– Պատահական գտածոների զննում. – Ներկայացված փաստաթղթերի ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	Համոզվել, որ մշակութային հուշարձանը չի վնասվել շինարարական աշխատանքների ընթացքում	Պատվիրատու ՏՎԽ Հուշարձանների և պատմական վայրերի պաշտպանության գործակալություն
Շինհրապարակների վերամշակումը բարեկարգումը	Շինարարական տարածքի ավարտական մաքրում և բարեկարգում	Շինհրապարակ	Տեսողական Ձննում և համեմատում հաստատված նախագծային	Շինարարության վերջնական փուլում	Բացառել ծրագրի իրականացման տարածքի գեղագիտական արժեքի կորուստը	Պատվիրատու ՏՎԽ

			փաստաթղթերի հետ		շինարարական գործունեության արդյունքում	
Ա. Կենցաղային սփռման ստանդարտի ստանդարտում	Աղբամանների տեղադրում և աղբի պարբերաբար հեռացում նախատեսված աղբավայր	Բազմաֆունկցիոն ալ բնակելի համալիր	Տեսողական զննում	Շահագործման փուլ	Աղբի կուտակումների և կեղտաջրերի կառավարում	Պատվիրատու ՏՎԽ
Բ. Գործունեություն մասնավոր սեփականության այլ գույքի ռազմին	Խուսափել մասնավոր գույքի սահմանների խախտումներից կամ պատահականորեն վնասելու դեպքերից (պատերի և ցանկապատերի հարևանությամբ կիրառել փոքր չափերի մեքենաներ կամ ձեռքով աշխատանք, շինարարական նյութերի պահեստավորումը և թափոնների հավաքումը կազմակերպել մասնավոր սեփականությունից հեռու և այլն): Մասնավոր սեփականությանը ոչ դիտավորյալ վնասի հասցման դեպքում արագ վերականգնել	Մասնավոր սեփականության հարևանությամբ իրականացվող աշխատանքներ	Զննում և ուղղորդում ն	Շինարարության ամբողջ ընթացքում	Նվազեցնել մասնավոր սեփականությանը վնասի հասցման հավանականությունը: Բացառել մասնավոր սեփականության վրա սեփականատիրոջ կամ օգտագործողի իրավունքների ժամանակավոր կամ մշտական խախտումը:	Պատվիրատու ՏՎԽ

	նախնական վիճակը կամ ավելի լավ կարգավիճակը: Մասնավոր սեփականության վրա ակնկալվող ժամանա-կավոր ազդեցության դեպքում սեփականատերերին նախապես տեղեկացնել և երաշխավորել գույքի վերականգնումը, ձեռքբերել սեփականատերերի գրավոր համաձայնությունը միջամտության համար և անհապաղ վերականգնել վնասը: Եթե աշխատանքների ընթացքում մասնավոր հողի օգտագործման կարիք է առաջանում, մի մտեք ազդակիր տարածք մինչև տարաբնակեցման ծրագրի ամբողջական մշակումն ու իրականացումը:					
Ը. Ծառերի ահպանություն	Պահպանել ենթածրագրի տարածքում գոյություն	Շին հրապարակ	Գործողություններ ի ստուգում	Շինարարության վերջնական փուլ	- նվազեցնել մոլախոտային տեսակների օգտագործումը	Պատվիրատու SՎԽ

	ունեցող կենսունակ ծառերը Կենսունակ ծառերը կնշվեն, կցանկապատվեն՝ պահպանելով դրանց արմատային համակարգը, և որևէ վնաս ծառերին չի հասցվի				- Նվազեցնել կլիմայական փոփոխությունները և աղետների ռիսկերը - Կանխել ծառերին վնասի պատճառումը շինությունների հիմքերով և ենթակառուցվածքներ ով	
Փոշու ուտակում	Օդի աղտոտման մակարդակը շինհրապարակում	Շինհրապարակ և մուտքի ճանապարհներ	Տեսողական զննում և պարբերաբար գործիքային չափումներ	Կրկնվող	Նվազեցնել ռիսկերը աշխատակազմի և հարևան համայնքների համար	Պատվիրատու ՏՎԽ
Բողոքների լուծման ախտահարման որժաժամ	Ենթածրագրի վերաբերյալ բողոքների կամ հարցերի վերաբերյալ հանրային իրավունք: Դիմում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարին (համայնքային իշխանություններին): Բողոքների համակարգողի նշանակում (բողոքների ստացում, վերանայում և բացատրություն, բողոքների գրանցում մատյանում և փորձ	Շին հրապարակ	Փորձաքննություն	Շինարարության ամբողջ ընթացքում	Բողոքի քննարկում և լուծում 2 շաբաթվա ընթացքում: Խնդրի լուծման ձախողման դեպքում նախարարության կամ իրականացնող կազմակերպության մակարդակում, ՇԱԵԱ-ն կարող է դիմել դատարանին որոշման կայացման համար՝ ՀՀ օրենսդրության համաձայն	Պատվիրատու ՏՎԽ

	լուծել դրանք ոտքի վրա):					
երթերություն և հետադարձության անվտանգություն	Նախագծողացնող նշանների , պատնեշների տեղադրում Երթերության կառավարում հատուկ նախապատրաստում անցած անձնակազմի կողմից: Հետիոտնի համար անվտանգ անցումների տրամադրում, որտեղ շինարարական խցանում է առաջանում Աշխատանքային ժամերի հարմարեցում տեղական երթերություն-թյանը ծանրաբերնված ժամերին: Անվտանգ և շարունակական մոտեցում մոտակայքում գտնվող գրասենյակային տարածքներին, խանութներին և բնակիչների համար շինարարական աշխատանքների ընթացքում	Շին հրապարակ	Գործողություններ ի ստուգում	Աշխատանքների իրականացման ընթացքում	- Նվազեցնել շինարարական գործողությունների կողմից երթերությանը և հետիոտններին հասցվող ուղիղ կամ անուղղակի վնասները - Նվազեցնել երթերության անհարմարությունները	Պատվիրատու ՏՎԽ

լուսավորության սմակարգի հազործում և պասարկում	Իրականացվում է լուսավորության համակարգի կանոնավոր սպասարկում	լուսավորության ցանց	Ջննում	Գործառնության ամբողջ ընթացքում	Լուսավորության համակարգի անվտանգ և շահագործվող վիճակում պահպանում	Շահագործող ընկերություն
շահագործում և ահպանում	Թափոնների հավաքում և ժամանակին հեռացում դեպի նշանակված աղբավայր	Երթուղային և հետիոտնային հատվածներ	Ջննում	Շահագործման ամբողջ ընթացքում՝	Ապահովել թափոնների պատշաճ հավաքումն ու հեռացումը	Շահագործող ընկերություն
Դրենաժային սմակարգի ահպանում	ջրահեռացման համակարգը գործունակ պահել	Երթևեկելի հատված	Պարբերական ստուգում	Շահագործման ամբողջ ընթացքում՝	Ապահովել համալիրի անխափան աշխատանքը և նվազեցնել վերականգնման հաճախականությունն ու ծախսերը	Շահագործող ընկերություն

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»:
- Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am
- www.yerevan.am
- www.mnp.am
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022-2027թթ. զարգացման ծրագիր
- СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
- СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
- СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
- Marzes of the Republic of Armenia, 2021, <https://www.armstat.am/en/?nid=82&id=2435>
- Методика расчета выбросов загрязняющих веществ в атмосферу от предприятий по производству строительных материалов, 18,04,2008, N100-п

-
- Методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, Новороссийск, 2000
 - Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, 1985
 - “Методического пособия по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов”, Новороссийск, 2001
 - «Методическим пособием по расчету, нормированию и контролю выбросов загрязняющих веществ в атмосферный воздух», СПб., 2005.
 - Методическое пособие по расчету, нормированию и контролю выбросов загрязняющих веществ в атмосферный воздух, СПб., НИИ Атмосфера, 2005.
 - Методика проведения инвентаризации выбросов загрязняющих веществ в атмосферу для баз дорожной техники (расчетным методом). М, 1998.
 - Дополнения к методике проведения инвентаризации выбросов загрязняющих веществ в атмосферу для баз дорожной техники (расчетным методом). М, 1999.
 - «Методикой расчета выделений (выбросов) загрязняющих веществ в атмосферу при нанесении лакокрасочных материалов (на основе удельных показателей). СПб, 2015».

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 18 փետրվարի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԹԱՂԱՄԱՍ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Տավուշ, համայնք Դիլիջան Դիլիջան ք. Ս. Շահումյան փողոց 17/8 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

